

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (19)

ԵՐԵՎԱՆ - 2016

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ»

«BANBER YEREVANI HAMALSARANI.
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ազյան Վ. Ռ., Ալեքսանյան Ա. Ս. (*պատասխ. խմբագիր*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Բայբուրդյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Ենգոյան Ա. Փ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Պետրոսյան Գ. Հ., Սաֆարյան Ա. Վ., Միմոնյան Ա. Հ., Վարդազարյան Մ. Ե., Վարդանյան Լ. Գ., Քեռյան Գ. Ս.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Аглыан В. Р.**, **Алексян А. С.** (*ответ. редактор*), **Байбурдян В. А.**, **Варданыан Л. Г.**, **Вардазарян М. Е.**, **Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Енгоян А. П.**, **Керян Г. М.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Петросян Г. А.**, **Сафарян А. В.**, **Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Aglyan V. R., **Aleksanyan A. S.** (*Managing Editor*), **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Bayburdyan V. A.**, **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Keryan G. M.**, **Petrosyan G. H.**, **Safaryan A. V.**, **Simonyan A. H.**, **Vardanyan L. G.**, **Vardazaryan M. E.**, **Yengoyan A. P.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1920 թ. ՄԱՅԻՄԻ 7-Ի ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ
ԲԱԹՈՒՄԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ

ՇԻՐԱԿ ԹՈՐՈՍՅԱՆ

1919-1920 թթ. միջազգային դիվանագիտական հարթակներում Հայաստանի ծովային ելքի ամենահավանական տարբերակներից մեկը դիտվում էր Բաթումը: 1920թ. այս խնդրի շուրջ ծավալված դրամատիկ իրադարձությունները խորությամբ չեն ուսումնասիրվել մեր պատմագրության մեջ: Հայաստանի Բաթումով ծովային ելքը ձախողվեց, որը նախ և առաջ պայմանավորված էր մեծ տերությունների միջև հակասություններով և մենշևիկյան Վրաստանի կոշտ դիրքորոշմամբ: Սան Ռեմոյի խորհրդաժողովից (1920 թ. ապրիլ) հետո Բաթումի շուրջ ծավալվող իրադարձությունների հաջորդ հանգրվանը 1920 թ. մայիսի 7-ին կնքված՝ 16 հոդվածից բաղկացած ռուս-վրացական դաշնագիրն էր, որը ստորագրեցին Խորհրդային Ռուսաստանի արտգործժողովուհի տեղակալ Լ. Կարախանը և Վրաստանի սահմանադիր ժողովի անդամ Գ. Ուրուսաձեն¹: Մինչ այդ Ադրբեջանն արդեն խորհրդայնացել էր (ապրիլի 28-ին): Ադրբեջանի խորհրդայնացմամբ և ռուս-վրացական դաշնագրի կնքմամբ բոլորովին նոր իրողություններ առաջացան Անդրկովկասում: Նախ ի չիք էր դառնում հյուսիսից սպառնացող վտանգի դեմ համագործակցելու նպատակով 1919 թ. կնքված վրաց-ադրբեջանական դաշնագիրը, և երկրորդ՝ Վրաստանը լրջորեն փոխում էր իր արտաքին քաղաքական կողմնորոշումը՝ մասամբ հակվելով դեպի Խորհրդային Ռուսաստանը: Որո՞նք էին դրա պատճառները: Նախ՝ որ Դենիկինը պարտվել էր, և բոլշևիկները արդեն մտել էին Անդրկովկաս, գրավել Ադրբեջանը և դարձել էին Վրաստանի անմիջական հարևանը: Եվ երկրորդ, որն ի դեպ ամենակարևորն է, տարածքային հարցերում Խորհրդային Ռուսաստանն ավելի «առատաձեռն» էր, քան Անտանտի երկրները: Անտանտի երկրները Սան Ռեմոյում առաջարկում էին Լազիկան միացնել Հայաստանին, Բաթումը հռչակել *porto-franko* և ազատ քաղաք ու Հայաստանին իրավունք տալ սեփական երկաթգիծ ունենալ դեպի Բաթում: Սրա փոխարեն ռուս-վրացական դաշնագրի չորրորդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր Բաթումի մարզը իր բոլոր գավառներով ու շրջաններով Վրաստանի

¹ Տե՛ս Գասանլի Ժ. Իստորիա Դիպլոմատիա Ազերբայձձանսկոյ Դեսպուբլիկա. Յ Երեք Եոմաք. Ե. Ի. Մ., 2013, էջ 53:

մաս ճանաչել: Այստեղ, թերևս, պարզ է դառնում Սան Ռեմոյում վրացական պատվիրակության ղեկավար Նիկոլայ Չխեիձեի անզիջում կեցվածքի պատճառը: Հասկանալի է դառնում, որ Սան Ռեմոյի ձախողման շարժառիթները գալիս էին Մոսկվայից: Վրացական պատվիրակության անդամ Ջ. Ավալովը, ով երբեմն աչքի էր ընկնում իր օբյեկտիվ և անաչառ գնահատականներով ու կեցվածքով (այդ թվում նաև Բաթումի հարցում հանդես էր գալիս վրաց պատվիրակության կոշտ դիրքորոշման դեմ), գրում է, որ թվում էր, թե Չխեիձեի համառությունը Սան Ռեմոյում պայմանավորված էր Թիֆլիսից մի գաղտնի հրահանգ ունենալով: Պարզ էր, որ Վրաստանը վերանայել էր անվերապահ եվրոպական կողմնորոշումը՝ մասամբ հակվելով դեպի Խորհրդային Ռուսաստանը, անուղղակիորեն նաև՝ քեմալական Թուրքիան: Ասվածը փաստելու համար դարձյալ դիմենք Ավալովին: Վերջինս, ծանոթանալով վերոնշյալ, ինչպես նաև 1920 թ. հունիսի 12-ին³ Վրաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև կնքված դաշնագրերին, նշում է. «Մարդ չէր կարող չապշել, թե վրաց կառավարությունը որպիսի թեթևութեամբ էւ արագութեամբ ճանաչել էր Բագուում տեղի ունեցած պետական յեղաշրջումը եւ հետեւաբար, հրաժարուել էր 1919-ի վրաց-ատրբեջանեան դաշնագրից (զինակցութիւն՝ սահմանները պաշտպանելու մասին) եւ թէ նա ինչպես հապշտապ հրաւիրել էր Խորհրդային իշխանութիւնը՝ իբրեւ դատաւոր իր եւ Խորհ. Ատրբեջանի սահմանային տարաձայնութեանց հարցում»⁴: Դեռ ավելին, ռուս-վրացական դաշնագրի ամենահատկանշական կողմերից մեկն էլ այն էր, որ Վրաստանը պարտավորվում էր «ձեռք առնել միջոցներ իր երկրից, այդ թվում նաև այս դաշնագրի չորրորդ հոդվածով նախատեսված տարածքներից (այսինքն՝ Բաթումի մարզից-Շ. Թ.) հեռացնել այն բոլոր գորքերը, որոնք չեն պատկանում Վրաստանի ազգային բանակին» (հոդված V, կետ 5-րդ)⁵: Դա նշանակում էր, որ Վրաստանը ուղղակի պարտավորություն էր ստանձնում վերջ տալ անգլիական տիրապետությանը Բաթումում ու մարզում և բացորոշ ճանաչում էր Ռուսաստանի քաղաքական գերակշռությունն ու ազդեցությունը տարածաշրջանում՝ գործնականում գոնե առժամանակ հրաժարվելով արևմտյան կողմնորոշումից:

Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, կարողացավ ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել, այսինքն՝ Բաթումի մարզը ճանաչելով Վրաստանի անբաժանելի մաս՝ պարտավորություն դրեց վերջինիս

² Տե՛ս **Авалов З.** Независимость Грузии в международной политике 1918-1921 гг. Воспоминания. Очерки. Париж, 1924, էջ 286:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 168:

⁴ **Արտ. Աբեղյան**, Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք», Բոստոն, հոկտեմբեր, 1926, թիվ 12 (48), էջ 97-98:

⁵ Դաշնագրի ամբողջական տեքստը տե՛ս «Оккупация и фактическая аннексия Грузии. О политической и правовой оценке нарушения договора между Грузией и Советской Россией от 7 мая 1920 года. Документы и материалы». Тбилиси, 1990, էջ 75-83:

վրա՝ արագացնել անգլիական զորքերի դուրսբերումը Բաթումից: Դրանով ռուսները կարողացան խուսափել անգլիացիների հետ ուղղակի շփման տհաճությունից: Ի դեպ, նշենք, որ պայմանագիրն ստորագրելուց անմիջապես հետո բոլշևիկները պահանջում էին վրացական իշխանություններից՝ շտապ հեռացնել օտար զորքերը դաշնագրով Վրաստանին անցնող տարածքներից: Արտգործնախարար Գեգեչկորին ստիպված էր պատասխանել, որ Վրաստանի իշխանությունը Բաթումի և շրջանի վրա տարածելուց հետո միայն կարող են կատարել պայմանագրի բոլոր կետերը⁶: Բաթումը Վրաստանին հանձնելու մասին ռուս-վրացական համաձայնագիրը վրաց կոմունիստներին առիթ տվեց հայտարարելու. «Բաթում քաղաքն ու նրա շրջանն անցնում են Վրաստանի ձեռքը ոչ թե Անգլիայի Բարի ցանկութեամբ, այլ յաղթանակող սոցիալիստական Ռուսաստանի կամքով՝ սրա և Վրաստանի միջև կնքված դաշնադրութեան համաձայն»⁷:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Վրաստանում և Հայաստանում բացահայտ խոսում էին հայ-վրացական ռազմական դաշինքի անհրաժեշտության մասին: Իրադարձությունների հետագա ընթացքը, սակայն, ցույց տվեց, որ վրացիները, հավանաբար, դա անում էին, որպեսզի ստիպեն բոլշևիկներին՝ արագացնելու ռուս-վրացական պայմանագրի կնքումը: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Անդրկովկասում թույլ օղակը մնում էր Հայաստանը, որին վերաբերող դեռ չպարզաբանված հարցեր կային բոլշևիկների և նրանց դաշնակից քեմալականների միջև: Ռուսաստանին անհրաժեշտ էր առժամանակ կարգավորել հարաբերությունները Վրաստանի հետ՝ Անդրկովկասում հակառուսական որևէ միավորում թույլ չտալու համար, ինչը և արվեց մայիսի 7-ի դաշնագրով: Անդրկովկասյան համադաշնությունն ստեղծելու մեծ «ջատագով» մենշևիկյան Վրաստանը խնդրո առարկա դաշնագրով փաստորեն բացառեց անդրկովկասյան հանրապետությունների միջև սերտ համագործակցության հետագա որևէ հնարավորություն այնպես, ինչպես 1918 թ. մայիսին, մերձենալով Գերմանիայի հետ, փլուզեց Անդրկովկասյան Դաշնությունը:

Ռուս-վրացական պայմանագիրը չկարողացավ և չէր էլ կարող լինել Վրաստանի անվտանգության երաշխիք: Ակնհայտ էր, որ այն ժամանակավոր բնույթ էր կրում: Հենց վրաց պատմաբանների կարծիքով, թեև Խորհրդային Ռուսաստանն այդ պայմանագրով «դե յուրե» ճանաչեց Վրաստանը, բայց դա ձևական էր⁸, որովհետև բոլշևիկները դրանով սուսկ ամրապնդում էին իրենց դիրքերն Անդրկովկասում: Վրաստանի

⁶ Տե՛ս «Նոր աշխատանք», Թիֆլիս, 27 հուլիսի, 1920, թիվ 89 (161):

⁷ Նույն տեղում, 7 հուլիսի, 1920, թիվ 74 (146):

⁸ Տե՛ս Գլոբեյնի Գ. և Վ. Գլոբեյնի Գ. Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները 1918-1921 թթ. և վրաց հասարակական կարծիքը, Թբիլիսի, 1999, էջ 69):

վարիչներն անշուշտ գիտակցում էին հյուսիսից եկող սպառնալիքը, որն ավելի ակներև դարձավ 1920 թ. ամռանը քեմալաբոլշևիկյան մերձեցմամբ: Օգոստոսին Մոսկվայում ընթացող բանակցություններում Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը «Ազգային ուխտի» գծած սահմաններում, որի մեջ մտնում էր նաև Բաթումի մարզը: Ինչպես տեսնում ենք, սա հակասում էր ռուս-վրացական պայմանագրի տրամաբանությանը և բացահայտում էր բոլշևիկների երկակի խաղը: Ուստի վրաց կառավարությունը, բարիդրացիություն խաղալով ռուսների հետ, այդուհանդերձ շարունակեց Անտանտի աջակցությամբ անվտանգության երաշխիքներ ձեռք բերելու քաղաքականությունը, թեպետ Սան Ռեմոյի խորհրդածոդովում Բաթումի հարցով վրաց պատվիրակության դրսևորած անզիջում վարքագիծը, ինչպես նաև մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագիրը հիասթափեցրել էին անգլիացիներին: Մյուս կողմից՝ վրացիները վերստին առաջ քաշեցին հայ-վրացական դաշինքի հարցը՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի, քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի դեմ: Ըստ այդմ՝ 1920 թ. օգոստոսի 3-ին ոչ պաշտոնական առաքելությամբ Հայաստան է ժամանում Լոնդոնում Վրաստանի ներկայացուցիչ Պ. Գամբաշիձեն: Նա կարծիք է հայտնում, որ նկատվում է սլավոն և տաճիկ ազգերի մերձեցում, որից տուժելու են Հայաստանն ու Վրաստանը, ուստի այդ վտանգը կանխելու համար գտնում է, որ երկու երկրները պետք է ռազմական դաշինք կնքեն, որը գլխավորապես պետք է ուղղված լինի Ադրբեջանի դեմ⁹: Վրաց ներկայացուցիչը, բնականաբար, պետք է մեղմեր Բաթումի հարցում վրացական կողմի կոշտ դիրքորոշումը, հետևաբար, Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանի հետ տեսակցության ժամանակ նա հայտնում է, որ «Վրաստանի ներկայացուցիչները Սան-Ռեմոյում շատ մեծ սխալ են գործել՝ բռնելով Բաթումի հարցում չը զիջանող քաղաքականություն, որպեսին վատ տպավորություն է թողել թե Լորդ Կըրզընի եւ թե կոնֆերանսի վրայ եւ այն կարծիքն է կազմել, թե վրացիք չեն ցանկանում հայերին ելք տալ դեպի ծով»¹⁰: Այժմ, սակայն, Գամբաշիձեն կարծում է, որ Բաթումը պետք է լինի ազատ նավահանգիստ, և աշխատում է այդ ուղղությամբ համոզել իր ընկերներին: Ինչ վերաբերում է ապագա Կարս-Բաթում երկաթուղուն, այդ կապակցությամբ կրկնում է վրաց կառավարության ներկայացուցիչներին՝ 1920 թ. մայիսին Խատիսյանին արած այն առաջարկը, թե վրացիները համաձայն են թույլ տալ անցկացնել այդ գիծը վրացական հողով՝ մշտական կապալի իրավունքով¹¹:

Երկաթգիծ կառուցելու համար երկարաժամկետ վարձակալական հիմունքներով հողամաս տրամադրելու համաձայնությունը արդեն

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 10, II երես:

¹⁰ Նույն տեղում, թ. 10:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

իսկ բավականաչափ առաջընթաց էր վրացական կողմի դիրքորոշման մեջ: Սակայն, ցավոք, հետագայում վրաց կառավարությունը հրաժարվեց նաև դրանից՝ շարունակելով մնալ իր նախկին կոշտ տեսակետին:

Ռուս-վրացական դաշնագրի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այն իր ողջ էությունը հակահայկական էր, քանի որ բացի Բաթումի մարզից, որի վրացական ճանաչելն արդեն իսկ բացառում էր այնտեղով Հայաստանի՝ սեփական ծովային ելքի հնարավորությունը, այդ նույն չորրորդ հոդվածով Վրաստանի անբաժանելի մաս էր ճանաչվում նաև Թիֆլիսի նահանգը¹², որի մեջ ժամանակին ցարական կառավարության կամայական որոշմամբ մտնում էին նաև Ախալքալաքի և Լոռու գավառները: Ստացվում է այնպես, որ Խորհրդային Ռուսաստանը հովանավորում էր Վրաստանին և Ադրբեջանին Հայաստանի հետ վերջիններիս ունեցած տարածքային վեճերի հարցում՝ անարդարացիորեն կանխորոշելով Ղարաբաղի, Ջանգեզուրի, Նախիջևանի, Ջավախքի և Լոռու պատկանելության, ինչպես նաև Հայաստանի ծովային ելքի հարցերը: Հետևաբար, մայիսի 7-ի պայմանագիրն էլ ավելի սրեց հայ-վրացական տարածքային վեճերը և խիստ դժգոհություն առաջացրեց Հայաստանում: Մեկնաբանելով այդ դաշնագիրը՝ «Յառաջի» իմբագրականում ասված է. «Այսպիսով, մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշինքից անառարկելիորեն պարզվում է, որ Վրաստանը այսուհետև մասնաւորապէս իր արտաքին քաղաքականութեան մէջ մինչև այն ժամանակ է ազատ ու ինքնիշխան, քանի այդ քաղաքականութիւնը և ոչ մի կէտում չի հակասում ռուսական արտաքին քաղաքականութեանը...»¹³:

1920 թ. հունիսի 11-ին ՀՀ վարչապետ և արտգործնախարար Հ. Օհանջանյանը բողոքի նոտա է հղում Վրաստանի կառավարությանը ռուս-վրացական պայմանագրի այն հոդվածների դեմ, որոնցով հայ-վրացական վիճելի համարվող տարածքները Ռուսաստանի կողմից ճանաչվում էին Վրաստանի անբաժանելի մասեր¹⁴: Այս բողոքը որևէ նշանակություն չունեցավ և չէր էլ կարող ունենալ, բացի հարաբերությունների վատթարացումից: Միաժամանակ, նույն հունիսի 11-ին Հայաստանի կառավարությունը գրեթե նույնաբովանդակ նոտա է հղում նաև Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որտեղ, Ջավախքի և Լոռու խնդիրներից զատ, նշվում է, որ Բաթումի մարզում Հայաստանը հավակնում է ճորոխի շրջանին, հետևաբար Հայաստանի կառավարությունը տեղեկացնում է Ռուսաստանի կառավարությանը, որ վերոնշյալ պայմանագրի՝ Թիֆլիսի նահանգին և Բաթումի մարզին վերաբերող մասերը Հայաստանը չի ճանաչում¹⁵: Այդ նոտայում, որը հաս-

¹² Տե՛ս **Гасанлы Дж.**, նշվ. աշխ., էջ 53:

¹³ «Յառաջ», 16 հունիսի, 1920, թիվ 124:

¹⁴ Տե՛ս **Կ. Մարդարյան**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., 2002, էջ 129, նաև՝ «Յառաջ», Եր., 16 հունիսի, 1920, թիվ 124:

¹⁵ Տե՛ս **ՀԱԱ**, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 177:

ցեազրված էր Մոսկվայում ՀՀ պատվիրակության ղեկավար Լևոն Շանթին և Խորհրդային Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինին, բողոքը հիմնավորվում էր այն բանով, որ 1919 թ. նոյեմբերի 14-ին, Հայաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի համաձայն, երկու հանրապետությունները պարտավորվել են բոլոր առկա, ինչպես նաև հնարավոր ծագելիք վեճերը լուծել համաձայնությամբ, իսկ եթե դա հնարավոր չի լինում, ապա արբիտրաժի միջոցով¹⁶: Ըստ ՀՀ կառավարության տեսակետի՝ այստեղից հետևում է, որ Խորհրդային Ռուսաստանը չի կարող վիճելի համարվող տարածքները ճանաչել Վրաստանի անբաժանելի մաս:

Այն, որ Հայաստանի առաջին Հանրապետության կործանման գլխավոր պատճառներից մեկը նրա ղեկավարների ոչ ճկուն արտաքին քաղաքականությունն էր, փաստ է: Բայց վրաց մենշևիկ վարիչները ևս գրեթե ոչնչով ետ չէին մնում իրենց հայ գործընկերներից: Թեպետ նրանց մեջ կային մի շարք գործիչներ, ովքեր թրծվել և քաղաքական լուրջ փորձառություն էին ձեռք բերել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կուսակցության հասարակական-քաղաքական գործունեության շրջանակներում (Ժորդանիա, Գեգեչկորի, Չիենկելի, Չիեիձե, Ռամիշվիլի, Ծերեթելի և այլք), սակայն դա բավարար չէր արտաքին քաղաքականության կոպիտ վրիպումներից խուսափելու համար: Վրաց ղեկավարները ևս աչքի ընկան իրենց կարճատեսությամբ և արտաքին քաղաքականության իրացման իրավիճակային լուծումներով, որի շնորհիվ նրանց «հաջողվեց» Հայաստանից ընդամենը 85 օրով ավել երկարաձգել Վրաստանի անկախությունը: Ռուս-վրացական պայմանագիրը վրացիների անհեռատես արտաքին քաղաքականության դրվագներից մեկն էր, որը նպաստեց ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի անկմանը:

Սան Ռեմոյի խորհրդածոժողովում լորդ Քերզոնի որդեգրած անդրկովկասյան քաղաքականության ձախողումը վերջնականապես տեսանելի դարձրեց Բաթումի անգլիական ռազմակալումը դադարեցնելու հեռանկարը: Բաթումից բրիտանական զորամասի հեռանալը դարձավ մոտ ապագայի խնդիր: Սակայն խորհրդածոժողովից հետո դեպքերը զարգացան սրընթաց արագությամբ: Ադրբեջանի խորհրդայնացումը և ռուս-վրացական պայմանագիրը ստիպեցին անգլիացիներին մտածել Բաթումը օր առաջ լքելու մասին: Բայց նրանց առջև ծառայավ պատվով հեռանալու խնդիրը: Անգլիացիների համար շատ ցավալի և անպատվաբեր կլիներ այն, որ իրենք հեռանում են որևէ ուժի ճնշման տակ (տվյալ դեպքում՝ բոլշևիկների): Այս հարցում նրանց անուղղակիորեն օգնեցին վրացիները, որոնք անհամբերությամբ սպասում էին այն օրվան, թե երբ կտիրանան Բաթումին, և անընդհատ շտապեցնում էին անգլիացիներին՝ արագացնել Բաթումը իրենց հանձնելու գործը:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 165:

Բրիտանացիներն էլ օգտագործեցին այդ հիանալի հնարավորությունը և «պատերազմի իրավունքով գրաված Բաթումի մարզը հանձնեցին օրինական տիրոջը»: Չնայած դրան՝ վրաց մենջևիկ գործիչներն այս հարցում երկդիմի քաղաքականություն էին վարում՝ միջազգային սոցիալիստական ֆորումներում գոհունակություն հայտնելով բրիտանացիներին՝ Բաթումը գրավելու կապակցությամբ: Օրինակ 1919 թ. օգոստոսին Լյուցերնում հրավիրված երկրորդ ինտերնացիոնալի երկրորդ խորհրդաժողովում էլույթ ունենալով՝ Ա. Չխենկելին ասել է, որ 1919 թ. հունվարին անգլիական զորքերի մուտքը Վրաստան մեծ գոհունակությամբ է ընդունվել բնակչության բոլոր խավերի կողմից¹⁷:

Բրիտանական զորքերի՝ Բաթումից դուրսբերումը Անգլիայում դիտվեց որպես Անդրկովկասում ակտիվ քաղաքականության կողմնակիցների (Քերզոնի և նրա համախոհների) պարտություն և Լլոյդ Ջորջի կողմնակիցների հաղթանակ: Անգլիական զինուժի՝ Բաթումից շուտափույթ դուրսբերման մասին խոսակցությունները Ֆրանսիայի համար այստեղ զորք մտցնելու առիթ դարձան: Ֆրանսիական ստորաբաժանումները Բաթում հասան մայիսի վերջին և մասամբ փոխարինեցին անգլիացիներին¹⁸: Սակայն Բաթումը Վրաստանին հանձնելուց հետո ֆրանսիական զորամասերը ևս հեռացան անգլիացիների հետ:

1920 թ. հունիսի 8-ին Բաթումի անգլիական հրամանատարությունը Կ.Պոլսում գտնվող Մերձավոր Արևելքում անգլիական գլխավոր հրամանատարությունից հրաման ստացավ անհապաղ անցնել Բաթումից տարհանվելու նախապատրաստության¹⁹:

Հունիսի 11-ին Լոնդոնում վրացական տնտեսական առաքելության անդամներին գաղտնի տեղեկացրին անգլիական կառավարության՝ Բաթումը թողնելու և ամբողջ մարզը Վրաստանին միացնելու որոշման մասին: Այդ նպատակով Վրաստան էր գործուղվել բրիտանական նոր կոմիսարը՝ գնդապետ Ստոքսը²⁰: Հունիսի 27-ին Թիֆլիսում հայոց դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանը տեսակցում է գնդապետ Ստոքսի և կոմիսար Լյուկի հետ: Ստոքսը խիստ գաղտնի հայտնում է, որ Բաթումը և իր նահանգը Վրաստանին է տրվելու, սակայն Բաթումը լինելու է ազատ նավահանգիստ, և Հայաստանն իրավունք է ունենալու առանց հարկի ազատորեն ապրանքներ անցկացնել Բաթումով: Մեր ներկայացուցիչ արձագանքին, թե Հայաստանի ցանկությունն է սեփական երկաթգծով էլք ունենալ դեպի ծով, Ստոքսը պատասխանում է, որ այդ ցանկությունը կկատարվի, բայց դա պետք է գաղտնի պահել՝ էլնելով տաճկական ու աջարական վտանգից²¹: Փաստորեն ստացվում է, որ

¹⁷ Տե՛ս **Հ. Դաբբիկյան**, Երկրորդ ինտերնացիոնալը և Անդրկովկասը (1917-1920 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1991, թիվ 4, էջ 64:

¹⁸ Տե՛ս «Ժողովուրդ», Եր., 15 յունիսի, 1920, թիվ 65:

¹⁹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 165-166, նաև «Յառաջ», 20 հունիսի, 1920, թիվ 128:

²⁰ Տե՛ս **Авалов З.**, նշվ. աշխ., էջ 288:

²¹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 3:

թուրքական և աջարական վտանգը չի սպառնում Աջարիան Վրաստանին հանձնելիս, բայց սպառնում է հայկական կառուցվելիք երկաթուղուն: Սա անգլիական խարդավանքների հերթական դրսևորում էր:

Հունիսի 28-ին կոմիսար Լյուկը պայմանագիր ստորագրեց Վրաստանի կառավարության հետ, համաձայն որի՝ Բաթում քաղաքը և նավահանգիստը անգլիացիների կողմից Վրաստանին հանձնվելուն պես Վրաստանի կառավարությունը երաշխիք էր տալու, որ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների բեռները Բաթումի նավահանգստից ազատորեն կտեղափոխվեն Վրաստանի երկաթուղիների միջոցով, և պարտավորություն, որ վերոհիշյալ հանրապետություններին իրավունք կտա ազատորեն օգտագործել Բաթումի նավահանգիստը²²: Այս պայմանագրի կնքման հաջորդ օրը Վրաստանի արտգործնախարար Գեգեչկորին, ելույթ ունենալով Սահմանադիր ժողովում, տեղեկացրեց Բաթումը Վրաստանին հանձնելու մասին:

Վրացական զորքերը Բաթումի մարզ մտան 1920 թ. հուլիսի 1-ին²³: Հուլիսի 4-ին մոտեցան Բաթում քաղաքին, իսկ անգլիական զորքերը այնտեղից հեռացան հուլիսի 10-ին²⁴: Հուլիսի 7-ին վրացական զորքերը մտան Բաթում²⁵: Նույն օրը տեղի ունեցավ Բաթումը և նրա շրջանը Վրաստանին հանձնելու հանդիսավոր արարողությունը²⁶: Բայց ամեն ինչ այնքան էլ հարթ չէր ընթանում: Բաթումը Վրաստանին հանձնելու նախօրյակին բրիտանական հրամանատարությունը կասկածում է, որ տեղի բնակչությունը խաղաղ և անցնցում կընդունի այդ փաստը: Ուստի նահանգապետ Կուկ-Կուլիսը հուլիսի 6-ին հայտարարություն է տարածում, ըստ որի՝ քաղաքը և շրջանը Վրաստանին հանձնելով՝ հրամայում է «Բաթումի բնակչութեանը կատարեալ կարգ պաշտպանել և շարունակել սովորական զբաղմունքները: Այն բոլոր չարամիտները, որոնք կը փորձեն խանգարել դաշնակից զորքերի խաղաղ էւակուացիային, կամ վրացական իշխանութիւնների խաղաղ գալստեանը, դատի կենթարկեն զինուորական ժամանակների օրենքների ամենայն խստութեամբ»²⁷: Բացի այդ, նրա կարգադրությամբ փակվում է «Սեդայի Միլեր» լրագիրը, որը թուրքամետ էր²⁸: Այդպիսի կասկածներ ուներ նաև Բաթումի մարզի ռազմակալման գործողության ղեկավար, գեներալ Կվինիտաձեն, որը հայտնում է, որ Աջարիայի սահմանին իրենց դեմ խրամատներում աջարներ էին նստած²⁹: Այդ կասկածներն ավելի

²² Տե՛ս **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 235-236:

²³ Տե՛ս **Квини́тадзе Г. И.** Мои воспоминания в годы независимости Грузии. 1917-1921. Париж, 1985, էջ 214:

²⁴ Տե՛ս **Авалов З.**, նշվ. աշխ., էջ 288-289, նաև՝ «Յառաջ», 10 յուլիսի, 1920, թիվ 144:

²⁵ Տե՛ս **Квини́тадзе Г. И.**, նշվ. աշխ., էջ 216:

²⁶ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 213:

²⁷ «Նոր աշխատանք», Թիֆլիս, 8 յուլիսի, 1920, թիվ 75 (147):

²⁸ Տե՛ս «Յառաջ», 10 յուլիսի, 1920, թիվ 144:

²⁹ Տե՛ս **Квини́тадзе Г. И.**, նշվ. աշխ., էջ 212:

են ամրապնդվում Վրաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերով. կառավարության որոշմամբ հուլիսի 9-ին Բաթումում և շրջանում հայտարարվում է զինվորական դրություն, և արտակարգ կոմիսար է նշանակվում Վ. Չիխկվիշվիլին³⁰:

Վերջապես կատարվեց վրացիների երազանքը: Բաթումի մարզի միացումը բարոյական և քաղաքական մեծ բավականություն պատճառեց Վրաստանին: Բոլորը ոգևորված էին: Բայց դա ինչ-որ առումով նման էր տրոյական ձիու: Այդ համատարած ոգևորության մեջ քչերն էին գիտակցում, որ թուրք ազգայնականները, առաջնորդվելով «Ազգային ուխտով», հավակնում էին նաև Բաթումին և եթե մինչ այդ գործնական քայլեր չէին ձեռնարկել այդ ուղղությամբ, ապա պատճառը միմիայն անգլիական ռազմական ներկայությունն էր: Բաթումի բերդի վրա բրիտանական և ֆրանսիական դրոշակները վրացականով փոխարինելը խիստ խոցելի դարձրեց Վրաստանի հարավարևմտյան սահմանը: Վրաստանը ևս, ինչպես և Հայաստանը, հայտնվեց բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի արանքում: Այդ վտանգը գիտակցելու և համապատասխան դաշնակցային քայլեր ձեռնարկելու փոխարեն երկուստեք խորացնում էին գրեթե թշնամության հասնող անվստահությունը: Եթե ապրիլին Անտանտի երկրների սին խոստումներից ոգևորված հայկական կողմն էր ինքնամոռաց կերպով պահանջներ դնում Բաթումի հարցում, ապա այժմ վրացական կողմն էր ոգևորությունից կուրացած նիզակ ձոճում հայերի գլխին: 1920 թ. հունիսի 29-ին Վրաստանի արտագործնախարար Ե. Գեգեչկորին, ելույթ ունենալով Սահմանադիր ժողովի նիստում, հայտարարում է Բաթումը և շրջանը Վրաստանին հանձնելու դաշնակիցների որոշման մասին և ավելացնում. «...Վրաստանը ընդունում է հարևան հանրապետությունների շահերը: Կառավարությունը այդ մասին հայտարարում է հենց այժմ: Բայց եթե հանկարծ որևէ մեկը փորձի կանգնել վրաց ժողովրդի կամքի առաջ, ապա հանդես կգա մեր փառապանծ բանակը և գվարդիան և թշնամական ուժերը չեն դիմանա...»³¹:

Վրացական բանակը կոնկրետ խնդրի առջև կանգնեց Բաթումը վերցնելուց հետո: Աջարական զինված կազմավորումները թշնամաբար էին տրամադրված Վրաստանի հանդեպ: Նրանց առաջնորդ Քեսքիմ Չադեն մեծ ֆինանսական աջակցություն էր ստանում բոլշևիկներից: Հուլիսի 26-ին լրացել էր վրաց կառավարության տված զինաթափման վերջնագրի ժամկետը, սակայն աջարները չէին պատրաստվում ենթարկվել³²: Հուլիսի 28-ին վրացական զորքերի և աջար ապստամբների միջև տեղի են ունենում ընդհարումներ³³:

Բաթումում վրացական իշխանության հաստատումից հետո տեղի

³⁰ Տե՛ս «Նոր աշխատատր», 11 յուլիսի, 1920, թիվ 77 (149):

³¹ ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 199:

³² Տե՛ս «Յառաջ», 1 օգոստոսի, 1920, թիվ 162:

³³ Տե՛ս նույն տեղը, 4 օգոստոսի, 1920, թիվ 164:

բնակչության մեծ մասի, այդ թվում վրացական իշխանության նկատմամբ չեզոք տրամադրված աջարների դժգոհություններ առաջացան տնտեսական վիճակի վատացման պատճառով: Առևտուրը կանգ էր առել, թանկությունը աճում էր, հիմնարկությունները գրեթե չէին գործում: Պատճառները շատ էին: Անգլիացիների մեկնելուց հետո Բաթումից սկսեցին հեռանալ եվրոպացի գործարարները, ռուսները կասկածվում և անընդհատ հալածվում էին, հայերը զանգվածաբար հեռացվում էին աշխատանքից, իսկ վրացական իշխանությունները մի կողմից ծանրացնում էին հարկերն ու տուրքերը, մյուս կողմից՝ ազգայնացնում ամեն ինչ³⁴:

Բաթումի շրջանի մուսուլմանների դժգոհ տրամադրությունները հետագայում ևս շարունակվում են: Ելնելով դրանից՝ վրաց մենշինիկները մեղադրում են նրանց պահպանողականության և սեփական շահերը չգիտակցելու մեջ: Նրանք գտնում էին, որ աջարների առջև դրված է չափազանց կարևոր հարց. կա՞մ Վրաստանի հետ գնալ դեպի առաջադիմություն, կա՞մ Տաճկաստանի հետ՝ նորից դեպի վայրենություն³⁵:

Բաթումը հանձնելով Վրաստանին՝ անգլիացիներն այնուամենայնիվ ամբողջովին չհրաժարվեցին վերջինիս հետ կապված իրենց ծրագրերից: Հանձնման վերաբերյալ ստորագրված անգլո-վրացական արձանագրության մեջ վրաց կառավարությունը տալիս է իր համաձայնությունը Կարս-Բաթում հայկական երկաթգիծը կառուցելու համար³⁶: Սակայն այդ համաձայնագիրը չի հրապարակվել վրացիների խնդրանքով՝ պատճառաբանությամբ, թե այն կարող է առաջ բերել վրացիների դեմ աջարների շարժումներ³⁷: Իհարկե սա չէր կարող գործնական նշանակություն ունենալ և գոհացնել հայերին, քանի որ այդ արձանագրությունը չունեւր այն ուժը, իսկ Անգլիան՝ այն ազդեցությունը, որը կստիպեր վրացիներին կյանքի կոչել երկաթգծի ծրագիրը: Անգլիացիների այս թվացյալ հայանպաստ քայլը հերթական կեղծ հայասիրության դրսևորում էր: Մեր կարծիքով, այդ կետը արձանագրության մեջ մտցվել էր՝ ելնելով Անդրկովկասի հետ կապված բրիտանացիների հետագա հաղորդակցական ծրագրերից, որոնց համաձայն՝ Բաթումը պետք է ազատ քաղաք հռչակվեր՝ ապահովելով Անգլիայի անարգել կապը Անդրկովկասի վրայով դեպի Պարսկաստան և Ասիայի բրիտանական գաղութներ:

Բաթումը Վրաստանին հանձնելուց հետո ևս Հայաստանի կառավարությունը հույսը չէր կորցնում Փարիզի վեհաժողովի և Ազգերի լիգայի աջակցությամբ սեփական երկաթգծով ելք ունենալ դեպի Սև ծով:

³⁴ Տե՛ս նույն տեղը, 10 օգոստոսի, 1920, թիվ 169:

³⁵ Տե՛ս «Երթո՞ծա», տծօլօսօ, 12 Նօյեմբերօ, 1920, («Էրթոբա», Թիֆլիս, 12 նոյեմբերի, 1920):

³⁶ Տե՛ս **Արտ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 99:

³⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուրների ժողովածու», կազմողներ **Գ. Գալոյան, Վ. Ղազարխեցյան**, Եր., 2000, էջ 263:

Ահա թե ինչ ենք կարդում Հայաստանի արտգործնախարարության 1920 թ. հուլիսի 25-ի տեղեկագրում. «Բաթումի վերաբերեալ Կառավարութեանս տեսակետները նոյնն են. ունենալ իբրև սեփականութիւն Ճորոխի հովիտը եւ այդ հովտով սեփական երկաթուղագծով ազատ ելք ունենալ Բաթումի նաւահանգիստը: Կառավարութիւնս մի գրութեամբ պատուիրել է Հաշտարար կօնֆերանսին կից Հանրապետութեան Պատվիրակութեան բողոք ներկայացնել Ազգերի լիգային եւ Հաշտարար կօնֆերանսին Բաթումը իր նահանգով Վրաստանին տրելու արթիւ եւ բոլոր միջոցներով աշխատել ձեռք բերել Բաթումի հարցի վերաբերեալ մեր պահանջները իրենց ամբողջութեամբ»³⁸: Այս սին ցանկությունները կյանքի կոչելու ձգտումը առնվազն միամտություն էր մեր կառավարության կողմից: Մենք չկարողացանք խելամտորեն հետամուտ լինել մեր շահերին, չկարողացանք խոհեմ արտաքին քաղաքականություն վարել, ուստի Անտանտի երկրները մեզ ընկալում էին որպէս անուղղելի ռուսասերներ, իսկ բոլշևիկները՝ տարածաշրջանում Անտանտի իմպերիալիստական շահերը սպասարկողներ: Այս վիճակը ձեռնտու էր երկու կողմին էլ: Դրանով նրանք փաստորեն հրաժարվում էին Հայաստանի խնդիրներին լուծում տալուց՝ խուսափելով անցանկալի պարտավորություններից և ավելորդ պատասխանատվությունից:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի պայմանագիրը, որով Բաթումը հռչակվեց միջազգային նշանակության նավահանգիստ՝ բաց ազատ առևտրի և Ազգերի լիգայի անդամ բոլոր երկրների դրոշների համար: Ազգերի լիգայի բարձր հովանու ներքո ազատ նավահանգստի ռեժիմը, որը նկարագրված էր Սևրի պայմանագրի 335-346-րդ հոդվածներում, առնչվում էր Բաթումին այնպէս, ինչպէս Կ.Պոլսին, Իզմիրին, Ալեքսանդրետին, Բասրային, Տրապիզոնին և այլն: Ընդ որում՝ Բաթումի վերաբերյալ արվել էր վերապահում հետագայում որոշվելիք պայմանների մասին (հոդված 335)³⁹: Այսինքն՝ Բաթումը տնօրինելու հարցը անորոշ էր մնում: Սակայն դրա վրա որոշակի լույս էր սփռում պայմանագրի 351-րդ հոդվածը, որտեղ ասվում էր, որ Բաթումի նավահանգստով ազատ մուտք էր տրվում դեպի Սև ծով Վրաստանին, Ադրբեջանին և Պարսկաստանին ճիշտ այնպէս, ինչպէս Հայաստանին⁴⁰: Սա և ազատ նավահանգստի կարգավիճակը մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այս ամենի հիմքում ընկած էին դեռևս փետրվար-մարտին Լոնդոնում կայացած քննարկումների գաղափարները, այն է՝ Բաթումի անջատումը Վրաստանից և Անտանտի երկրների հաղորդակցական շահերի սպասարկումը տարածաշրջանում: Սակայն ամեն ինչ արդեն անդառնալիորեն ուշացած էր: Բաթումը անգլիացիների կամոք տիրապետում էին վրացիները, իսկ տարածաշրջանում լուրջ ազդե-

³⁸ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 53:

³⁹ Տե՛ս **Авалов З.**, նշվ. աշխ., էջ 290:

⁴⁰ Տե՛ս «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне». М., 1927, էջ 111:

ցություն էին ձեռք բերել բոլշևիկներն ու քեմալականները, և անկախ այն բանից, թե ինչ էր որոշվել Սևրում, հարցերն այստեղ նրանք էին լուծում, դեռ ավելին՝ Սևրի պայմանագիրը ձախողելու համար նրանք դիմեցին էլ ավելի արմատական քայլերի՝ առաջին հերթին կործանարար հարված հասցնելով մեծ Հայաստանի տեալականին՝ Անտանտի երկրների առջև փակելով տարածաշրջանի ռազմավարական հենակետերը, այդ թվում նաև Բաթումը:

352-րդ հոդվածով էլ Հայաստանին ազատ մուտք էր տրվում դեպի Սև ծով նաև Տրապիզոնով, ընդ որում՝ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ վարձակալության էր տրվելու մի տարածք, որը դրվելու էր Սևրի պայմանագրով սահմանված ազատ գոտիների ընդհանուր ռեժիմի տակ⁴¹:

Սևրի պայմանագրի իրագործվելու դեպքում էլ ավելի կարվեին հայ-ռուսական, հայ-թուրքական, հայ-վրացական, հայ-ադրբեջանական և հայ-քրդական հարաբերությունները (պայմանագրով նախատեսված ինքնավար Քուրդիստանի և Հայաստանի սահմանները ևս մնում էին անորոշ), քանի որ պայմանագիրը չէր տալիս նոր սահմանագծումների մեխանիզմները և հետագա բախումներից խուսափելու երաշխիքները, իսկ դրանց հետևանքները շատ ծանր կլինեին Հայաստանի համար, գուցեև ավելի ծանր, քան այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանի հետ: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանի հետ, Սևրի պայմանագրի ու նրա հեղինակների անվճռականության և Հայաստանի կառավարիչների քաղաքական կարճատեսության պատճառով էր, հատկապես վերջինների, ովքեր իրենց փրկությունն ու ապագան կապում էին միայն այս պայմանագրի հետ:

Ակնհայտ էր, որ Բաթումի նկատմամբ հավակնություն ունեին թե՛ Խորհրդային Ռուսաստանը և թե՛ քեմալական Թուրքիան, բայց եթե բոլշևիկները դա անում էին անթաքույց, ապա քեմալականները՝ իրենց հատուկ ծածկամտությամբ: Սակայն դա չէր վրիպում բոլշևիկների աչքից: Երբ արդեն սկսվել էր թուրք-հայկական պատերազմը, 1920 թ. հոկտեմբերի 9-ին ՌԿ(Բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում հանդես գալով ՌԽՖՍՀ ներքին և արտաքին դրության մասին զեկուցումով, Լենինն ասում է. «Վերջերս թուրքերը սկսել են հարձակում Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Բաթումը...»⁴²: Թուրքերի այդ անզուսպ առաջխաղացումը Հայաստանում արդեն անհանգստացնում էր բոլշևիկներին: Հոկտեմբերի 26-ին Ստալինը Բաքվից հեռագրում է Լենինին, թե հնարավոր է, որ Վրաստանը Բաթումը հանձնի Անտանտին: Հոկտեմբերի 29-ին Լենինը պա-

⁴¹ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.)», Չ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 682:

⁴² **Ն. Սիմոնյան**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 397:

տապիսան հեռագրում հայտնում է. «Անտարակուսելի եմ համարում, որ Վրաստանը հավանաբար գաղտնի Բաթումը կհանձնի Անտանտին և որ Անտանտան կհարձակվի Բաքվի վրա...»⁴³: Բոլշևիկներն արդեն կասկած չունեին, որ թուրքերը գործում էին Անտանտի գիտությանը և իրական վտանգ էին ներկայացնում Բաթումի համար: Եվ իրոք, Հայաստանին հաղթելուց հետո՝ 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին, թուրքերը իրենց թնդանոթներն ուղղեցին Բաթումի վրա: Բաթումի նկատմամբ թուրքերի հավակնությունների կարևոր դրոշմատճառներից էր նաև Բաքու-Բաթում նավթամուղը, որը իրավամբ համարվում էր Անդրկովկասի գլխավոր տնտեսական լծակներից մեկը: Իսկ Վրաստանի կողմից Բաթումը Անտանտին հանձնելու Ստալինի կասկածները միանգամայն հիմնավոր էին, որովհետև բոլշևիկների և քեմալականների ահագնացող առաջխաղացման պայմաններում Գեգեչկորու պահանջով Վրաստանի կառավարությունը համաձայնել էր Բաթումի շրջանը ժամանակավորապես հանձնել անգլիացիներին⁴⁴: Սա ևս փաստում էր, որ մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագիրը երկու երկրների միջև չհաստատեց փոխվստահության մթնոլորտ: Բաթումը Անգլիայի շահագործմանը հանձնելու մասին անգլո-վրացական համաձայնությունը կայացել էր նոյեմբերի 23-ին, որի դիմաց անգլիացիները խոստացել էին տրամադրել վրացիների խնդրած փոխառությունը⁴⁵: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ դեռևս հուլիսին, հեռանալով Բաթումից, անգլիացիները հեռահար նպատակներով իրենց էին վերապահել նավահանգստի կառավարումը⁴⁶: Բոլշևիկների առաջխաղացումը և Բաթումի հետագա ճակատագիրը խիստ անհանգստացրել էին Անտանտի տերություններին: Այդ էր պատճառը, որ արդեն հոկտեմբերի 30-ին Բաթումի նավահանգստում կանգնած էին Անտանտի ութ ռազմանավեր, որոնցից երեքը ֆրանսիական ականակիրներ էին⁴⁷: Իսկ Հայաստանում ամերիկյան առաքելության ներկայացուցիչ Ջորդիս Մոսլին գտնում էր, որ Բաթումի նավահանգիստը պետք է դառնա ամերիկյան բազա⁴⁸: Սակայն Անդրկովկասում գերիշխանություն ապահովող ռազմավարական այս քաղաքի համար մղվող պայքարում, ինչպես հայտնի է, հաղթող դարձավ Խորհրդային Ռուսաստանը:

Քեմալականները ձգտում էին Բաթումը ուժով զավթել ռուս-թուրքական երկրորդ խորհրդածոդովում՝ բոլշևիկներին փաստի առաջ կանգնեցնելով: Ռազմական աջակցության խոստմամբ փորձելով գայ-

⁴³ Է. Չոնրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 300:

⁴⁴ Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 10 դեկտեմբերի, 1920, թիվ 170:

⁴⁵ Տե՛ս «Շողովուրդ», 1 դեկտեմբերի, 1920, թիվ 97:

⁴⁶ Տե՛ս «Յառաջ», 10 յուլիսի, 1920, թիվ 144:

⁴⁷ Տե՛ս «Շողովուրդ», 9 նոյեմբերի, 1920, թիվ 82:

⁴⁸ Տե՛ս **Кунин А. Е.** Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920 гг. М., 1951, էջ 89:

թակդել մենշնիկյան կառավարությանը՝ թուրքերը նպատակադրվել էին վրացական բանակի ուժերով դիմագրավել կարմիրների հարձակումը, ժամանակ շահել և բոլշևիկներից առաջ գրավել Բաթումը⁴⁹: Բոլշևիկները դա հասկացել էին համաձայնության հարցում թուրքերի վարած ձգձգման քաղաքականությունից: Իսկ թուրքերը Բաթումը գրավելու ուղղությամբ իրենց ձեռնարկումները հիմնավորում էին վրացիների ցանկությանը: Ըստ այդմ՝ քեմալականների արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեդ Սուխթարը Թուրքիայի Ազգային մեծ ժողովում հայտարարում է. «Այժմ ես պետք է հաղորդեմ ձեզ, որ վրաց կառավարության համաձայնությամբ արևելյան ճակատի մեր զորքերին հրաման է արձակված գրավելու Բաթումը...»⁵⁰:

1921 թ. մարտի 11-ին թուրքական մի ջոկատ մտնում է Բաթում, իսկ Վրաստանում քեմալական ներկայացուցիչ Քյազիմ բեյն այն հռչակում է Թուրքիայի անբաժանելի մասը⁵¹: Պրոֆեսոր Է. Ջոհրաբյանը ճշմարտացի է համարում վրացիների ցանկությանը Բաթումը գրավելու թուրքերի փաստարկները: Սակայն իրականում դա թուրքերի հերթական խաբեությունն էր, որը շարունակեց Քյազիմ Կարաբեքիրը Բաթումը գրավելուց անմիջապես հետո: Նա իր արձակած հրամանում նշում է. «Վերջին ժամանակներս, վրացական կառավարության համաձայնությամբ, Բաթումի մարզը... գրավվեց մեր զորքերի կողմից... այդ մարզն այսօրվանից... ենթարկվում է Թուրքիայի ազգային կառավարությանը»⁵²: Իրականում, ինչպես նշել ենք, վրաց մենշնիկները ցանկանում էին Բաթումը հանձնել անգլիացիներին, իսկ Վրաստանի խորհրդայնացումից հետո ամեն գնով փորձում էին այն պահել Խորհրդային Վրաստանի կազմում: Ուստի Թիֆլիսում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո վրաց կառավարությունը տեղափոխվում է Բաթում: Այստեղ Ժորդանիան բանակցում է տեղի բոլշևիկյան լիդերների հետ՝ ասելով. «Մեր ընդհանուր շահերից է բխում, որ Բաթումը և նրա մարզը մնան Վրաստանի կազմում՝ ինչ վարչակարգ էլ այնտեղ գործի»⁵³: Մյուս կողմից՝ վրացական զորքերը թուրքերի դեմ արյունահեղ մարտեր էին մղում Բաթումի փողոցներում⁵⁴: Բաթումի 4000-անոց մենշնիկյան կայազորը շուտով անցավ քաղաքի հեղկոմի կողմը և շարունակեց մարտնչել թուրքերի դեմ⁵⁵: Վրաստանի կառավարությունը Բաթումից հեռացավ մարտի 17-ին, երբ տեղեկացավ, որ կարմիր զորքերը մոտենում են քաղաքին⁵⁶: Միայն

⁴⁹ Տե՛ս Ե. Մարգարյան, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր., 1995, էջ 178:

⁵⁰ Է. Ջոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 1979, էջ 226:

⁵¹ Տե՛ս նույն տեղը:

⁵² Ե. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 179:

⁵³ Жордания Н. Наши разногласия. Париж, 1928, с. 117.

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 118:

⁵⁵ Տե՛ս Ե. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 179:

⁵⁶ Տե՛ս Жордания Н., նշվ. աշխ., էջ 118:

Վրաստանի խորհրդայնացումը և դրան հաջորդած 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը փրկեցին Բաթումը Թուրքիայի հավակնություններից: Ըստ այդ պայմանագրերի՝ Բաթումի մարզը ինքնավար հանրապետության կարգավիճակով մտավ Խորհրդային Վրաստանի կազմի մեջ: Սրանով Բաթումի և մարզի ճակատագիրը վերջնականապես որոշվեց: Իսկ Սևրի պայմանագիրը, որի շատ հոդվածներ, այդ թվում Բաթումին առնչվողները, անիրականանալի էին դարձել, վերանայվեց 1922-1923 թթ. Լոզանի խորհրդածողովում, որտեղ Բաթումի մասին ոչինչ չէր նախատեսվում:

Բաթումն այդպես էլ մնաց Հայաստանի՝ դեպի ծով ելքի միակ հնարավորությունը: Խորհրդային տարիներին ծովային ելքի հարցը, հասկանալի պատճառներով, օրակարգից դուրս եկավ: Սակայն ներկայումս, անկախ պետականության պայմաններում, այս հարցը վերստին լուրջ կարևորություն է ձեռք բերել: Բաթումը և Վրաստանի Փոթի նավահանգիստը այսօր էլ մնում են Հայաստանի ծովային ելքի հնարավոր ուղիները: Հետևաբար, հաղորդակցական կախվածությունից խուսափելու համար այլընտրանքային ծովային ելքի ապահովումը պետք է դառնա Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

Ծովային ելքի իրավունքը պետությունների անքակտելի իրավունքներից մեկն է և անվերապահորեն ճանաչվում է միջազգային հանրության կողմից: Ուստի այսօրվա քաղաքակիրթ աշխարհում ծովեզերք չունեցող պետությունների իրավունքների պաշտպանությունը գտնվում է ժամանակակից միջազգային իրավունքի ուշադրության կենտրոնում: Այս առումով շատ մեծ է միջազգային ծովային իրավունքի նշանակությունը բոլոր պետությունների, այդ թվում նաև՝ ծովեզերք չունեցող, ներմայրցամաքային պետությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը: Ծովեզերք չունեցող պետություններն ունեն դեպի ծով մուտքի իրավունք, այդ թվում՝ իրավունք, որպեսզի իրենց դրոշի ներքո նավերը նավարկեն ծովում⁵⁷: Ծովեզերք չունեցող պետությունների իրավունքները հստակորեն ամրագրված են «Ծովային իրավունքի» ՄԱԿ-ի կոնվենցիայում⁵⁸:

Ծովային ելքը նախևառաջ անհրաժեշտ է բեռնափոխադրումների և առևտրի համար, հետևաբար միջազգային իրավունքն անդրադարձ է կատարել նաև այս խնդրին: 1965թ. հուլիսի 8-ին Նյու Յորքում ընդունվել է «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» կոնվենցիան, որտեղ մանրամասնորեն շարադրված են ծովային պետությունների նավահանգիստները հավասար պայմաններով օգտագործելու, տարանցիկ բեռնափոխադրումների և խնդրի հետ

⁵⁷ Տե՛ս Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2002, էջ 309:

⁵⁸ Մանրամասն տե՛ս http://www.un.org/res/UN%20Treaties/XII_1.pdf

առնչվող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ ծով չունեցող պետությունների իրավունքները⁵⁹:

Եղևմ, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է վերոնշյալ կոնվենցիաներին:

Բանալի բառեր – *ազատ նավահանգիստ, հայ-վրացական հարաբերություններ, ռուս-վրացական պայմանագիր, ծովային ելք, անգլո-ռուսական հակասություններ, քեմալաբոլշևիկյան հարաբերություններ*

ШИРАК ТОРОСЯН – Русско-грузинский договор от 7 мая 1920 г. и передача Батума Грузии. – Во внешней политике первой Республики Армения важнейшее место занимал вопрос о выходе к морю, и одним из вариантов его решения представлялся батумский порт. Эта коллизия рассматривается в статье в контексте армяно-грузинских, русско-грузинских, русско-английских и турецко-большевистских отношений. Согласно договору, заключенному 7 мая 1920 г. между советской Россией и меньшевистской Грузией, большевики признали Батумскую область неотъемлемой частью Грузии, последняя взамен обязалась безотлагательно вывести оттуда британский гарнизон. 7 июля британское командование передало город Грузии. Интересы Армении были проигнорированы: англичане не исполнили свое обещание провозгласить Батум свободным портом. Однако в Севрском договоре был упомянут его статус как *porto franco*. В конце 1920 – начале 1921 г. между кемалистами и большевиками возникли в этой связи разногласия. Большевики настаивали, чтобы Батум утвердили за советской Грузией, что и было зафиксировано в московском договоре от 16 марта 1921 г. На Лозаннской конференции о Батуме и речи не заходило. Право Армении на выход к морю было поправно.

Ключевые слова: *свободный порт, армяно-грузинские отношения, русско-грузинский договор, выход к морю, англо-русские противоречия, кемалистско-большевистские отношения*

SHIRAK TOROSYAN – The Russian-Georgian Treaty of May 7, 1920 and transfer of Batumi to Georgia. – One of the most important issues in the foreign policy of the First Republic of Armenia was the question of the access to the sea, and one of the possible solutions to this issue the Batumi port was considered. This article addresses the issue of Batumi in the context of the Armenian-Georgian, Russian-Georgian, Anglo-Russian and Kemal-Bolshevik relations. According to the agreement signed between Soviet Russia and Menshevik Georgia on 7 May of 1920, the Bolsheviks recognized the Batumi region as an integral part of Georgia, in return for which the Mensheviks promised to withdraw the British garrison from there. On July 7, the British handed over the command of Batumi to Georgia and left this place. Armenia's interests were again ignored, as the British did not fulfill their promise regarding the declaration of Batumi free port. However, in the Treaty of Sevres, there was referred to the status of *Porto franco* for Batumi. At the end of 1920 and beginning of 1921, there were contradictions between the Kemalists and Bolsheviks with respect to Batumi. In the end, Russia insisted on that Batumi should receive the status of the territory of the Soviet Georgia, which was recorded in the Moscow Treaty of March 16, 1921. During the Lausanne Conference, which revised the Treaty of Sevres there was said nothing regarding Batumi. Thus, the right of Armenia to have access to the sea was grossly violated.

Key words: *free port, the Armenian-Georgian relations, the Russian-Georgian agreement, access to the sea, the Anglo-Russian contradictions, Kemalist-Bolshevik relations*

⁵⁹ Մանրամասն տե՛ս [http://www.translation-centre.am/pdf/Translat/EUOfher/UN Transit Trade/UN CTTLS_am.pdf](http://www.translation-centre.am/pdf/Translat/EUOfher/UN%20Transit%20Trade/UN%20CTTLS_am.pdf)

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՓՈԻԼՈՒՄ

ԴԱՎԻԴ ՍԱՐԿԻՍՅԱՆ

Պատժամիջոցների քաղաքականությունը Ռուսաստանի դեմ և Արևմուտք-Ռուսաստան աշխարհաքաղաքական դիմակայությունը խիստ արդիական են դարձնում ՌԴ-ԳԴՀ հարաբերությունների ներկայիս շրջանի ուսումնասիրությունը: Ռուս-գերմանական հարաբերությունները միշտ էլ աչքի են ընկել մի շարք վայրիվերումներով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Գերմանիան բաժանվեց երկու պետությունների՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության: Սառը պատերազմի սկզբնական շրջանում՝ 1949-1969 թթ., ԳՖՀ-ում իշխանության ղեկին գտնվող Քրիստոնեա-ժողովրդավարական միությունը (ԲԺՄ) խիստ հակամարտ դիրքորոշում ընդունեց ԳԴՀ-ի նկատմամբ: 1969-1974 թթ. սոցիալ-դեմոկրատների գլխավորած նոր կառավարությունը՝ Վիլլի Բրանդտի ղեկավարությամբ, արմատապես փոխեց արտաքին քաղաքական կուրսը Արևելյան Գերմանիայի և ընդհանրապես Արևելյան Եվրոպայի երկրների նկատմամբ: Այս քաղաքական գիծը, որը ստացավ Նոր արևելյան քաղաքականություն (Neue Ostpolitik) կամ պարզապես Արևելյան քաղաքականություն (Ostpolitik) անվանումը, ուղղված էր ԳԴՀ-ի և սոցիալիստական ճամբարի եվրոպական պետությունների միջև հարաբերությունների կարգավորմանը: Ostpolitik-ի հաջողությունն ու վայելած աջակցությունը Արևմտյան - Գերմանիայում նոր իշխանության եկած Քրիստոնեա-ժողովրդավարական դաշինքի ներկայացուցիչներին ստիպեցին շարունակել հարաբերությունների կարգավորման կուրսը:

Ռուս-գերմանական հարաբերությունների հիմնական միտումները հետսառըպատերազմյան շրջանում

Գերմանիաների վերամիավորումից և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ռուս-գերմանական հարաբերությունները շարունակեցին ընթանալ բարելավման ճանապարհով, իսկ Գերհարդ Շրյոդերի պաշտոնավարման տարիներին՝ 1998-2005 թթ., դրանք վերաճեցին «ռազմավարական գործընկերության»:

Անգելա Մերկելի կառավարման շրջանում, մասնավորապես 2005-2013 թթ., ԳՖՀ-ՌԴ հարաբերություններում գրանցվեց տնտեսական

համագործակցության և առևտրաշրջանառության ծավալների նշանակալի աճ¹: Թեպետ Մերկելը, ի տարբերություն նախորդ կանցլեր Գերհարդ Շրյոդերի, առավել հաճախ էր քննադատում ՌԴ ներքին և արտաքին քաղաքականությունը, այնուամենայնիվ մինչև վերջին տարիների զարգացումները քաղաքական հարաբերությունները հիմնականում հարթ էին ընթանում: Դմիտրի Մեդվեդևի նախագահության օրոք ռուս-գերմանական հարաբերությունները զգալի առաջընթաց ապրեցին՝ չնայած 2008 թ. ռուս-վրացական պատերազմին: Երկու երկրների միջև համագործակցությունը նշված ժամանակաշրջանում ամրապնդվեց Գործընկերություն հանուն արդիականացման ծրագրի միջոցով²: Մակայն Բեռլինում դժկամությամբ ընդունվեց Վլադիմիր Պուտինի վերընտրվելը ՌԴ նախագահի պաշտոնում, իսկ ուկրաինական ճգնաժամը բացասաբար ազդեց ՌԴ նկատմամբ Գերմանիայի արտաքին քաղաքականության մշակման վրա:

Երկար տարիներ համագործակցության և ռազմավարական գործընկերության³ զարգացման կուրս վարելուց հետո Գերմանիայի արտաքին քաղաքականությունը մշակող ընտրանին կանգնեց երկրներանքի առջև: ԳՖՀ տնտեսական ներառման քաղաքականությունը անարդյունավետ եղավ կանխելու ոչ միայն ՌԴ քաղաքականությունը ուկրաինական ճգնաժամի հարցում, այլև Ռուսաստանի ռազմավարությունը՝ իր մերձավոր արտասահմանում բացառիկ աշխարհաքաղաքական ազդեցության գոտի ստեղծելու ուղղությամբ՝ «Մոնրոյի դոկտրինի» ռուսական տարբերակ⁴: Այն, որ Ռուսաստանի նոր ռազմավարությունը Բեռլինում ընկալվեց հենց որպես ազդեցության գոտիների ընդլայնման տրամաբանությամբ գործող մտածողություն, վկայում է 2014 թ. նոյեմբերին կանցլեր Մերկելի ելույթը Լոզի ինստիտուտում (Միդնեյ): Նա մասնավորապես նշել է, որ չի կարելի ճանապարհ տալ ազդեցության գոտիների կատեգորիաներով մտածողությանը՝ ի հաշիվ միջազգային իրավունքի⁵:

¹ Տե՛ս «**Statistisches Bundesamt**. GENESIS-Online Datenbank. Germany-Russia Exports and Imports». https://www-genesis.destatis.de/genesis/online;jsessionid=7264737FCA147A5F11EFF653A7CF732E.tomcat_GO_2_1?operation=previous&levelindex=2&levelid=1458392783306&step=2, հասանելի է առ 19.03.2016թ.:

² Տե՛ս «**Представительство Европейского Союза в России**. Партнерство для модернизации (завершена)» // http://eeas.europa.eu/delegations/russia/eu_russia/tech_financial_cooperation/partnership_modernisation_facility/index_ru.htm, հասանելի է առ 19.03.2016թ.:

³ Տե՛ս **Adomeit, H.** *German-Russian Relations: Balance Sheet since 2000 and Perspectives until 2025*. s.l.: Study Committee for Franco-German Relations, 2012, էջ 11-12: Տե՛ս նաև **Adomeit, H.** *German-Russian Relations: Change of Paradigm versus "Business as Usual"*, s.l.: Study Committee for Franco-German Relations, 2015, էջ 5:

⁴ Տե՛ս **Sarkisyan, D.** *Diplomacy-Power Ratio in European-Russian Relations* // *Global Studies Journal*, 8(3), 2015, էջ 45-54:

⁵ Տե՛ս “Rede von Bundeskanzlerin Merkel am Lowy Institut für Internationale Politik am 17. November 2014”, <https://www.bundesregierung.de/Content/DE/Rede/2014/11/2014-11-17-merkel-lowy-institut.html>, հասանելի է առ 13.03.2016 թ.:

Ֆ.-Վ. Շթայնմայերի առաջարկած «Մերձեցում փոխկապակցման միջոցով» (Annäherung durch Verflechtung) կոչված քաղաքական կուրսը⁶, որի անվանումը հիշեցնում էր Սառը պատերազմի տարիների «Փոփոխություն մերձեցման միջոցով» (Wandel durch Annäherung) քաղաքական գիծը⁷, առնվազն մասամբ պատրանքային դուրս եկավ: Չիրականացան առևտրի և լիբերալ շփումների միջոցով ՌԴ ժողովրդավարացման մասին Բեռլինի փայփայած հույսերը: Չիրականացան նաև ԳՖՀ այն հաշվարկները, որ տնտեսապես «ներառվելու» դեպքում Ռուսաստանը առնվազն կվարի Գերմանիային և ԵՄ-ին ձեռնտու քաղաքականություն այսպես կոչված Zwischeneuropa-ի նկատմամբ:

Չնայած ներառման քաղաքականության ձախողմանը՝ Բեռլինի պաշտոնական դիսկուրսում կրկնվում է, որ եվրոպական անվտանգությունը կարող է կառուցվել միայն «Ռուսաստանի հետ» և ոչ թե «նրա դեմ»: Այս միտքն արտահայտվել է թե՛ գերմանական երեք կուսակցությունների կոալիցիոն պայմանագրում⁸ և թե՛ 2015 թ. Մերկելի արտասանած ճառում⁹: Որոշ հեղինակներ առաջ են քաշում զսպման և ներառման մոտեցումների համատեղմամբ ստացված «*զսպման*»¹⁰ կարևորությունը¹¹:

Եթե հեշտ է պատկերացնել, թե ինչ տեսք կարող է ստանալ ԳՖՀ-ի հետագա ներառման քաղաքականությունը, ապա շատ ավելի խնդրահարույց է զսպման ռազմավարության հարցը: Մասնավորապես պարզ չէ, թե Գերմանիան կոնկրետ ինչ միջոցներով կարող է արդյունավետորեն զսպել Ռուսաստանին:

Այդ իսկ պատճառով Գերմանիայի քաղաքականությունը ՌԴ-ի նկատմամբ ներկայումս երկճյուղվածության (բիֆուրկացիոն) շրջանում է. կա մ պետք է մշակել նոր քաղաքական կուրս, կա մ վերադարձ կատարել հինին: Ուկրաինական ճգնաժամը գերմանական կողմին համոզեց, որ ռուս-վրացական պատերազմը դիպվածային կամ սպոնտան դրվագ չէր, այլ ՌԴ նոր և շարունակական քաղաքական գծի ու աշխարհաքաղաքական կեցվածքի մաս:

Երկու ճգնաժամերից հետո Գերմանիայի արձագանքներն այնքան տարբեր էին, որ Ադոմիթը հարցնում է, թե արդյոք տեղի է ունեցել

⁶ Տե՛ս **Steinmeier, F.-W.** Verflechtung und Integration. Eine neue Ostpolitik der EU. *Internationale Politik*, März, 62(3), 2007, էջ 6-11:

⁷ Տե՛ս **Adomeit, H.** *German-Russian Relations: Change of Paradigm versus «Business as Usual»*, s.l.: Study Committee for Franco-German Relations, 2015, էջ 5:

⁸ Տե՛ս **CDU, CSU und SPD**, *Deutschlands Zukunft gestalten: Koalitionsvertrag zwischen CDU, CSU und SPD*. 2013, https://www.cdu.de/sites/default/files/media/dokumente/koalition_svertrag.pdf, հասանելի է առ 13.03.2016 թ.:

⁹ Տե՛ս **Merkel, A.** *Rede von Bundeskanzlerin Angela Merkel anlässlich der 51. Münchner Sicherheitskonferenz*. 2015, <https://www.bundesregierung.de/Content/DE/Rede/2015/02/2015-02-07-merkel-sicherheitskonferenz.html>, հասանելի է առ 13.03.2016 թ.:

¹⁰ Congagement՝ անզլերեն containment՝ զսպում, և engagement՝ ներառում, բառերից:

¹¹ Տե՛ս **Ischinger, W.** Eine Aufgabe für Generationen. Der Westen muss gegenüber Russland auf eine neue Doppelstrategie setzen / *Internationale Politik*, Januar/Ferbruar, 2015, էջ 30-35:

հարացույցի փոփոխություն Բեռլինի քաղաքական մտածողության մեջ, թե որոշ ժամանակ անց հարաբերությունները կրկին վերադառնալու են իրենց սովորական հունը¹²: Նման հարցադրում է կատարում նաև Ֆորսբերգը¹³, փորձելով Գերմանիայի քաղաքական կուրսի փոփոխության արմատները գտնել դեռևս 2012-2013 թթ. իրադարձությունների մեջ:

Վերադառնալով այն հարցին, թե ինչպես Գերմանիան կարող է/կարող էր «զսպել» Ռուսաստանին՝ հարկ է նշել, որ թեպետ Բեռլինի զինանոցում տարբերակները այնքան էլ շատ չէին, սակայն տնտեսական պատժամիջոցների ընդունումը բավականին անսպասելի էր և հակառակ էր մի շարք վերլուծաբանների կանխատեսումներին¹⁴:

Սույն հոդվածում կվերլուծվեն Գերմանիայի՝ ռուսական քաղաքականության մշակման վրա ազդող հիմնական ներքին դերակատարների դիրքորոշումները, ուկրաինական ճգնաժամի ազդեցությունը դրանց վրա և էներգետիկ կախվածության գործոնի դերը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին քաղաքականության մշակման մակարդակները

Լինելով ժողովրդավարական բարձր մակարդակի խորհրդարանական հանրապետություն՝ Գերմանիան արտաքին քաղաքականության մշակման գործընթացներում ներառում է դերակատարների լայն շրջանակ կուսակցություններ, ձեռնարկություններ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող խմբեր և այլն: Ներկա դեպքում մեզ հետաքրքրում է Ռուսաստանի նկատմամբ արտաքին քաղաքական կուրսի մշակմանը մասնակցող դերակատարների խնդիրը:

Ըստ այդմ՝ նախ դիտարկենք Բունդեսթագում ներկայացված խոշոր կուսակցությունների դիրքորոշումները: Ըստ Սթիվեն Սձաբոյի¹⁵՝ դրանք պայմանականորեն բաժանվում են երկու հիմնական խմբի՝ 1. մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների հարցերը ակտիվորեն բարձրացնող և 2. ավելի շատ Ռուսաստանի հետ ռազմավարական տնտեսական համագործակցությունը կարևորող:

«Դաշինք 90/Կանաչներ» կուսակցությունը¹⁶ (Bündnis 90/Die Grünen) և Քրիստոնեա-ժողովրդավարական միության¹⁷ (Christlich Demokratische Union, ԶԺՄ) մի մասը և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների մեծամասնությունը հարում էին առաջին խմբին, մինչդեռ

¹² Տե՛ս **Adomeit, H.** *German-Russian Relations: Change of Paradigm versus «Business as Usual»*, s.l.: Study Committee for Franco-German Relations, 2015, էջ 5:

¹³ Տե՛ս **Forsberg, T.** From Ostpolitik to «frostpolitik»? Merkel, Putin and German foreign policy towards Russia. *International Affairs*, 92(1), 2016, էջ 21-42:

¹⁴ Տե՛ս **Szabo, S. F.** *Germany, Russia and the Rise of Geo-Economics*. London, New Delhi, New York, Sydney: Bloomsbury Academic. 2015:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 36:

¹⁶ Տե՛ս **Bündnis 90/Die Grünen**. European Green Party <https://europeangreens.eu/parties/b%C3%BCndnis-90die-gr%C3%BCnen>, հասանելի է առ 13.03.2016 թ.

¹⁷ Տե՛ս «**Christlich Demokratische Union**», <https://www.cdu.de/>, հասանելի է առ 13. 03. 2016թ.:

սոցիալ-դեմոկրատները և ձեռներեցների խմբերը՝ երկրորդին: Ազատ դեմոկրատները բաժանված էին այս երկու խմբերի միջև: Սակայն 2013 թ. ընտրություններում խորհրդարան չանցնելը մեծապես նվազեցրեց նրանց դերը արտաքին քաղաքականության մշակման գործընթացում:

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը¹⁸ (Sozialdemokratische Partei Deutschlands) շատ ավելի ռուսամետ դիրքորոշում ունի, քան ՔԺՄ: Դրա պատմական ակունքները գալիս են դեռևս հետպատերազմական շրջանից՝ կուսակցության առաջին առաջնորդ Քուրտ Շումախերի ժամանակներից, ով նախընտրում էր Գերմանիայի չեզոք կուրսը ամերիկամետ կուրսից: Վիլլի Բրանդտի Արևելյան քաղաքականությունը խորը հետք թողեց կուսակցության վրա: Ռուսաստանի հետ սոցիալ-դեմոկրատների համագործակցության միտվածությունը վերջին շրջանում առավել ցայտուն դրսևորվեց Գերհարդ Շրյոդերի պաշտոնավարման ընթացքում: Հատկանշական էր, որ 2003 թ. իրաքյան պատերազմի ժամանակ Գերմանիան հրաժարվեց աջակցել Վաշինգթոնին և որդեգրեց ռուսականին նույնական դիրքորոշում, որը քաղաքական շրջանակներում անվանվեց «Բեռլին-Փարիզ-Մոսկվա առանցք»:

Անգելա Մերկելի կողմից Գերմանիայի կանցլերի պաշտոնը զբաղեցնելուց հետո՝ «Մեծ կոալիցիայի» (որի մեջ մտնում էին ՔԺՄ-ն, դրա բավարական գործընկեր Քրիստոնեա-սոցիալիստական միությունը և սոցիալ-դեմոկրատները) կառավարման տարիներին, Ռուսաստանի նկատմամբ գերմանական քաղաքականությունը հիմնականում մնաց անփոփոխ: Թեպետ Բորիս Ելցինի ու Հելմուտ Քոլի «սառնային դիվանագիտությանը» և Գերհարդ Շրյոդերի ու Վլադիմիր Պուտինի անձնական մտերմությանը փոխարինելու եկավ երկրների ղեկավարների միջև ավելի սառը գործնական մթնոլորտը, բայց համագործակցության հիմնական ուղղությունները մնացին անփոփոխ: Հարաբերությունների մակարդակը հետընթաց ապրեց միայն «Մեծ կոալիցիայի» իշխանության վերջին տարում: Դրա հիմնական պատճառներն էին ռուս-վրացական կարճատև պատերազմը և «գազային ճգնաժամը» Ռուսաստանի ու Ուկրաինայի, իսկ այնուհետև Ռուսաստանի ու Բելառուսի միջև:

2009 թ. հետո, երբ «Մեծ կոալիցիան» փոխարինվեց ՔԺՄ և Ազատ դեմոկրատների կուսակցության կազմած «Սև-դեղին կոալիցիայով», և հատկապես 2012 թ. Վ. Պուտինի՝ ՌԴ նախագահ վերընտրվելուց հետո Բունդեսթագի՝ ՔԺՄ անդամ պատգամավորները սկսեցին առավել հաճախ հանդես գալ Ռուսաստանի քննադատությամբ: Այս իմաստով կարելի է առանձնացնել Անդրեաս Շոքենհոֆի՝ 2012 թ. նոյեմբերին Բունդեսթագում առաջ քաշած խիստ քննադատական նախագիծը¹⁹:

¹⁸ Տե՛ս «Sozialdemokratische Partei Deutschlands» <https://www.spd.de/>, հասանելի է տա 19.03.2016 թ.:

¹⁹ Տե՛ս «Deutscher Bundestag. Die Beschlüsse des Bundestages», am 8. und 9. November, 2012 https://www.bundestag.de/dokumente/textarchiv/2012/41410731_kw45_angenommen_abgelehnt/209908#top, հասանելի է տա 19.03.2016 թ.:

Ազատ ժողովրդավարական կուսակցությունը²⁰ (Frei Demokratische Partei)՝ հանձին իր առաջնորդ, ԳԴՀ նախկին արտգործնախարար Գվիդո Վեսթերվելեի, խիստ բացասական դիրքորոշում ունի սոցիալ-դեմոկրատների ռուսամետ մոտեցման նկատմամբ: Նրանք դեմ էին նաև ատոմային էներգիայից հրաժարվելուն, որը համարում էին ՌԴ-ից Գերմանիայի էներգետիկ կախվածության նվազեցման միջոց:

Կանաչները շարունակում են քննադատել Ռուսաստանում մարդու իրավունքների վիճակը: Նրանք կասկածում են էներգետիկայի ոլորտում ռուսական և գերմանական ընկերությունների համագործակցությանը՝ դա խոչընդոտ համարելով այլընտրանքային էներգիայի աղբյուրները զարգացնելու գործում: Կանաչները միևնույն ժամանակ գերմանական բոլոր կուսակցություններից ամենասերտ կապերն ունեն Ռուսաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ:

Թեպետ Բունդեսթագում ներկայացված կուսակցությունների դիրքորոշումներն արտահայտում են Ռուսաստանի նկատմամբ Գերմանիայի քաղաքականության ընդհանուր պատկերը և մոտեցումները, սակայն գերմանական խորհրդարանը ավանդաբար ավելի շատ կենտրոնանում է ներքին, ի մասնավորի՝ տնտեսական հարցերի վրա: Արտաքին քաղաքականության մշակման հարցում առավել ազդեցիկ են կանցլերի գրասենյակը, արտաքին գործերի նախարարությունը, իսկ Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության դեպքում՝ նաև էկոնոմիկայի և տեխնոլոգիայի նախարարությունը:

Ինչպես նշում է Սթիվեն Սձաբոն²¹, 2005-2009 թթ.՝ ՔԺՄ-ի և սոցիալ-դեմոկրատների միջև կոալիցիոն կառավարության տարիներին, Անգելա Մերկելը ռուսական քաղաքականության մշակումը մեծ մասամբ հանձնեց Ֆրանկ Վալթեր Շթայնմայերին: Այս շրջանում է, որ նա առաջ քաշեց «Մերձեցում փոխկապակցման միջոցով» քաղաքական գիծը: 2009 թ. Մերկելի գլխավորած կուսակցությունը տպավորիչ հաղթանակ տարավ Բունդեսթագի ընտրություններում, և նոր ձևավորված ՔԺՄ-ի և ազատ դեմոկրատների կոալիցիոն կառավարության մեջ արտգործնախարարի պաշտոնը վստահվեց վերջիններիս առաջնորդ Գվիդո Վեսթերվելեին: Հատկանշական է, որ թեպետ նա քննադատությամբ է հանդես եկել ռուս-գերմանական հարաբերություններում «ռազմավարական գործընկերություն» եզրույթը կիրառելու վերաբերյալ, սակայն ինքը դա օգտագործել է 2009 թ. Ռուսաստան կատարած իր առաջին պաշտոնական այցի ժամանակ: 2011թ. մայիսին Վեսթերվելեն ստիպված էր թողնել կուսակցության նախագահի և կանցլերի տեղակալի պաշտոնները այն բանից հետո, երբ ազատ դեմոկրատները մի շարք պարտություններ կրեցին երկրամասերի ընտրություններում:

²⁰ Տե՛ս u Freie Demokratische Partei <https://www.fdp.de/>, հասանելի է առ 13.03.2016 թ.:

²¹ Տե՛ս u Szabo, S. F., նշվ. աշխ., էջ 42:

Կուսակցության առաջնորդի պաշտոնում Վեսթերվելեին փոխարինած Ֆիլիպ Ռյալերը գլխավորեց էկոնոմիկայի և տեխնոլոգիայի նախարարությունը:

Լաթվաքի սահմանման համաձայն՝ Գերմանիան՝ որպես աշխարհատնտեսական²² տերություն, իր արտաքին քաղաքականությունը մշակելիս մեծապես հաշվի է նստում նաև ձեռնարկատիրական շահերի հետ: Գերմանական ընկերությունների լոբբինգը զգալիորեն տարբերվում է զարգացած շուկայական տնտեսություն ունեցող այլ երկրների և մասնավորապես ամերիկյան կորպորացիաների լոբբինգից, որոնք անմիջական դրամական հատկացումներ են կատարում այս կամ այն քաղաքական թեկնածուի քարոզարշավի օգտին: Գերմանիայի դեպքում զգալիորեն սահմանափակված է մասնավոր հատվածի գումարների մուտքը քաղաքական դաշտ: Համեմատության համար բավական է ասել, որ 2013 թ. Բունդեսթագի ընտրությունների ժամանակ բոլոր կուսակցությունները միասին ծախսել են ընդամենը 93 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ ԱՄՆ-ի 2012 թ. նախագահական ընտրությունների քարոզարշավների վրա ծախսվել է շուրջ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար²³: Այնուամենայնիվ լոբբինգը իր դերը խաղում է գերմանական քաղաքականության մեջ. ըստ մի հետազոտության²⁴՝ միայն Բեռլինում գործում են լոբբինգով զբաղվող շուրջ 6000 կազմակերպություններ:

Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության մշակման գործում ամենաազդեցիկ կազմակերպություններից են Գերմանական տնտեսության արևելյան կոմիտեն (*Ost-Ausschuss der Deutschen Wirtschaft* (OA)) կամ Արևելաեվրոպական տնտեսական հարաբերությունների հանձնաժողովը, Գերմանա-ռուսական ֆորումը և Գերմանական արդյունաբերության համադաշնությունը: Նշվածներից կարևորագույնն է Արևելյան կոմիտեն: Այն յուրահատուկ միջնորդի դեր է խաղում գերմանական բիզնեսի առաջնորդների և քաղաքական գործիչների միջև, աջակցություն ցույց տալիս Ռուսաստանում և հետխորհրդային այլ երկրներում ներդրումներ կատարող կազմակերպություններին: Կոմիտեն միավորում է շուրջ 200 անդամ կազմակերպություններ: Երկար տարիներ հանձնաժողովը գլխավորում էր Կլաուս Մանգոլդը, ով եղել է «Դայվեր Քրայսլերի» կառավարման խորհրդի անդամ: 2010 թ.՝ նրա հեռանալուց հետո, Արևելյան կոմիտեի նախագահի պաշտոնը զբաղեցրեց Էփհարդ Քորդերը: Հանձնաժողովը ՌԴ-ի նկատմամբ ԳՖՀ-ի քաղաքականության մշակմանը մասնակցող այն եզակի դերակատարներից է, որը դրականորեն է ընդունել Վ. Պուտինի վերադարձը նախա-

²² Տե՛ս **Luttwak E.** From Geopolitics to Geo-economics: Logic of Conflict, Grammar of Commerce. The National Interest. № 20. 1990, էջ 17-23:

²³ Տե՛ս **Szabo, S. F.**, նշվ. աշխ., էջ 49:

²⁴ Տե՛ս **Kinkartz S.** Lobbyists Wield too much Power in Berlin. Deutsche Welle. 2013. <http://www.dw.com/en/lobbyists-wield-too-much-power-in-berlin/a-16907908>, հասանելի է ան 13.03.2016 թ.:

գահական աթոռին: Այն պաշտոնապես հայտարարել է, որ գերմանական բիզնես շրջանակները շատ են կարևորում կայունությունը, որը կապում են Պուտինի վերադարձի հետ: Կոմիտեի նախագահ Էքհարդ Քորդեսն անձամբ հաջողություն էր մաղթել Պուտինին նախագահական ընտրություններում:

2013-2014 թթ. ուկրաինական ճգնաժամի ազդեցությունը Գերմանիայում դիրքորոշումների փոփոխության վրա

Թերևս ամենահետաքրքրական փոխակերպումներից է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ: Շրյոդերի ժամանակվա բացարձակ ռուսամետ գծից և «լուծություն հանուն գազի» կուրսից առաջին նահանջը կարելի է համարել 2012 թ. նոյեմբերին գերմանական Բունդեսթագում անցկացված՝ ՌԴ-ի ներքին քաղաքականության մի շարք կողմերը քննադատող նախագծի վերաբերյալ սոցիալ-դեմոկրատների ձեռնպահ քվեարկությունը: Ուկրաինական ճգնաժամը առավել մոտեցրեց սոցիալ-դեմոկրատների դիրքորոշումն իշխող քրիստոնյա-դեմոկրատների տեսակետին: Մրա արտահայտությունն էր 2014 թ. դեկտեմբերի 9-ին ՌԴ-ի Եկատերինբուրգի համալսարանում Շթայնմայերի ելույթը, որի ժամանակ նա մասնավորապես նշեց. «Ռուսաստանը ներկայումս իր շահերը սահմանում է Եվրոպայից տարանջատվելու միջոցով: Ամեն դեպքում մեզ թվում է, որ ԵՄ-ն Մոսկվայում դիտվում է ավելի շատ որպես աշխարհաքաղաքական հակառակորդ, քան գործընկեր: Միննույն ժամանակ Եվրոպայում մտահոգություն կա, որ Ռուսաստանը ձգտում է խաղալ գլոբալ քաղաքական դեր, որը գնալով ավելի քիչ հիմնված կլինի գործընկերության և ավելի շատ ռազմական ուժի վրա»²⁵:

Կանաչների կուսակցությունը ավանդաբար բացասական դիրքորոշում ուներ ՌԴ-ում մարդու իրավունքների և ընդհանրապես ռուս-գերմանական հարաբերություններում ընդհանուր արժեքների բացակայության վերաբերյալ: Ուստի ուկրաինական ճգնաժամը արմատական փոփոխություն չառաջացրեց նրանց դիրքորոշման մեջ, այլ միայն խորացրեց իշխող տրամադրությունները: Կանաչները մասնավորապես նշում են, որ ընդհանուր արժեքների բացակայության պատճառով չի կարելի ռուս-գերմանական հարաբերությունների մակարդակը անվանել ռազմավարական գործընկերություն:

Գերմանիայի ձեռներեցների մոտեցումները ուկրաինական ճգնաժամի ընթացքում բավականին ուշագրավ են մի շարք առումներով: Նախ ասենք, որ գրականության մեջ լուրջ տարաձայնություններ կան

²⁵ «Rede von Aussenminister Frank-Walter Steinmeier an der Ural Federal University», Jekaterinburg: «Deutsche und Russen – Vergangenheit, Gegenwart, Zukunft», 2014. http://www.auswaertiges-amt.de/DE/Infoservice/Presse/Reden/2014/141209-BM_Jekaterinburg.html, հասանելի է առ 13.03.2016 թ.

երկրի արտաքին քաղաքականության, ի մասնավորի՝ Ռուսաստանի նկատմամբ տարվող քաղաքականության վրա գերմանական բիզնեսի ունեցած ազդեցության վերաբերյալ: Երկրորդ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տնտեսական պատժամիջոցների հարցում գերմանական ձեռներեցների շրջանում առկա տարակարծություններին:

Տնտեսական պատժամիջոցների նկատմամբ սկզբից ևեթ բավականին արմատական դիրք զբաղեցրեց Արևելյան կոմիտեն: Դրա նախագահ Էքհարդ Քորդեսը կարծում էր, որ քաղաքականությունը չպետք է միջամտի տնտեսական հարաբերություններին՝ պատճառաբանելով, որ Ռուսաստանում ներկայացված են շուրջ 6000 գերմանական ընկերություններ, ուստի պատժամիջոցներն ու հարաբերությունների վատթարացումը կարող են վտանգել շուրջ 350 000 աշխատատեղ²⁶:

Պատժամիջոցների հարցում լուրջ տարաձայնություններ կային Արևելյան կոմիտեի, Գերմանական արդյունաբերական ֆեդերացիայի (Bund der Deutschen Industrie) և Գերմանական արևելաեվրոպական տնտեսական միության (Osteuropaverein der Deutschen Wirtschaft) միջև: Գերմանական արդյունաբերական ֆեդերացիայի գլխավոր գործադիր տնօրեն Մարկուս Քերբերը 2014 թ. մայիսին հայտարարել է. «Մենք ընդունում ենք *(տնտեսական շահերի նկատմամբ - Դ. Ս.)* քաղաքականության գերակայության սկզբունքը»²⁷: Նույն կարծիքին էր ֆեդերացիայի նախագահ Ուլրիխ Գրիլլոն, ով դեռևս 2014 թ. մարտին նշել էր, որ ամբողջովին սատարում է կանցլերի քաղաքականությանը ուկրաինական ճգնաժամի հարցում: «Պատժամիջոցները, անշուշտ, կանդրադառնան Ռուսաստանի հետ այս *(տնտեսական - Դ. Ս.)* հարաբերությունների վրա, բայց ինձ համար միջազգային իրավունքը վեր է ամեն ինչից», - ասել էր նա:

Ինչ վերաբերում է Ռուսաստանում և Եվրասիայում տնտեսական շահեր ունեցող շուրջ 300 ընկերություններ միավորող Գերմանական արևելաեվրոպական տնտեսական միությանը, ապա դրա նախագահ Մարկուս Ֆելսները նշել է հետևյալը. «Իհարկե կան բողոքներ, բայց այնուամենայնիվ ընկերությունների մեծ մասը կողմ է պատժամիջոցներին»²⁸:

Գերմանական բիզնես շրջանակների՝ պատժամիջոցների դեմ այսպիսի ոչ միատարր կեցվածքը Ադոմիթը բացատրում է Ռուսաստանի՝ գերմանական տնտեսության համար ունեցած նվազ կարևորությամբ: Այսպես, նա նշում է, որ ՌԴ-ն, չի մտնում ԳՖՀ-ում արտադրված ապ-

²⁶ St' u «Wirtschaftliche Folgen im Krim-Konflikte bereits spürbar», T-online.de, 2014, http://www.t-online.de/wirtschaft/id_68605402/wirtschaftliche-folgen-im-krim-konflikt-schon-spuerbar.html, հասանելի է առ 13.03.2016 թ.

²⁷ «Gesprachskanäle müssen offen bleiben», Handelsblatt, 2014, <http://www.genios.de/presse-archiv/artikelzw/HB/20140520/-gesprachskanaele-muessen-offen-bl/7F10287A-AD09-4324-A302-A5B1E6DC7694.html>, հասանելի է առ 13.03.2016 թ.

²⁸ «Für die Wirtschaft ist Polen wichtiger als Russland» Frankfurter Allgemeine Sonntagszeitung, 2014. <http://www.genios.de/presse-archiv/artikel/FAS/20141026/-fuer-die-wirtschaft-ist-polen-wich/SD2201410264383185.html>, հասանելի է առ 13.03.2016 թ.

րանքները ներկրող առաջատար տասը երկրների ցանկի մեջ²⁹: Ընդ որում՝ ընդունելով, որ Գերմանիայի՝ գազի ներկրումը ՌԴ-ից կազմել է ընդհանուր գազի ներկրման 39 տոկոսը՝ Ադամիթը նշում է, որ ՌԴ-ն իր հերթին չափազանց բարձր կախվածություն ունի էներգակիրների արտահանումից, և մատակարարումների խափանումը ինքնակործան քայլ կլինի Կրեմլի համար³⁰: Միննույն ժամանակ 2014 թ. ԳՖՀ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ) ՌԴ-ում կազմել են մոտ 20 մլրդ եվրո³¹, ինչը բավականին փոքր գումար է գերմանական ներդրողների համար և ըստ էության համեմատելի է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի՝ Ռուսաստանի համեմատ փոքր երկրներում արված ՕՈւՆ ծավալների հետ:

Էներգետիկ կախվածության գործոնն ու տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը

Խոսելով տնտեսական պատժամիջոցներ կիրառելու որոշման վրա ազդող գործոնների մասին՝ հարկ է նշել, որ վերլուծաբանները առանձնացնում էին երկու գործոններ, որոնք կարող էին սահմանափակել ԳՖՀ քաղաքական դեկավարության գործունեության ազատությունը: Առաջինը բիզնես շրջանակների չափազանցված ազդեցությունն ու պատժամիջոցների դեմ միասնական դիրքորոշման մասին սխալ պատկերացումն էր:

Երկրորդ գործոնը, որ առանձնացնում էին վերլուծաբանները, ԳՖՀ-ի՝ ՌԴ-ից ունեցած էներգետիկ կախվածությունն է, որը պետք է որ կանխեր պատժամիջոցների կիրառումն ու հարաբերությունների վատթարացումն ընդհանրապես: Այս առումով հետաքրքիր է ստուգել *էներգետիկ կախվածության և ՌԴ-ին նպաստավոր քաղաքական դիրքորոշում զբաղեցնելու* միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Այդ նպատակով առաջ է քաշվում հետևյալ վարկածը. **ԵՄ անդամ այն երկրները, որոնց էներգիայի ընդհանուր սպառման մեջ ՌԴ-ից ներկրված գազը ավելի մեծ մասնաբաժին է կազմում, ավելի բարենպաստ քաղաքականություն են վարում Ռուսաստանի նկատմամբ:**

ՌԴ-ից ներկրված գազի ծավալների և դրանց՝ ԵՄ անդամ երկրների՝ էներգիայի ընդհանուր սպառման մեջ զբաղեցրած մասնաբաժինների վերաբերյալ տվյալները վերցված են ԵՄ հանձնաժողովի զեկույցից³²: ԵՄ անդամների՝ Ռուսաստանի նկատմամբ զբաղեցրած դիրքորոշումները կողավորվել են՝ հիմք ընդունելով Մարկ Լեոնարդի և Նի-

²⁹ Տե՛ս **Adomeit, H.** *German-Russian Relations: Change of Paradigm versus «Business as Usual»*, s.l.: Study Committee for Franco-German Relations, 2015, էջ 17:

³⁰ Տե՛ս նույն տեղը:

³¹ Տե՛ս «*Russische Föderation*», Ostausschuss.de 2014, www.ost-ausschuss.de/russische-foederation, հասանելի է առ 19.03.2016 թ.:

³² Տե՛ս **Commission of the European Communities.** *Assessment Report of Directive 2004/67/EC on Security of Gas Supply*, Brussels, 2009:

կու Պոպեսկուի 2007 թ. հրատարակած հայտնի աշխատության³³ մեջ կատարված դասակարգումը: Հեղինակները ԵՄ երկրները բաժանել են հինգ հիմնական խմբերի. 1. «նոր Սառը պատերազմի մարտիկներ»՝ Լեհաստան և Լիտվա, 2. «սառը պրագմատիկներ»՝ Չեխիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Լատվիա, Նիդերլանդներ, Շվեդիա, Ռումինիա և Մեծ Բրիտանիա, 3. «քարեկամական պրագմատիկներ»՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Սլովակիա, Սլովենիա և Պորտուգալիա, 4. «ռազմավարական գործընկերներ»՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա և Իսպանիա, 5. «տրոյական ձիեր»՝ Հունաստան և Կիպրոս: 1-ից 5-րդ կատեգորիաները կազմում են Ռուսաստանի նկատմամբ քաղաքական վերաբերմունքի ողջ եվրոպական սպեկտրը, որի վրա առաջին խմբի երկրները զբաղեցնում են խիստ բացասական դիրքորոշում, իսկ վերջին խմբի պետությունները՝ այդ սպեկտրի եզրային դրական հատվածը:

Նշված երկրներից մի քանիսի դիրքորոշումները փոփոխվել են՝ հատկապես վերջին տարիների ուկրաինական ճգնաժամի պատճառով, և ներկայումս տեղավորվում են այլ կատեգորիայի մեջ: Մակայն վերը առաջարկված վարկածն ստուգելու տեսանկյունից մեզ հետաքրքրում է ժամանակի որևէ կոնկրետ պահի (տվյալ դեպքում 2007 թ.) այդ երկրների դիրքորոշման և նույն տարում դրանց՝ ՌԴ-ից ունեցած էներգետիկ կախվածության միջև կապի առկայության հարցը:

Վարկածը ստուգելու համար կիրառվել է խաչաձև աղյուսակների (կրոստաբուլյացիա) վիճակագրական մեթոդը՝ SPSS 22.0.0.0 ծրագրային փաթեթի կիրառմամբ, որի արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 1

ԵՄ անդամ երկրների՝ ՌԴ նկատմամբ դիրքորոշումն ու էներգետիկ կախվածությունը

		ՌԴ-ից ներկրած գազի տոկոսը էներգիայի ընդհանուր սպառման մեջ			Ընդամենը
		1-10 %	11-20 %	21 % և ավել	
ՌԴ նկատմամբ դիրքորոշման կատեգորիա	1	1	0	1	2
	2	6	2	1	9
	3	8	1	1	10
	4	3	1	0	4
	5	2	0	0	2
Ընդամենը		20	4	3	27

Տողերում նշված են ԵՄ երկրների՝ վերը թվարկված 5 կատեգորիաները ըստ ՌԴ-ի նկատմամբ զբաղեցրած դիրքորոշման: Մյուսակներում բերված է երկրների դասակարգումը ըստ Ռուսաստանից ներ-

³³ See u Leonard, M. & Popescu, N. *A Power Audit of EU-Russia Relations*, s.l.: European Council on Foreign Affairs. 2007:

կրվող գազի՝ պետության՝ ընդհանուր էներգիայի սպառման մեջ զբաղեցրած տոկոսային մասնաբաժնի: Այդ երկու խմբավորման եղանակների հատույթներին համապատասխանող երկրների քանակը տրված է աղյուսակի վանդակներում:

Փիրսոնի χ^2 -թեստը վերադարձնում է 0.734 արժեքը, ինչը վկայում է այն մասին, որ գրոյական վարկածը մերժելու դեպքում սխալվելու հավանականությունը գերազանցում է 70 %: Հասարակական գիտությունների մեջ ընդունված են գրոյական վարկածի մերժման դեպքում սխալվելու հավանականության 1%, 5% և 10% սահմանային արժեքները: Մեր դեպքում գերազանցվել է ամենաբարձր թույլատրելի մակարդակը: Հետևաբար մերժվում է մեր կողմից առաջ քաշված այլընտրանքային վարկածը առ այն, որ էներգետիկ կախվածությունը ՌԴ-ից դրդում է ԵՄ անդամ որևէ երկրի ավելի բարենպաստ քաղաքական դիրքորոշում զբաղեցնել Ռուսաստանի նկատմամբ:

Էներգետիկ կախվածության ազդեցությունը Ռուսաստանի նկատմամբ քաղաքական դիրքորոշման վրա չափազանցված է հատկապես Սձարոյի աշխարհատնտեսական մոտեցման մեջ³⁴: Վերը նշված աշխատության մեջ նա չափից ավելի կարևորում է ձեռներեց շրջանակների լոբբինգի ազդեցությունը՝ անտեսելով մյուս գործոնները, ինչպես օրինակ՝ ընտրագանգվածի դիրքորոշումները այս կամ այն արտաքին քաղաքական հարցի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով նրա մի շարք կանխատեսումներ կապված տնտեսական պատժամիջոցների շուտափույթ վերացման հետ, չիրականացան:

Բացի այն բանից, որ էներգետիկ և մասնավորապես գազի ներկրումից կախվածությունը խիստ սահմանափակ ազդեցություն ունի եվրոպական երկրների՝ Ռուսաստանի նկատմամբ արտաքին քաղաքական դիրքորոշման վրա, հարկ է նաև նշել, որ հատկապես Գերմանիայի պարագայում վերջին տարիներին կա դրա նվազման միտում: Այսպես, եթե 1997 թ. Ռուսաստանից գազի ներկրումը Գերմանիայի ընդհանուր գազի ներկրման մեջ 40.4 % էր, ապա 2005 թ.՝ 41.7 %³⁵: 2008 թ. այս ցուցանիշն աճել է՝ հասնելով 43.9 %-ի³⁶: Սակայն 2008 թ. ռուս-վրացական պատերազմից և 2009 թ. գազային ճգնաժամից հետո Գերմանիան սկսեց նվազեցնել Ռուսաստանից էներգետիկ կախվածությունը, և 2014 թ. գազի միայն 38.6 % էր ներկրվում ՌԴ-ից³⁷: Այս միտումը պահպանվելու դեպքում էներգետիկ կախվածության գործոնի դերը ռուս-գերմանական հարաբերություններում միայն նվազելու է:

Կատարված վերլուծությունից կարող ենք եզրակացնել.

1. Քաղաքական մոտեցումներում մինչև ուկրաինական ճգնաժա-

³⁴ Տե՛ս **Szabo, S. F.**, նշվ. աշխ.:

³⁵ Տե՛ս **«Bundesamt für Wirtschaft und Ausfuhrkontrolle»**, «*Entwicklung der Erdgaseinfuhr in die Bundesrepublik Deutschland, 1998-2013*», Berlin, 2014:

³⁶ Տե՛ս նույն տեղը:

³⁷ Տե՛ս նույն տեղը:

մը զգալի տարակարծություն էր նկատվում մի կողմից ՔԺՄ մի մասի ու Կանաչների և մյուս կողմից սոցիալ-դեմոկրատների միջև: Ճգնաժամը առավել մոտեցրեց նրանց դիրքորոշումները:

2. Միակարծիք չէ նաև Գերմանիայի գործարար աշխարհը: Հիմնական տնտեսական միություններից Արևելյան կոմիտեն բացասական դիրքորոշում ունի պատժամիջոցների նկատմամբ և կողմ է դրանց վերացմանը, մինչդեռ Գերմանական արդյունաբերական ֆեդերացիայի և Գերմանական արևելաեվրոպական տնտեսական միությունների անդամների մեծ մասը կողմ է դրանց:

3. Հարկ է նշել, որ միևնույն ժամանակ էներգետիկ կախվածության գործոնը որոշիչ դեր չի խաղում եվրոպական երկրների Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշում թելադրելու հարցում: Ուստի և պատահական չէ, որ Գերմանիայի ՌԴ-ից էներգետիկ կախվածության բարձր աստիճանը չդարձավ զսպող գործոն տնտեսական պատժամիջոցների կիրառման հարցում:

4. Հետաքրքրական է նաև այն, որ 2008 թ.-ից ի վեր Գերմանիան նվազեցնում է իր էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից՝ գազի ներկրման մեջ Ռուսաստանի մասնաբաժինը կրճատելով ավելի քան 10 %-ով կամ ընդհանուր գազի ներկրման շուրջ 5 %-ով:

Բանալի բառեր – *Գերմանիա, Ռուսաստան, տնտեսական պատժամիջոցներ, էներգետիկ կախվածություն, խաչաձև աղյուսակներ*

ДАВИД САРКИСЯН – *Российско-германские отношения на современном этапе.* – В статье исследуется роль ведущих акторов германской внешней политики по отношению к России. Проанализированы позиции крупнейших партий ФРГ, основных членов правительства и бизнес-кругов; а также влияние украинского кризиса на изменение их подходов. Методом кросстабуляции продемонстрировано, что фактор энергетической зависимости не ограничивает применение экономических санкций.

Ключевые слова: *Германия, Россия, экономические санкции, энергетическая зависимость, кросстабуляция*

DAVID SARKISYAN – *Contemporary Period of Russian-German Relations.* – This paper analyzes the role of key actors in the making of German foreign policy towards Russia. The positions of leading parties on German political spectrum, top government figures and business circles are presented. The effects of the Ukrainian crisis on the shift in the approaches of those actors are discussed. The differences in the positions of top German business unions on sanctions policy are explored. Hypothesis testing and cross-tabulation method are applied to demonstrate the limited nature of energy dependence factor in constraining the application of economic sanctions.

Key words: *Germany, Russia, economic sanctions, energy dependence, cross-tabulation*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Խորհրդային Միության կազմալուծումից հետո Հայաստանի Հանրապետությունը հետխորհրդային նորանկախ երկրներից շատերի նման սկսեց քաղաքական համակարգի ժողովրդավարացման, քաղաքական նոր իրողություններին համապատասխան պետական շինարարության ու ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացը, որը ՀՀ-ում այսօր էլ դեռ շարունակվում է: Այդ առումով կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարությունը դեռևս իր կայացման ու կայունացման փուլում է: Միաժամանակ պետք է նշել, որ մեր հանրապետությունում այդ գործընթացն արագ ու արդյունավետ վերջնակետի հասցնելու գործում կարևոր դերակատարում կարող են ունենալ երկխոսության պրակտիկայի ներդրումն ու քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորումը: Այդ իսկ պատճառով էլ ժողովրդավարության անցման համատեքստում քաղաքական երկխոսության հիմնախնդրի ուսումնասիրումը գիտագործնական հույժ կարևոր նշանակություն ունի:

Քաղաքագիտության շրջանակներում ժողովրդավարության անցումների թեմատիկային նվիրված հսկայածավալ հետազոտություններ են իրականացվել, սակայն այդ գործընթացում քաղաքական երկխոսության դերի բացահայտմանը քչերն են անդրադարձել¹: Այդ առումով հատկապես արժեքավոր են Ա. Պշտրսկու դիտարկումները: Ուսումնասիրելով Լատինական Ամերիկայում ու Արևելյան Եվրոպայում բռնկված «ժողովրդավարական տենդի» տարածման պատճառներն ու գործոնները՝ նա պնդում է, որ հատկապես կայուն են այն ժողովրդավարությունները, որոնք կարողանում են բնական ճանապարհով, առանց բռնության ու հարկադրանքի ապահովել քաղաքական բոլոր ուժերի համաձայնությունը²: Իսկ որպեսզի համաձայնությունը կայանա, ժողովրդավարությունը պետք է կառուցի սոցիալ-քաղաքական ինստիտուտների այն-

¹ Տե՛ս **Խ. Գալստյան**, Քաղաքական երկխոսության հաղորդակցման առանձնահատկությունները // Բանբեր Երևանի Համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Եր., 2015, № 1, էջ 35-48:

² Տե՛ս **Ա. Պշտրսկու**. Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. М., 2000, էջ 11:

պիսի համակարգ, որտեղ բոլոր քաղաքական ուժերը արդար մրցակցության պայմաններում «ընտրողների ուղեղները նվաճելու» հավասար հնարավորություններ կստանան³: Մակայն միաժամանակ, նշում է. «Յուրաքանչյուր ավտորիտար կառավարումից ժողովրդավարականին անցնելու առանցքային պահը շեմի հաղթահարումն է, որից հետո ոչ ոք չի կարող միջամտել ու հետ շրջել սահմանված կանոնները պահպանող գործընթացը»⁴: Ըստ քաղաքագետի՝ ժողովրդավարական պետության ճանապարհին ամենավճռորոշ քայլը իշխանության փոխանցումն է մարդկանց խմբից սահմանված կանոններին:

Ա. Պշտոսկու մատնանշած «շեմի հաղթահարումն» ու «սահմանված կանոններին» իշխանության փոխանցումը հնարավոր է ժողովրդավարության համախմբման պարագայում, որը շատ հետազոտողներ համարում են ժողովրդավարական անցման վերջնական փուլը: Անցման հարացույցը ընդհանրապես ենթադրում է, որ ժողովրդավարական անցումները բազմափուլ գործընթաց են, որոնք կարող են տեղի ունենալ ինչպես գծային⁵, այնպես էլ ոչ գծային զարգացման ճանապարհով, ժողովրդավարական ալիքների⁶ տեսքով և այլն:

Ժողովրդավարական անցման գծային մոդելի հիմնական՝ ունիվերսալիզմի, գլոբալիզացիայի, փուլայնության, զարգացման գծային վեկտորների կիրառման սկզբունքների համաձայն՝ ժողովրդավարական քաղաքական համակարգին անցումը ենթադրում է միասնական, տիպական փուլեր, որոնք ընդգրկում են ավտորիտարիզմի էրոզիայի և քայքայման, վարչակարգի ազատականացման, ինստիտուցիոնալ ժողովրդավարության, ոչ համախմբված ժողովրդավարության և ժողովրդավարության համախմբման փուլերը⁷: Ինչպես նշում է Ա. Մելվիլը, ժամանակակից քաղաքական փոխակերպումների՝ որպես միասնական գծային վեկտորի ընկալումը որոշակի առումով կոմունիստական կուսակցության մանիֆեստի ձևափոխված հակակոմունիստական տարբերակն էր, համաձայն որի՝ բոլոր երկրները վաղ թե ուշ կհանգեն ազատական ժողովրդավարության հաղթարշավին⁸:

Ս. Հանտինգտոնի ժողովրդավարական ալիքների տեսությունը նույնպես գծային կարելի է համարել, քանի որ հեղինակը, ժողովրդավարության տարածումն աշխարհում նկարագրելով ալիքների տեսքով, միաժամանակ ընդունում է այդ գործընթացի աճման կարգով ընթանալու դինամիկան: Բացի դրանից, ինչպես նշում է Լ. Սմորգունովը, «եր-

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Նույն տեղում, էջ 33:

⁵ Տե՛ս **Мельвил А.** Демократические транзиты // "Политология: Лексикон". М., 2007, էջ 123:

⁶ Տե՛ս **Хантингтон С.** Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003:

⁷ Տե՛ս **Бродовская Е., Королев П.** Демократический транзит на постсоветском пространстве: подходы к определению, модели, этапы // "Известия ТГУ". Гуманитарные науки. Тула, 2013, 2, էջ 10-16:

⁸ Տե՛ս **Мельвил А.**, նշվ. աշխ., էջ 123:

րորդ ալիքի» համատեքստում ժողովրդավարական անցումը բնորոշվում է որպես գլոբալ գործընթաց, որն իր հերթին նշանակում է, որ ժողովրդավարական անցման վրա ազդում են ոչ միայն ազգային, պատմական, տնտեսական, սոցիալական ու մշակութային նախադրյալները, այլ նաև միջազգային գործոնները⁹: Հանտինգտոնը ժողովրդավարացման ալիքը սահմանում է որպես որոշակի ժամանակահատվածում ոչ ժողովրդավարականից ժողովրդավարականին անցման գործընթաց, որի դեպքում ժողովրդավարության անցնող պետությունների քանակը էականապես գերակշռում է հակառակ ուղղությամբ ընթացողների քանակին¹⁰: Այսպես, ըստ Ս. Հանտինգտոնի, ժողովրդավարացման առաջին ալիքի արմատները գալիս են ամերիկյան և ֆրանսիական հեղափոխություններից, սակայն իրական ազգային ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումը նա համարում է XIX դարին բնորոշ ֆենոմեն: Այդ առումով ժողովրդավարացման առաջին ալիքը սկիզբ է առնում 1820 թ.-ից և տևում է մինչև 1922-1942 թթ., երբ եվրոպական մի շարք երկրներում, մասնավորապես՝ Իտալիայում, հաստատվում են ամբողջատիրական կարգեր, շատ երկրներ ժողովրդավարական զարգացման տեսանկյունից տեղատվություն են ապրում կամ հետընթաց արձանագրում¹¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմը սկիզբ է դնում ժողովրդավարացման երկրորդ ալիքին, որը տևում է 1943-1962 թթ., իսկ հետընթացը՝ 1958-1962 թթ.: Այդ ժամանակահատվածում հատկապես Լատինական Ամերիկայում, Ասիական տարածաշրջանում, Միջերկրածովյան ավազանի երկրներում և Աֆրիկայում նկատվող ժողովրդավարական բարեփոխումները կտրուկ անկում են ապրում, որի հետեվանքով այդ երկրների զգալի մասում նորից հաստատվում են ավտորիտար վարչակարգեր: Ինչպես նշում է Ս. Հանտինգտոնը, 1960-ականների սկզբներին ժողովրդավարացման երկրորդ ալիքը սպառել էր իրեն, իսկ վարչակարգերի անցումով պայմանավորված՝ քաղաքական զարգացումները ստացել էին հստակ ընդգծված ավտորիտար բնույթ¹²: Ուստի, ժողովրդավարությունից նահանջը տպավորիչ արդյունքներ էր արձանագրել, իսկ 1975 թ. դրությամբ շուրջ 38 երկրներում տեղի էին ունեցել պետական հեղաշրջումներ¹³:

Ժողովրդավարացման երրորդ ալիքն ավելի լայն աշխարհագրություն է ընդգրկում: Այն սկիզբ է առնում Հունաստանում (1974 թ.), Պորտուգալիայում (1975 թ.), Բսպանիայում (1977 թ.) ռազմականացված ավտորիտար վարչակարգերի տապալումից, տարածվում է Լատինական Ամերիկայով, Ասիական տարածաշրջանով, այնուհետև ձևագնդի նման գլորվում Կենտրոնական և Արևելյան Եվրոպա՝ ընդգրկելով նաև

⁹ Տե՛ս Կանտինգտոն Ս., նշվ. աշխ., էջ 26:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 27:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 30:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 31:

նախկին Խորհրդային Միության երկրները: Ժողովրդավարացման ալիքի նման լայն ծավալները Հանտինգտոնը բացատրում է մի շարք հանգամանքներով: Նախևառաջ, ըստ հեղինակի, այդ գործընթացում որոշակի դերակատարում ունի ավտորիտար ռեժիմների ապալեզիտիմացումը, երբ տվյալ հասարակության առջև ծառայած հիմնական խնդիրները երկար ժամանակ լուծումներ չեն ստանում, ինչն ուղեկցվում է տնտեսության ոլորտում կամ էլ ռազմական ձեռնարկումներում անհաջողությունների շղթայով: Երրորդ ալիքի տարածման վրա մեծ ազդեցություն են ունեցել նաև XX դարի 60-ականների գլոբալ տնտեսական աճի տեմպերը, երբ աշխարհի շատ երկրներում նկատվում են կենսամակարդակի, կրթության որակի բարձրացում ու քաղաքային միջին խավի ձևավորում: Ընդհանրապես, այս կամ այն երկրում ժողովրդավարության հաստատումը շատ հեղինակներ ուղղակիորեն կապում են տնտեսական զարգացման աստիճանի հետ¹⁴:

Երրորդ կարևոր հանգամանքը, որով պայմանավորվում է ժողովրդավարացման երրորդ ալիքի լայն տարածումը, Ս. Հանտինգտոնը տեսնում է կաթոլիկ եկեղեցու գործունեության մեջ նկատվող կտրուկ փոփոխություններում, որոնք տեղ գտան 1963-1965 թթ. Վատիկանի Երկրորդ վեհաժողովում, երբ ազգային եկեղեցիները Status Quo-ի պահպաններից վերածվեցին ավտորիտարիզմի հակառակորդների՝ հանդես գալով սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեփոխումների օգտին¹⁵: Իհարկե կաթոլիկ եկեղեցու դերը ավանդաբար մեծ էր Լատինական Ամերիկայի երկրներում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում (մասնավորապես՝ Լեհաստանում*), իսկ օրինակ՝ հետխորհրդային երկրների ժողովրդավարական անցման համատեքստում այն անհամեմատ թույլ էր, կամ ընդհանրապես արտահայտված չէր:

Ժողովրդավարացման երրորդ ալիքի համատեքստում Հանտինգտոնը մեծ կարևորություն է տալիս նաև արտաքին դերակատարների քաղաքականության փոփոխություններին, ինչպիսիք էին, օրինակ, Եվրոպական ընդլայնման քաղաքական կուրսը, ԱՄՆ-ի կողմից մարդու իրավունքների և ժողովրդավարության տարածման քարոզչությունը, ինչպես նաև Մ. Գորբաչովի հռչակած վերակառուցման և հրապարակայնության քաղաքականությունը: Եվ վերջապես, ըստ Հանտինգտոնի, ոչ պակաս կարևոր էր նաև «ձնագնդի» էֆեկտը, որն էլ ավելի էր ուժեղանում միջազգային հաղորդակցության համապատասխան միջոցների ակտիվ կիրառմամբ՝ շատ երկրների համար դառնալով «ոգեշնչման» օ-

¹⁴ St. u. **Downs A.** An Economic Theory of Democracy. N.Y., 1957, **Lipset S.** Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy // Empirical Democratic Theory. Chicago, 1969, **Jackman R.** On the relations of Economic Development to Democratic Performance // American Journal of Political Science, 1973, vol. 17, № 1:

¹⁵ St. u. **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 57:

* Հիշենք թեև ուզ այն փաստը, որ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Հովհաննես Պողոս II պապը ծագումով լեհ էր, որի հեղինակությունը բավականաչափ մեծ էր ինչպես լեհական իշխանության, այնպես էլ ընդդիմության ճամբարում:

րինակ: «Ձնագնդի» էֆեկտը հատկապես վառ արտահայտվեց Արևելյան Եվրոպայում այն բանից հետո, երբ Խորհրդային Միությունը համակերպվեց Լեհաստանում 1989 թ. օգոստոսին ոչ կոմունիստական կուսակցության ներկայացուցիչների իշխանության գալու փաստի հետ, որից հետո այդ վարակը տարածվեց նաև Հունգարիայում (1989 թ. սեպտեմբեր), Արևելյան Գերմանիայում (1989 թ. հոկտեմբեր), Չեխոսլովակիայում և Բուլղարիայում (1989 թ. նոյեմբեր), Ռումինիայում (1989 թ. դեկտեմբեր)¹⁶: Ըստ Հանտինգտոնի՝ ձնագնդի ավելանալը ազդում է նաև անցման արագության (ռեդուկցիա) վրա. եթե Լեհաստանում ժողովրդավարացումը տևեց տասը տարի, ապա Հունգարիայում՝ տասը ամիս, Արևելյան Գերմանիայում՝ տասը շաբաթ, Չեխոսլովակիայում՝ տասը օր, իսկ Ռումինիայում՝ տասը ժամ¹⁷:

Ժողովրդավարական անցման վերոնշյալ գործոններից յուրաքանչյուրը յուրովի ազդեցություն է ունեցել երրորդ ալիքի տարածման վրա: Որոշ երկրների համար վճռորոշ կարելի է համարել իշխանության լեգիտիմության ճգնաժամը, ումանց համար՝ տնտեսական աճի տեմպերը, մյուսների համար՝ կրոնական, եկեղեցական բարեփոխումների ազդեցությունը, վերջապես այլոց համար՝ վերը նշված այս կամ այն գործոնները կամ դրանք բոլորը միասին վերցրած: Իսկ կա՝ ավելի ընդհանրական օրինաչափություն ժողովրդավարական անցման երրորդ ալիքի երկրների համար: Պարզվում է՝ կա. Ս. Հանտինգտոնի դիպուկ բնորոշմամբ դա կոչվում է ժողովրդավարացման երրորդ ալիքի համախտանիշ (սինդրոմ)¹⁸: Բանն այն է, որ, աշխարհագրական ընդգրկման աննախադեպ ծավալներով հանդերձ, ժողովրդավարացման երրորդ ալիքն աչքի ընկավ բռնության անհամեմատ փոքրածավալ դրսևորումներով: Չհաշված առանձին բացառությունները (Ռումինիա, Պորտուգալիա)՝ ժողովրդավարությունը XX դարի վերջին տարածվում էր բանակցությունների, փոխզիջումների ու համաձայնությունների, խաղաղ ցույցերի և ընտրությունների միջոցով, վիճահարույց հարցերի ոչ բռնի լուծելու տեխնոլոգիաների օգնությամբ: Հանտինգտոնի դիտարկման համաձայն՝ ժողովրդավարացման գործընթացին նպաստեցին կառավարության և ընդդիմության այն լիդերները, ովքեր համարձակություն ունեցան խախտելու Status Quo-ն, ովքեր կարողացան այսրոպեական շահերից վեր դասել ժողովրդավարության երկարաժամկետ կարիքները, այսինքն՝ չընկան սադրանքների հետևից, այլ իսկական իմաստնություն դրսևորեցին՝ ընդունելով, որ քաղաքականության մեջ ոչ ոք ճշմարտությանը հավակնելու մենիշխան իրավունքներ չունի¹⁹: Փոխզիջում, ընտրություններ, ոչ բռնություն. սրանք են,

¹⁶ Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 117:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 118:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 179-225:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 180:

ըստ Ս. Հանտինգտոնի, ժողովրդավարացման երրորդ ալիքի հիմնական համախոսանիշները: Դրանցից առնվազն երկուսը՝ փոխզիջումներն ու քաղաքական պայքարի ոչ բռնի մեթոդները, ուղղակիորեն վերաբերում են մեր ուսումնասիրության հիմնական առարկային՝ քաղաքական երկխոսության հիմնախնդրին:

Այժմ ավելի մանրամասն դիտարկենք վերոնշյալ գործոնների ազդեցությունը ժողովրդավարացման երրորդ ալիքի վրա: Այո՛, ճիշտ է Հանտինգտոնը, երբ նշում է, որ երրորդ ալիքը ամենևին էլ երկարաժամկետ պարտիզանական պայքարի կամ էլ քաղաքացիական պատերազմների հետևանք չէ, և միայն որոշ բացառիկ դեպքերում է, որ այն ուղեկցվել է զինված հեղաշրջումներով, ինչպես օրինակ՝ Պորտուգալիայում և Ռումինիայում: Առավել հաճախ ժողովրդավարական անցումները, հատկապես երրորդ ալիքի համատեքստում, բացահայտ բանակցությունների կամ ծածուկ (լատենտ) համաձայնությունների արդյունք էին, ընդ որում՝ բանակցությունների նախաձեռնությամբ հանդես էին գալիս և՛ «վերսները», և՛ «ներքները»՝ փորձելով համատեղ մշակել ժողովրդավարական անցման երկուստեք ընդունելի պայմաններ ու ժողովրդավարական նոր խաղի կանոններ:

Երկխոսության անցման օրինակ կարելի է համարել Իսպանիան, որտեղ ժողովրդավարական բարեփոխումները սկիզբ առան գեներալ Ֆրանկոյի մահից անմիջապես հետո և տևեցին շուրջ 5 տարի՝ 1976-1981թթ: Իսպանական մոդելը սկսեցին համարել քաղաքական էլիտաների միջև բանակցությունների և համաձայնությունների միջոցով լայն հասարակական համաձայնության ճանապարհով անցնում անցնելու դասական օրինակ, ինչը թույլ տվեց խուսափել վրեժխնդրության փորձերից, բռնի հակամարտություններից ու քաղաքացիական պատերազմից: Ընդ որում՝ հատկանշական է, որ ժողովրդավարական անցման նման երկխոսության ելքին մեծապես նպաստել էր նաև նախորդ փորձը, որն ընթացել էր լրիվ հակառակ ուղղությամբ: Իսպանիայի երկրորդ հանրապետության ժամանակ անցումը հանգեցրեց 1936-1939 թթ. քաղաքացիական պատերազմին, որին հաջորդեց ամբողջատիրական վարչակարգի հաստատումը: Ոչ վաղ անցյալի սխալները չկրկնելն ու բռնաստիությունից խուսափելը, ազգային միասնության ու համերաշխության ապահովումը դարձան գերակա ուղենիշներ Իսպանիայի հասարակության ժողովրդավարացման համատեքստում: Այդ գործընթացը գլխավորեց Իսպանիայի միապետ Խուան Կառլոս Առաջինը, ով գահ բարձրացավ 1975 թ. նոյեմբերի 22-ին: Նա կառավարության ղեկավարի պաշտոնում հաստատեց ֆրանկիստական քաղաքականության հետևորդ, իր պահպանողական հայացքներով հայտնի Կ. Նավարոյին, որի կառավարությունը ձգտեց պահպանել ու կատարելագործել ֆրանկիստական վարչակարգը, քան իրական բարեփոխումներ նախաձեռ-

նել²⁰: Չնայած որոշ դրական փոփոխություններին՝ խաղաղ ցույցերի ազատություն, քաղաքական միավորումներ ստեղծելու հնարավորություններ և այլն, այնուամենայնիվ կառավարության անհետևողականությունը հանգեցրեց հասարակական տրամադրությունների բնեռացման, ինչպես նաև ընդդիմադիր քաղաքական ուժերի միավորման: Արդեն 1976 թ. մարտին ընդդիմությունը կարողացավ միավորվել մեկ միասնական բլոկում՝ ձևավորելով հակաֆրանկիստական մեծ կոալիցիա: Այդ իրավիճակում Խուան Կառլոսը, ընդունելով Նավարոյի կառավարության հրաժարականը, նոր կառավարության ղեկավար հաստատեց Ա. Սուարեսին, որն ավելի կտրուկ գործողությունների անցավ: Նախ հայտարարվեց մինչև 1977 թ. ամառը նոր խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին, համաներում ստացան հարյուրավոր քաղաքական բանտարկյալներ, լեզալացվեցին մի շարք քաղաքական կուսակցություններ, հանրաքվեի դրվեց քաղաքական բարեփոխումների մասին օրինագիծը և այլն:

«Հիմնադիր» ընտրություններն Իսպանիայում տեղի ունեցան 1977 թ. հունիսի 15-ին, որի արդյունքում խորհրդարանում հայտնվեցին իսպանական քաղաքական դաշտի գրեթե բոլոր նշանակալի քաղաքական ուժերը: Ժողովրդավարական անցման վերջնական փուլը խորհրդարանական ընտրություններից հետո իշխանության և ընդդիմության միջև բանակցություններն էին, որոնք հայտնի են «Մոնկլոայի պակտեր» անվանմամբ:

1977 թ. հոկտեմբերի 8-9-ը իսպանական կառավարության նստավայր Մոնկլոայում կազմակերպվեց մեծ կլոր սեղան-քննարկում, որին մասնակցեցին հիմնական բոլոր քաղաքական ուժերի և արհմիությունների ներկայացուցիչները, որոնցից կարևորագույններն իրենց ստորագրությունները դրեցին ամփոփիչ փաստաթղթի տակ, որով տնտեսական ոլորտում աջ և ձախ ուժերի միջև կնքվեց յուրատեսակ համաձայնագիր. ձախերը համաձայնվում էին, որ աշխատանքից ազատվելու ընթացակարգերը հեշտացվեն, աշխատավարձի անհարկի բարձրացումները սահմանափակվեն, իսկ աջերը պետք է կյանքի կոչեին հարկային բարեփոխումները, ավելացնեին պետության սոցիալական ապահովության գործառույթներն ու պահպանեին արհմիությունների իրավունքներն ու ազատությունները²¹:

«Մոնկլոայի պակտերի» քաղաքական մասը ենթադրում էր ԶԼՄ-ների գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացում, քրեական և ռազմական ոլորտների օրենսդրության մեղմացում, հանրահավաքների ազատություն, հասարակական կարգի պահպանման նոր օրենսդրության ընդունում և այլն: Դրանք

²⁰ St' u «История Испании: мирный переход к демократии (1975-1982)» [http://www.family-history.ru/material/history/spainhistory/spainhistory_21.html].

²¹ St' u «Пакты Монклоа» [http://www.slovarnik.ru/html_tsot/p/pakt3-monkloa.html]

նույնպես յուրատեսակ փոխզիջումներ էին, որոնք ապահովեցին իսպանական հասարակական-քաղաքական ուժերի քաղաքակիրթ համագոյակցությունն ու նպաստեցին Իսպանիայում արևմտյան տիպի ներկայացուցչական ժողովրդավարության հաստատմանը:

Ժողովրդավարացման լեհական փորձը նույնպես կարելի է երկխոսությային համարել, թեև լեհերը դրան հասան ոչ միանգամից. գործող կոմունիստական վարչակարգի դեմ առաջին կազմակերպված ընդվզումները սկսվեցին 1980-ականների սկզբներին: Լեիս Վալենսայի գլխավորությամբ ձևավորված «Համերաշխություն» շարժումը դարձավ ոչ միայն աշխատավորների սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ հարթակ, այլև վերածվեց հզոր հասարակական-քաղաքական կառույցի: Այդուհանդերձ իշխանությունները կարողացան դիմադրության առաջին փուլում ճնշել շարժումը. 1981 թ. դեկտեմբերի 13-ին Լեհաստանի վարչապետ գեներալ Վ. Յարուզելսկին ռազմական դրություն մտցրեց երկրում, արգելվեց «Համերաշխություն» շարժումը, ընդդիմության առաջնորդները հայտնվեցին բանտերում, ժողովրդավարացման փորձը ձախողվեց²²: Մակայն դրանով քաղաքական և տնտեսական ճգնաժամը հաղթահարել չհաջողվեց, ընդհակառակը, այն ավելի խորացավ, քանի որ իշխանություններն անկարող էին արմատական փոփոխությունների գնալ, իսկ «կեսքայլերի» քաղաքականությունն ըստ էության ավելի էր խորացնում անվստահությունն ու հիաբափությունը գործող վարչակարգի նկատմամբ: Առաջին հայացքից իշխանության միաձույլ թվացող կառույցը, այնուամենայնիվ, դիմակայության երկրորդ փուլում՝ 1980-ականների վերջին, ընտրեց իշխանություն-ընդդիմություն քաղաքական հակամարտության խաղող հանգուցալուծման ճանապարհը:

Քաղաքական ճգնաժամերի համեմատական վերլուծություն իրականացրած ռուսաստանցի հետազոտողները նշում են, որ լեհական իշխանությունները աստիճանաբար համոզվեցին, որ անհնար է իրականացնել հասարակության քաղաքական կառավարում՝ անտեսելով ընդդիմության գոյությունը, իսկ վերջինս իր հերթին դարձավ բանակցությունների լուրջ գործընկեր²³: Ընդհանրապես իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերություններում կարող է ձևավորվել թյուր պատկերացում, որ իբր ընդդիմությունն ի գորտ է բանակցությունների միջոցով հասնելու իշխանությունների ամբողջական հրաժարականին, իսկ իշխանությունը, օգտագործելով բանակցությունները, լուծել իր վերարտադրության հարցը՝ անտեսելով հասարակության մեջ հասունացած իրական խնդիրները: Քաղաքական երկխոսության լեհական փորձը ցույց տվեց, որ իշխանության և ընդդիմության միջև հնարավոր է և

²² Sę u «Конец системы». Варшава, 2014, էջ 3:

²³ Sę u Гельман В., Добронравин Н., Колоницкий Б., Травин Д. Политический кризис в России: модели выхода. СПб., 2012, էջ 11:

պետք է ծավալվի իրական քաղաքական երկխոսություն, որի ժամանակ առավել արդյունավետ է հենց ժողովրդավարական բարեփոխումների պակտային կամ մեր բնորոշմամբ՝ երկխոսությանին մոդելը:

Այսպես, Վարշավային մերձակա Մագդալենկա քաղաքում իշխանության և ընդդիմության միջև սկսվեցին առաջին քաղաքական խորհրդակցությունները: Հենց այդ հանդիպումների ընթացքում որոշվեցին ապագա բանակցությունների ժամկետները, ձևավորվեցին երեք աշխատանքային խմբեր, որոնց օրակարգային քննարկման առարկա դարձավ հիմնախնդիրների երեք համախումբ՝ քաղաքական բարեփոխումները, կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և արհմիութենական պլյուրալիզմի խնդիրները²⁴: Այդ հանդիպումների վերաբերյալ «Համերաշխության» լիդերներից Թ. Մագովեցկին նշում էր. «Լեհաստանում առկա է ոչ միայն տնտեսավարման ու քաղաքական ճգնաժամ, այլև հսկայական հասարակական անվստահություն: Մենք դա անպայման պետք է հաշվի առնենք: Ոչ թե հոչակագրերը, այլ փաստերը կարող են հաղթահարել այդ անվստահությունը: Այդպիսի փաստ կարող է դառնալ կլոր սեղանն ու նրա արդյունավետ աշխատանքը, սակայն առավել սկզբունքային կարող է լինել «Համերաշխության» լեզվացումը: Երկրորդ խնդիրը վերաբերում է պատմական փորձին, որը պետք է հասարակությանը ցույց տա, որ մենք գնում ենք հիմնարար վերակառուցման: Երրորդը միաժամանակությունն ու թափանցիկությունն է: Միաժամանակությունը նշանակում է, որ ընտրությունների մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվում մեկ անգամ և ընդմիջտ, իսկ թափանցիկությունը՝ այն, որ այդ պայմանագիրը մենք պետք է հասարակությանը ներկայացնենք համակողմանիորեն»²⁵:

Այսպիսով, 1989 թ. փետրվար-ապրիլ ամիսներին հրավիրված կլոր սեղանի շրջանակներում մի քանի փուլով բանակցություններից հետո ընդունվեցին փոխզիջումային որոշումներ. հիմնվում էր նախագահի ինստիտուտը (հետագա բանակցություններում կողմերը համաձայնեցին «ձեր նախագահը, մեր վարչապետը» ձևաչափին, և Վ. Յարուզելսկին դարձավ նախագահ, իսկ վարչապետ նշանակեց ընդդիմության լիդերներից Թ. Մագովեցկուն), համաձայնություններ կայացան նոր խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին: Իշխանությունը համաձայնվեց լիովին ազատականացնել Սենատի (Վերին պալատ) ընտրությունները՝ միաժամանակ վերահսկելով Մեյմի (Ստորին պալատ) պատգամավորական տեղերի մեծամասնությունը: «Համերաշխությունն» ընդունեց խաղի կանոնները և ժողովրդի աջակցությամբ խորհրդարանական ընտրությունների ընթացքում վերցրեց առա-

²⁴ Стé u **Макаркин А.** Круглый стол: польский опыт // "Ежедневный журнал", 2012, 1 [www.ej.ru]

²⁵ "Конец системы" с. 11:

վելագույն տեղեր: «Համերաշխությունը» հեռուստատեսային և տպագիր ԶԼՄ-ներով սեփական քաղաքական դիրքորոշումներն արտահայտելու հնարավորություն ստացավ:

Իսկ արդեն 1990 թ. կայացած նախագահական ընտրություններում գեներալ Վ. Յարուզելսկին այլևս հաղթանակի հասնելու ոչ մի շանս չունեի, ուստի նույնիսկ չառաջադրեց իր թեկնածությունը: Հաղթանակ տարավ ընդդիմության առաջնորդ Լեխ Վալենսան: Այսպիսով, չնայած արմատական տրամադրված որոշ քաղաքական ուժերի և գործիչների բացասական վերաբերմունքին, այնուամենայնիվ պետք է փաստել, որ Մագդալենկայում սկսված և կլոր սեղանով ավարտված քաղաքական երկխոսության դերը ժողովրդավարության խաղաղ անցման գործում անուրանալի էր:

Լեհական օրինակը վարակիչ դարձավ նաև Հունգարիայի համար, որտեղ նույնպես իշխանություն-ընդդիմություն բանակցությունները ապահովեցին ժողովրդավարության երկխոսության անցումը: Ի տարբերություն Լեհաստանի, Հունգարիայում ուժեղ ու կազմակերպված ընդդիմադիր շարժում չկար: Ըստ որոշ հաշվարկների՝ 1989 թ. դրությամբ Հունգարիայում ընդդիմադիրի համբավ ունեցող բոլոր կազմակերպություններում ու կառույցներում միասին հաշվարկվում էր ընդամենը 15 000 մարդ²⁶: Այդ իսկ պատճառով հունգարական իշխանությունն առանձնապես լուրջ վտանգ չէր տեսնում ընդդիմադիր գործունեություն ծավալած կառույցներից, նույնիսկ հարմար թեկնածուներ էր որոնում համատեղ աշխատանքի համար: Հատուկ այդ նպատակով հրավիրված խորհրդակցության ժամանակ հունգարական կոմունիստական ղեկավարությունը լիազորեց կոմկուսի կենտրոնական կոմիտեի քարտուղարներից Դ. Ֆեյտիին բանակցություններ վարել ընդդիմադիր ուժերի հետ, առանձնացնել առավել հարմար թեկնածուներ, իսկ մնացածներին համարել մարզինալ կամ ծայրահեղական և դուրս մղել քաղաքական գործընթացներից²⁷: Այդ իրավիճակում շատ ավելի ճիշտ կողմնորոշվեցին ընդդիմադիր ուժերը՝ 1989 թ. մարտի 22-ին հիմնեցին «Ընդդիմադիր կլոր սեղանը»՝ նպատակ ունենալով համախմբել ընդդիմության ճամբարի ուժերին ու նախապատրաստվել իշխանության հետ բանակցությունների: Այդ կառույցի շուրջ միավորվեցին դաշտում գործող գրեթե բոլոր ընդդիմադիր ուժերը՝ իշխանություններին ազդակ հղելով միասնական ընդդիմության հետ երկխոսության միակ հնարավորության մասին: Այնուամենայնիվ իշխանությունները կարողացան քաղաքական բանակցությունների մասնակից դարձնել նաև այսպես կոչված «երրորդ կուսակցության» պաշտոնապես գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Արդյուն-

²⁶ St' u **Кувалдин С.** Какой путь демократизации подходит России: польский, чешский или венгерский? // www.ru/world/vostochnoevropeyskie_revolyucii

²⁷ St' u նույն տեղը:

քը եղավ այն, որ իշխանություն-ընդդիմություն քաղաքական երկխոսությունը վերածվեց «համազգային կլոր սեղանի», որի շրջանակներում տեղի ունեցած բանակցություններում ընդունվեցին քաղաքական բարեփոխումներին վերաբերող հիմնական որոշումները, այն է՝ սահմանադրության փոփոխություն, սահմանադրական դատարանի ստեղծում, բազմակուսակցականության հաստատում ու դրա հիման վրա խորհրդարանական ընտրությունների անցկացում, պետական ապարատի և կուսակցությունների տարանջատմանը միտված օրենսդրական դաշտի փոփոխություն և այլն: Առաջին ազատ ընտրությունները նշանակվեցին 1990 թ. մարտին, որի կազմակերպչական ու ընթացակարգային հարցերը ևս դարձան «համազգային կլոր սեղանի» օրակարգային թեմաները:

Չեխոսլովակիայում նույնպես ժողովրդավարության անցումը խաղաղ բնույթ ունեցավ չնայած բազմահազարանոց ցույցերին: 1989 թ. նոյեմբերի 17-ին Պրահայում իշխանությունները ճնշեցին ուսանողական խաղաղ ցույցը, որից հետո երկրում սկսեցին ձևավորվել քաղաքացիական դիմադրության առաջին օջախները: Այդ դեպքերից ընդամենը երկու օր անց Պրահայում հիմնվեց «Քաղաքացիական ֆորում» քաղաքական շարժումը, որը գլխավորեց հայտնի այլախոհ Վ. Հավելը²⁸: Միաժամանակ Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում ձևավորվեց «Հանրությունն ընդդեմ բռնության» հասարակական շարժումը, որն առաջնորդեցին մշակութային գործիչներ Յան Բուդայն ու Միլան Կնյաժկոն²⁹: Այս երկու կառույցների հիմնական նպատակ հռչակվեց իշխանության հետ երկրի ազատականացմանն ու ժողովրդավարացմանն ուղղված քաղաքական երկխոսության ծավալումը: Բողոքի զանգվածային ցույցերից ընդամենը 10 օր անց իշխանությունն ու ընդդիմությունը նստեցին բանակցությունների սեղանի շուրջ, արձանագրվեցին առաջին դրական արդյունքները քաղաքատարկյալների ազատ արձակման, սահմանադրության որոշ դրույթների չեղարկման, ընդդիմության գործունեության լեգալացման, ՁԼՄ-ների ազատականացման և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Իսկ արդեն Մ. Չավֆայի գլխավորությամբ ձևավորված ազգային համաձայնության նոր կառավարության կազմում 20 պորտֆելներից 7-ը զբաղեցրին ընդդիմադիր «Քաղաքացիական ֆորումի» ներկայացուցիչները: Սակայն իրական ուժային, ինչպես նաև օրենսդիր բարձրագույն իշխանության լծակները շարունակում էին մնալ կոմունիստների ձեռքում, ընդ որում, ինչպես նշում է Ի. Մուկը, չեխական պարադոքսն այն էր, որ կոմունիստները կողմ էին երկրի նախագահի համընդհանուր ընտրություն անցկացնելուն, իսկ ընդդիմությունը՝ Վ. Հավելի գլխավորությամբ, ընդհակառա-

²⁸ St u **Сук И.** Возвращение Чехословакии к демократии // "Трансформация: чешский опыт". Прага, 2006, էջ 3:

²⁹ St u նույն տեղը:

կը, կողմնակից էր, որ երկրի նախագահին ընտրի Դաշնային ժողովը: - Պատային իրավիճակից դուրս գալու յուրօրինակ ելք գտավ կառավարության ղեկավար Մարիան Չալֆան, որը, հանդիպելով ընդդիմության առաջնորդների հետ, առաջարկեց կիսել պետական բարձրագույն պաշտոնները: Միաժամանակ միջէթնիկական լարվածությունը նվազեցնելու և փոխզիջումային որոշումներ գտնելու նպատակով գործուն բանակցություններ էին ընթանում նաև չեխական և սլովակյան ընդդիմության առաջնորդների՝ Վ. Հավելի և Ա. Դուբչեկի միջև: Ըստ այդմ՝ - Դուբչեկը միաձայն ընտրվեց Դաշնային ժողովի նախագահ, իսկ մեկ օր անց երկրի նախագահ ընտրվեց Վ. Հավելը (նույնպես միաձայն): 1990 թ. առաջին ամիսներից սկսած՝ քաղաքական գործընթացները Չեխոսլովակիայում «կլոր սեղանի» ձևաչափից աստիճանաբար անցում կատարեցին խորհրդարանական հարթակ՝ հիմք դնելով խորհրդարանական ժողովրդավարության հաստատման: Իսկ արդեն 1990 թ. և 1992 թ. խորհրդարանական ընտրությունները մի կողմից ամրապնդեցին խորհրդարանական ժողովրդավարության ավանդույթները, մյուս կողմից՝ ապահովեցին Չեխոսլովակիայի խաղաղ բաժանումն ու «քաղաքակիրթ ապահարգանք»:

Այսպիսով, ժողովրդավարության երրորդ ալիքի համատեքստում դիտարկելով Իսպանիայի և ԿԱԵ (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի) վերոնշյալ երկրների ժողովրդավարության անցման փորձը, դրանք միանշանակորեն կարելի է համարել երկխոսության, քանի որ դիտարկվող բոլոր դեպքերում ժողովրդավարական բարեփոխումների սահուն ու առանց ցնցումների ընթացքը մեծապես պայմանավորված է եղել իշխանություն-ընդդիմություն քաղաքական երկխոսությանը և «կլոր սեղանների» ռազմավարությանը նախապատվություն տալով: Ընդ որում՝ քաղաքական գործընթացների բոլոր մասնակիցների կողմից երկխոսության ռազմավարության գիտակցումը պետք է համարել ոչ թե ի վերուստ տրված, այլ երկարատև պայքարի արդյունք, քանի որ և՛ Իսպանիայի, և՛ Լեհաստանի, և՛ Հունգարիայի ու Չեխոսլովակիայի պարագայում «մեծ քաղաքական երկխոսություններին» նախորդել էին բռնություններով, հարյուրավոր մարդկային զոհերով ուղեկցված քաղաքական գործընթացներ, որոնք տասնյակ տարիներով արգելափակել էին ժողովրդավարական բարեփոխումներն այդ երկրներում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ քաղաքական երկխոսության ճանապարհն ավելի հաճախ ընտրում են այն երկրները, որոնք ունեցել են իշխանություն-ընդդիմություն արմատական առձակատման դառը փորձ: Բացի այդ, քաղաքական երկխոսության ճանապարհով ժողովրդավարական բարեփոխումների իրականացումը հնարավոր է դառնում երկուստեք ավելի չափավոր քաղաքական կուրս որդեգրելու դեպքում: Ինչպես նշում է Ս. Հանտինգտոնը, ժողովրդավարացման երրորդ ալիքի գործընթացների հիմքում ընկած էին բանակցություններն ու փոխ-

զիջումները: «Առանցքային քաղաքական ուժերի ու սոցիալական տարբեր խմբերի առաջնորդները բացահայտ կամ գաղտնի բանակցում էին, մշակում էին ժողովրդավարության անցման փոխադարձ ընդունելի համաձայնություններ... Ժողովրդավարացման մեծ մասի դեպքում հիմնական փոխզիջումը կարելի էր կոչել «ժողովրդավարական գործարք», որը ենթադրում էր մասնակցություն չափավորության փոխարեն»³⁰: Բանն այն է, որ այդ երկխոսությունների և բանակցությունների ընթացքում աստիճանաբար մեծանում էր մասնակիցների շրջանակը՝ պաշտոնապես կամ ոչ բացահայտ խաղի կանոնների պայմաններում իշխանության համար մղվող պայքարի մեջ ներառելով նորանոր քաղաքական ուժերի և գործիչների, որը հուշում էր հաջողության հասնելու համար պետք է որդեգրել չափավոր քաղաքական ուղեգիծ: Ըստ այդմ՝ աջ և ձախ հայացքների տեր քաղաքական ուժերը փոխադարձաբար ընդունում էին միմյանց գոյության իրավունքը: Իսկ դա, իր հերթին, նշանակում էր, որ քաղաքական պայքարում նախապատվությունը տրվում էր ոչ բռնի մեթոդներին, ինչն էապես բարձրացնում էր երկխոսության ճանապարհով սոցիալ-քաղաքական խնդիրները լուծելու հավանականությունը:

Ինչ վերաբերում է հետխորհրդային երկրների ժողովրդավարության անցման փորձին, ապա այստեղ իրավիճակը խայտաբղետ է այն աստիճան, որ քաղաքագետները դժվարանում են ինչ-որ ընդհանուր օրինաչափություններ գտնել դրանց համար, իսկ ռուսական քաղաքագիտական գրականության մեջ բացառիկ համարվող «Ժամանակակից քաղաքական ատլասում» կլաստերային վերլուծության համաձայն՝ նախկին ԽՍՀՄ երկրները դասակարգված են ինը տարբեր խմբերի մեջ³¹: Վերջերս քաղաքագիտական գրականության մեջ ընդհանրապես տիրապետող է այն մտտեցումը, որ հետխորհրդային երկրները ժողովրդավարացման երրորդ ալիքի մեջ չեն տեղավորվում և ոչ մի ընդհանրություն չունեն այդ գործընթացների հետ³²: Մասնավորապես Ս. Թերին գտնում է, որ ժողովրդավարացման երրորդ ալիքն ու հետխորհրդային փոխակերպումները տարբեր երևույթներ են. դրանց միջև առկա են հինգ եական տարբերություններ՝ շուկայական հարաբերությունների առկայությունը առաջինների և դրա բացակայությունը վերջինների դեպքում, սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակները, ազգային հարցի բացակայությունը երրորդ ալիքի երկրների և դրանց բազմազանությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի դեպքում, քաղաքացիական հասարակության սաղմերի առկայությունը և դրանց իսպառ բացակայությունը, միջազգային իրավիճակի տարբերությունը 1970-ական-

³⁰ Хантингтон С., նշվ. աշխ., էջ 183-184:

³¹ Տե՛ս «Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств». М., 2007:

³² Տե՛ս Gans-Morse J. Searching for Transitologists: Contemporary Theories of Post-Communist and Myth of a Dominant Paradigm.// Post-Soviet Affairs, 2004, № 20/4, էջ 320-349:

ներին և 1990-ականներին³³: Այս մոտեցումն ունեն նաև որոշ հայ քաղաքագետներ, որոնց կարծիքով, տարբերությունները վկայում են նշված գործընթացների միանգամայն տարբեր բնույթի մասին, հետևաբար էական են դրանց մեջ ներգրավված երկրների և հասարակությունների առջև ծառայած խնդիրների տարբերությունները³⁴: Նախ՝ կարելի է չընդունել Ս. Թերիի մատնանշած տարբերությունները, քանի որ դժվար թե XX դարի 70-ականների Սառը պատերազմի տարիներին, երբ գործում էր երկբևեռ աշխարհակարգը, ԽՍՀՄ-ն իր գաղափարաքաղաքական ու ռազմական ողջ հզորությամբ ավելի բարենպաստ միջազգային միջավայր էր ձևավորել, քան 90-ականներին, երբ Խորհրդային Միությունը պատմության գիրկն անցավ ու ժողովրդավարացման երրորդ ակիբը նոր շունչ ու որակ ստացավ: Վիճահարույց կարելի է համարել նաև ազգային հարցի և այլ գործոնների՝ որպես անցման էական տարբերությունների պատճառանքային հիմքերի մասին դատողությունները: Մենք հակված ենք հետևելու ժողովրդավարացման երրորդ ակիբի աշխարհագրության դասական՝ հանտինգտոնյան մոտեցմանն ու ԿԱԵ, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության երկրները նույնպես դիտարկել ժողովրդավարացման երրորդ ակիբի համատեքստում, ամենևին չժխտելով այդ գործընթացի փուլային տիպաբանությունների հնարավորությունն ու ժողովրդավարության անցման տարբեր գործոնների առկայությունը:

Այս առումով շատ ճիշտ են նկատում Թ. Կառլն ու Ֆ. Շմիտերը, որ ավտորիտարիզմից ժողովրդավարությանն անցնելու գործընթացները նկարագրելիս անարդյունավետ է խոսել ինչ-որ ընդհանուր պատճառանքային հիմքերի կամ գործոնների մասին, քանի որ այդ դեպքում տրամաբանորեն պետք է առաջանար նաև ժողովրդավարացման ընդհանուր կարգ կամ օրինաչափություն, որը, բնականաբար, գոյություն չունի³⁵: Այս համատեքստում ամերիկյան անցումագետները կարևորում են անցման ուղիների ընտրության հարցը՝ առանձնացնելով չորս հիմնական ճանապարհ՝ «պակտ», «բարեփոխում», «պարտադրում» և «հեղափոխություն»³⁶: Ժողովրդավարության անցման ամենաարդյունավետ ճանապարհը, բնականաբար, համարվում է պակտային համաձայնությունը, երբ քաղաքական էլիտայի իշխանական և ընդդիմադիր թևերի միջև կնքվում են բազմակողմ համաձայնագրեր, համատեղ մշակվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման նոր կանոններ և ընթացակարգեր: Իսպանիայի և ԿԱԵ երկրներից

³³ Տե՛ս **Terry S.** Thinking about Post-Communist Transition: How Are They?// Slavic Review, 1993, № 52/2:

³⁴ Տե՛ս **S. Թորոսյան, Հ. Սուքիասյան**, Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները// Հայկական քաղաքագիտական հանդես, 2014/1, էջ 20-33:

³⁵ Տե՛ս **Карл Т., Шмиттер Ф.** Пути перехода от авторитаризма к демократии в Латинской Америке, Южной и Восточной Европе // "Международный журнал социальных наук", 1993, 3, էջ 29-45:

³⁶ Տե՛ս նույն տեղը:

Լեհաստանի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի փորձի ուսումնասիրությունը նույնպես ապացուցում է, որ պակտային կամ «երկխոսութային» անցումը գերադասելի է: Հայ քաղաքագետ Մ. Մարգարյանը Թ. Կառլի և Ֆ. Շմիտերի տիպաբանության հիմքով ժողովրդավարության անցման գործընթացին բնորոշ անորոշություններից ազատվելու համար առանձնացնում է 4 հիմնական սցենարներ³⁷ 1. «բոլորի պատերազմը բոլորի դեմ», երբ անցման դերակատարներից մեկը չունի հստակ հակակշիռ և նախընտրում է ուժային ռազմավարությունը՝ հանգեցնելով քաղաքացիական պատերազմի, 2. «հաղթողը ստանում է ամեն ինչ», որի ժամանակ բախումը թույլ է տալիս դերակատարներից մեկին մրցակիցների նկատմամբ հասնել գերազանցության և դառնալ իրադրության լիիրավ տերը, 3. «ընտրանիների միություն», երբ դերակատարներից մեկի գերակայության դեպքում անորոշությունից դուրս գալու ելք է դառնում քաղաքական գործընթացի հիմնական մասնակիցների միջև բացահայտ կամ քողարկված (լատենտ) համաձայնությունը խաղի ընդհանուր կանոնների և նորմերի ընդունման վերաբերյալ, 4. «կանոններով պատերազմ», որի դեպքում քաղաքական պայքարն ու մրցակցությունը «բոլորի պատերազմը բոլորի դեմ» վիճակից տեղափոխվում են ինստիտուցիոնալ դաշտ և ձեռք են բերում ընթացակարգային հստակ բնույթ՝ նմանվելով Ա. Պշևորսկու առաջարկած բանաձևին «արդյունքների անորոշություն որոշակի ընթացակարգերի պայմաններում»:

Ժողովրդավարության անցման տեսանկյունից ռուս անցումագետ Ն. Բարանովը արևելաեվրոպական ու հետխորհրդային երկրները բաժանում է 4 խմբի, առանձնացնելով՝ 1. անցումն ավարտած պետություններ, 2. անցման հետադարձ ընթացքը բացառողներ, 3. անցման մեջ դեռ գտնվողներ, 4. անցումը արգելափակած կամ ընդհանրապես անցում չունեցած պետություններ³⁸:

Առաջին խմբի մեջ են մտնում Վիշեգրադյան քառյակի (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա) երկրները, ինչպես նաև Լիտվան, Սլովենիան, Բուլղարիան և Ռումինիան, որոնք առավել հարմարվեցին Մեծ Եվրոպային, ինչպես նաև դրսևորեցին գործառնության ժողովրդավարությանը բնորոշ գծեր: Երկրորդ խումբը այն երկրներն են, որոնք չնայած մի շարք ցուցանիշներով հետ են մնում լիդերներից, սակայն նկատելի են էական առաջընթացներ: Այս խմբի մեջ են մտնում Լատվիան և Էստոնիան, Խորվաթիան, Մակեդոնիան և Ալբանիան: Առավել բարդ են ընթանում Մակեդոնիայի և Ալբանիայի ժողովրդավարական գործընթացները. այստեղ նկատելի են որոշակի դժվարություն-

³⁷ Տե՛ս **Մ. Մարգարյան**, Ժողովրդավարության անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում //21-րդ դար, 2005/4(10), էջ 126-127:

³⁸ Տե՛ս **Баранов Н.** Посткоммунистические страны: некоторые итоги трансформации // http://nicbar.ru/polit_trans_lekzia11.htm

ներ՝ կապված քաղաքականության բևեռացման, ազգային փոքրամասնությունների և այլ խնդիրների հետ: Այդ երկրներում անցումը համարվում է հետադարձը բացառող, չնայած «եվրոպական» գործոններն ավելի թույլ են արտահայտված, զարգացման աստիճանն ավելի ցածր է:

Երրորդ խմբի մեջ, որին բնորոշ են ժողովրդավարության անցման շարունակականությունն ու անցման վերջնական ելքի անորոշությունը, ներառված են Բոսնիան և Հերցեգովինան, Սերբիան և Չեռնոգորիան, Մոլդովան, Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը, Ռուսաստանը: Այս երկրներում նկատելի են ժողովրդավարացման ձգձգման միտումներ, այդ գործընթացը «ծանրացնող» օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, ժողովրդավարության ցուցանիշների փոփոխական զարգացում, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ ժողովրդավարության անցումը դեռ չի ավարտվել: Այս խմբում հետնապահը համարվում է Ռուսաստանը, որը հետկոմունիստական երկրներից ամենաբարեկեցիկն ու մրցակցայինն է, սակայն ժողովրդավարության դեռ չի հասել:

Եվ վերջապես, չորրորդ խմբի մեջ են մտնում ժողովրդավարացման գործընթացներն արգելափակած պետությունները՝ որոնց թվում են բացառապես նախկին Խորհրդային Միության միջինասիական երկրները՝ Ուզբեկստանը, Թուրքմենիան, Տաջիկստանը, Ղրղզստանը, Ղազախստանը՝ դրանց հավելած Ադրբեջանն ու Բելառուսը: Եթե Ադրբեջանում ձևավորված քաղաքական կառավարման ավանդույթները կարելի է ներառել ասիական խմբի մեջ, ապա Բելառուսը միակ եվրոպական երկիրն է, որը հայտնվել է այս խմբում: Այսինքն, եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների պարագայում ժողովրդավարության անցումները կարելի է համարել կայացած փաստ, ապա նախկին Խորհրդային Միության երկրների առնվազն կեսի պարագայում այդ անցումը ընդհանրապես տեղի չի ունեցել կամ արգելափակվել է վաղ շրջանում, իսկ ևս հինգի՝ այդ թվում և Հայաստանի պարագայում ժողովրդավարության անցումը դեռ շարունակվում է: Իհարկե, ինչ-որ առումով կարելի է չհամաձայնել այս տեսակետի հետ, քանի որ ոչ բոլոր դեպքերում է այն արտացոլում երևույթների իրական պատկերը: Ինստիտուցիոնալ, ընթացակարգային չափորոշիչների առումով միզուցե կարելի է համաձայնել այն տեսակետին, որ անցումն ավարտված է, բայց առնվազն ժողովրդավարության համախմբման առումով պատասխանը միանշանակ է. ժողովրդավարությունը հետխորհրդային տարածքի շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում, դեռևս գտնվում է կայացման և կայունացման փուլում, իսկ այդ գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է լինելու հայ հասարակության քաղաքական կյանքում երկխոսության պրակտիկայի լայնածավալ ներդրմամբ ու նոր՝ երկխոսության քաղաքական մշակույթի ձևավորմամբ:

Բանալի բառեր – քաղաքական երկխոսություն, ժողովրդավարական անցում, երկխոսության անցում, պակտային համաձայնություն, երկխոսության մշակույթ

ХАЧИК ГАЛСТЯН – Проблема политического диалога в контексте перехода к демократии. – Политический диалог рассмотрен в статье через призму демократических транзитов. В контексте “третьей волны” демократизации анализируется ситуация в странах, перешедших к демократической форме правления через “большие политические диалоги”, “круглые столы” и переговоры. Касательно постсоветской трансформации в Армении подчеркнуто, что демократия здесь находится на консолидационной стадии своего развития. Особую роль в этом процессе приобретает активное внедрение диалоговых форм политической коммуникации и формирование культуры политического диалога.

Ключевые слова: *политический диалог, демократический переход, диалогический переход, пактовое соглашение, культура диалога*

ԽՈՒՇԻԿ ԳԱԼՏՅԱՆ – The Problem of the Political Dialogue in the Context of the Transition to Democracy. – In this article, the author considers the problem of political dialogue through the prism of democratic transitions. In the context of the "third wave" of democratization analyzes the countries that have moved to the democratic form of government through a "big political dialogue", "round tables" and discussions. In the case of post-Soviet transformation, considering the experience of democratic transition in Armenia, the author emphasizes, that democracy in Armenia is in a consolidation stage of its development. And in this process becomes important active introduction of dialogue forms of political communication and the creation of a culture of political dialogue.

Key words: *political dialogue, democratic transition, dialogical transition, pact agreement, culture of dialogue*

ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՄՈՒՄ

ԱԼԵՆ ԴԵՎՈՆՂՅԱՆ

Դաշինքները միջազգային հարաբերությունների պատմության ընթացքում ավանդաբար կարևորագույն դերակատարում են ունեցել: Ինչպես հին ժամանակներում, միջնադարում ու նոր շրջանում, այնպես էլ մեր օրերում պետություններն իրենց ազգային շահերի սպասարկման համար ստեղծել է ամենատարբեր ուղղվածության դաշինքներ, միջպետական միություններ, կոալիցիաներ, որոնց մի մասը հետագայում վերածվել են միջազգային առաջատար կազմակերպությունների: Արևմտյան հայտնի տեսաբան Ջ. Լիսկան կարծում է. «Անհնար է խոսել միջազգային հարաբերությունների մասին, առանց անդրադառնալու դաշինքներին, քանի որ այդ երկուսը, բացի իրենց անվանումներից, մնացած ամեն հարցերում միաձուլված են»¹: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր միջպետական դաշինքները միջազգային հարաբերությունների արդի համակարգում պետությունների համար տարածաշրջանային և գլոբալ ամենատարբեր հիմնախնդիրներ են լուծում: Սակայն ունենալով նմանօրինակ կարևոր դերակատարում և լինելով մի շարք պետությունների քաղաքականության ելակետ՝ «դաշինք» հասկացության մեկնաբանման ու սահմանման միասնական ու փոխընդունելի մոտեցում հատկապես արևմտյան գիտական գրականության մեջ այնուամենայնիվ դեռևս առկա չէ²:

«Դաշինք» հասկացությունն ընդհանուր առմամբ կիրառելի է ինչպես պետության ներսում քաղաքական կուսակցություններից և ուժերից կազմված խմբերի, պետությունների միջև ռազմական, քաղաքական կամ տնտեսական համագործակցության, այնպես էլ մասնավոր ընկերությունների միջև համագործակցության ձևերի (տնտեսական կոնցենսներ, արտադրողների միություններ և այլն) բնորոշման համար: Կիրառելիության նմանօրինակ լայն միջակայքը օբյեկտիվ բարդություններ է ստեղծում հասկացությունը սահմանելիս: Ի դեպ՝ բարդություններ առաջանում են ոչ միայն հասկացության ընդհանուր մեկնաբանության, այլ նաև կոնկրետ գիտական ճյուղի տեսահայեցակարգային հենքի ներքո այն սահմանելիս. օրինակ, երբ «դաշինք» հասկա-

¹ G. Liska. Nations in Alliance. The Limits of Interdependence, paperback edition, Baltimore, 1968, p. 3.

² Տե՛ս O. Holsti, T. Hopmann, J. D. Sullivan: Unity and Disintegration in International Alliances: Comparative Studies, John Wiley and Sons, New York, 1973, էջ 2:

ցությունը դիտարկում ենք միջազգային հարաբերությունների տիրույթում, ապա նրա մեկնաբանման ժամանակ դժվարություններ են առաջանում ոչ միայն «դաշինք»-ի բուն սահմանման, այլ նաև նրա կառուցվածքի որոշակիացման, ներքին հիերարխիկ բնույթի ու կապերի նկարագրման, տիպատեսակային բնորոշման և մի շարք այլ հանգամանքների հետ կապված³: Հետևաբար՝ դաշինքները և նրանց գործառական նկարագիրը ըմբռնելու, ինչպես նաև միջազգային հարաբերությունների համակարգում նրանց քաղաքական վարքը պարզորոշ պատկերացնելու համար նախ անհրաժեշտ է ներկայացնել «դաշինք» հասկացության գիտական սահմանումը, որը կլինի տեսականորեն կուռ, գործնականում կիրառելի և կարտացոլի դաշինքների գոյության ու գործառման իրողությունները:

«Դաշինք» հասկացության բառարանային մեկնաբանումն ունի բովանդակային մի քանի կողմ: Այն նախ նշանակում է «կապված լինելու վիճակ, պարտավորություն կամ կողմերի, անհատների, ընտանիքների միջև առկա կապ», ապա «երկու և ավելի ազգերի շահերի ապահովման ասոցիացիա, պայմանագիր»⁴: «Դաշինք» բառի գերմաներեն համանուն եզրույթը «allianz»-ն է, որը ծագում է 17-րդ դարում հին ֆրանսերեն «aleier» (կապել, միացնել, միավորվել) բայից: Վերջինիս հիմքը լատիներեն «alligare» բայն է, որն էլ իր հերթին ծագում է «ligare» կապել, միավորել բառից⁵: Ակնհայտ է, որ ստուգաբանական այս մեկնաբանություններում դաշինք բառի հիմքը «կապ (կապել)» բառն է, հետևաբար «դաշինք» հասկացության բովանդակության մեջ պետությունների միջև առկա կապի հանգամանքը առանցքային է: Այս առումով փաստենք, որ հիմնահարցի հետազոտմամբ զբաղվող արևմտյան հեղինակների գերակշիռ մասը դաշինքները դիտում է «որպես նպատակներին հասնելու համար պետությունների միջև առկա կապի հատուկ տեսակներ»⁶: Մակայն նման պարագայում հեղինակների կողմից դաշինքների նպատակների որոշակիացում չի արվում, որի հետևանքով ոմանք որպես դաշինքների նպատակ դիտում են ընդհանուր քաղաքականության իրականացումը⁷,

³ Այս մասին մանրամասն տե՛ս **D. J. Singer, S. Melvin**, «Formal Alliances, 1815-1939 A Quantitative Description» *Journal of Peace Research*, 1, 1966, **R. L. Rothstein**, *Alliances and Small Powers*, Columbia University Press, New York 1968, **R. A. Kann**, «Alliances vs. Ententes», *World politics* 28, № 4, 1976., էջ 611-621, **V. Krause, S. Christopher**: «Causes and consequences of military alliances: concepts, theory, evidences» *International Interactions*, 30: 2004, էջ 281-283, **W. Kim**, «Power Transitions and Great Power War from Westphalia to Waterloo» *World Politics*, Vol. 45, № 1, Oct., 1992, էջ 153-172:

⁴ Webster's Encyclopedic Dictionary, revised edition, New York, 1995, p. 27.

⁵ Տե՛ս **Duden**, *Etymologie. Herkunftswörterbuch der deutschen Sprache*. Ed. By Günther Drosdowski, Paul Grebe et al., Mannheim/Wien/Zürich, 1963, էջ 19-20:

⁶ **J. S. Levy, M. M. Barnett**, *Domestic Sources of Alliances and Alignments: The Case of Egypt, 1962-1973*, In: *International Organization*, V.45, № 3, 1991, p. 370, **S. M. Walt**, *The Origin of Alliances*, Ithaca/New York, 1987, p. 12, **S. M. Walt**, "Alliance", *The Oxford Companion to Politics of the World*, 1993, p. 20:

⁷ Տե՛ս **M. F. Altfeld**, *The Decision to Ally: A Theory and Test in The Western Political Quarterly*, Vol. 37, № 4, December, 1984, էջ 523-524:

մյուսները՝ ազգային անվտանգության քաղաքականությունը⁸, երրորդները՝ միացյալ ուժերով պատերազմի սանձազերծումը⁹:

Որպեսզի առավել համակողմանի պատկերացնենք դաշինքների բովանդակային կողմերը և դրանց միջոցով անվտանգության ապահովման ու խաղաղության հաստատման հիմնահարցերը, գործունեության ձևի ու ոլորտների մի շարք կողմեր, հարկավոր է դաշինքները դիտարկել միջազգային հարաբերությունների հիմնական տեսությունների շրջանակներում:

Միջազգային հարաբերությունների մեկնաբանման ռեալիստական տեսությունը, որ բխում է Թուկիդիդեսի, Ն. Մաքիավելլո և Թ. Հորսի մոտեցումներից, իր դիտարկումների ելակետ համարում է միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգի մասին պնդումը, համաձայն որի՝ պետությունները գտնվում են փոխադարձ գերիշխանության մրցապայքարում: Սկսած Հ. Մորգենթաուի «Քաղաքականությունը ազգերի միջև» աշխատությունից, մինչև Ջ. Լիսկայի, Ք. Ուոլթսի, Ս. Ուոլթի ուսումնասիրությունները, ռեալիստական գրականության մեջ անարխիկ համակարգի կարգավորման մեթոդ ու այնտեղ անվտանգություն հաստատելու գլխավոր մեխանիզմ է դիտվում «ուժերի հավասարակշռության» սկզբունքը, որը սահմանվում է որպես դաշինքների կերտման հիմք, սկզբնապատճառ (գործունեության արդյունք): Միջազգային հարաբերությունների անարխիկ համակարգի շարժիչ ուժ սահմանելով միջպետական մրցակցությունը՝ քաղաքական ռեալիզմի տեսաբան Ջ. Լիսկան կարծում է, որ «դաշինքներն առաջին հերթին ձևավորվում են ընդդեմ ինչ-որ բանի(մրցակից պետության քաղաքականության, սպառնալիքի)»¹⁰: Այլ կերպ ասած, ըստ ռեալիստների, դաշինքների առաջնահերթ նպատակը պետությանը սպառնացող վտանգին արձագանքելն ու հակադարձելն է: Ըստ այդմ, Հ. Մորգենթաուն առաջարկում է անարխիկ համակարգում մրցակից պետություններին հակադարձելու հնարավոր երեք ձև. «Առաջին դեպքում նրանք (պետությունները) կարող են ավելացնել իրենց ներուժը, երկրորդ դեպքում՝ կարող են իրենց ներուժին ավելացնել/հավելել հակառակորդի ներուժը, և երրորդ դեպքում կարող են հակառակորդին գրկել այլ երկրների աջակցությունից»¹¹: Վերջին երկու տարբերակների միջոցով ձևավորվում են ռազմաքաղաքական դաշինքները¹²: Շարունակելով դիտարկել դաշինքների ձևավորումը մեկնաբանող ռեալիստական մոտեցումները՝ նշենք, որ հեղինակավոր մեկ այլ տեսաբան՝ Ս. Ուոլթը,

⁸ Տե՛ս **M. N. Barnett, J. S. Levy**, նշվ. աշխ., էջ 369-395, **E. H. Fedder**, *The Concept of Alliance*, *International Studies Quarterly*, Vol. 12, № 1, Mar., 1968, էջ 65-86:

⁹ Տե՛ս **B. Posen**, *The Sources of Military Doctrine*, Ithaca/New York, 1984, էջ 62:

¹⁰ **G. Liska**, նշվ. աշխ., էջ 12:

¹¹ **H. J. Morgenthau**, *Politics Among Nations*, 5th Edition, New York: McGraw Hill, 1993, p. 197.

¹² Տե՛ս նույն տեղը:

հետազոտելով այդ գործընթացի պատմական նախադեպերը, պնդում է, որ «դաշինքների ձևավորումը որպես առաջնահերթ պատճառ, հիմնված է պետության կողմից ուժային հավասարակշռություն հաստատելու և մրցակցության պայմաններում հաղթանակին ուղղված քայլեր հաստատելու վրա՝ ի պատասխան մեկ կամ մի քանի պետության կողմից աճող վտանգի: Պետությունը որդեգրում է նման վարքագիծ, երբ մեկ այլ պետության՝ աճող ուժի մեջ իր համար վտանգ է տեսնում: Այս պարագայում պետությունը մրցակցի հաջողություններին ի պատասխան ձևավորում է նմանօրինակ շահեր հետապնդող երկրների խումբ, այն է՝ դաշինք»¹³: Ինչ վերաբերում է ուժային հավասարակշռության հիմնահարցին, ապա Ս. Ուոլթը, համաձայնելով Հ. Մորգենթաուի ու Ջ. Լիսկայի հետ, նշում է, որ «առկա վտանգի (ուժի, հզորության աճի) դեմ հավասարակշռություն ստեղծելուց զատ՝ դաշինքների ձևավորումը նպատակ ունի նաև հավասարակշռել ու համակշռել հեռանկարում ձևավորվելիք սպառնալիքները»¹⁴: Փաստորեն, քաղաքական ռեալիստները ուժերի հավասարակշռության ու դաշինքների ստեղծության մեջ որպես սպառնալիք համարում էին ոչ միայն մրցակցի պետության՝ իրենց ուղղված հակադիր շահերը, այլ նաև պետության հզորացումը, տնտեսական զարգացումը, որը հեռանկարում կարող էր հանգեցնել նրա կողմից նվաճողական քաղաքականության որդեգրման: Հենց այս տեսանկյունից դաշինքների ձևավորումը խնդիր ունի հակակշռելու հզորացող երկրներին՝ նրանց հեռանկարային ծրագրերի խափանման իմաստով: Միաժամանակ, դասական ռեալիստները մրցակցի երկրներից սեփական պետությանը սպառնացող վտանգները որոշակիացնում ու դասակարգում էին ըստ նրանց «հզորության և ուժի, դրա հեռահարության, վնասելու կարողունակության և մտադրությունների»¹⁵: Ըստ նրանց՝ ուժերի հավասարակշռության համակարգն այն հիմնական նպատակն է, որի համար ձևավորվում են դաշինքները, կռալիցիաները¹⁶: Այս պարագայում քաղաքական ռեալիզմի կողմնակիցները կարևորում էին հատկապես դաշինքների հնարավոր վարքի հստակեցումը, քանի որ հենց դա է պայմանավորում ոչ միայն դաշինքի ձևավորումը, այլ նաև նրա հետագա քաղաքականությունը: Դաշինքների վարքագծային հետազոտմանը նվիրված Օ. Հոսթլիի, Պ. Թոմսոնի, Ջ. Դ. Սալիվանի համատեղ աշխատության մեջ փորձ է արվում գտնելու դաշինքների ձևավորման ու նրանց վարքագծի միջև առկա կապը: Հեղինակները հանգում են այն եզրակացության, որ «սպառնալիքի մեծացումը մեծապես նպաստում է դաշինքի ամրությանը՝ հնարավորություն տալով նրան լինել առավել պատրաստ, առավել համարժեք ար-

¹³ S. M. Walt, նշվ. աշխ., էջ 19:

¹⁴ G. Liska, նշվ. աշխ., էջ 285:

¹⁵ S. M. Walt, նշվ. աշխ., էջ 264:

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

ձագանքել սպառնալիքին»¹⁷: Մա նշանակում է, որ դաշինքի ներքին ամրության ու միասնական վարքի որդեգրման հարցում առանցքային դերակատարում ունեն հատկապես սպառնալիքի բնույթը և ներուժը:

Դաշինքների ձևավորման, խաղաղության ու միջպետական հավասարակշռության հաստատման վերաբերյալ ազատական մոտեցման հիմքում ընկած են կանտյան փիլիսոփայության ելակետային դրույթները: Լիբերալիզմի կողմնակիցները կարծում են, որ «ուժերի հավասարակշռությունից» գատ խաղաղության հաստատման այլ հնարավորություններ ևս առկա են. մասնավորապես՝ հնարավոր է դաշինքներ ձևավորել ու պահպանել ոչ միայն ուժի դիրքերից, այլև գաղափարախոսությամբ: Իր՝ «Հարատև խաղաղություն» էսսեում Ի. Կանտը առաջարկում է միջպետական տիրույթում խաղաղության հասնելու որոշակի քայլերի հաջորդականություն: Այստեղ նա առաջնային է համարում ողջ աշխարհում «հանրապետական սահմանադրության» ընդունումը, որի նպատակը հետևյալն է. «Եթե պատերազմ հայտարարելու համար անհրաժեշտ լինի բոլոր քաղաքացիների համաձայնությունը, ապա առավել քան տրամաբանական է, որ նրանք (քաղաքացիները), հասկանալով հնարավոր պատերազմի բացասական բոլոր հետևանքները, շատ զգույշ կլինեն նման վտանգավոր ծրագրի իրականացումից՝ գիտակցելով կովելու, սեփական ռեսուրսներով պատերազմի համար վճարելու իրենց հանձնառությունը, ինչպես նաև պատերազմից հետո ցավոտ վերականգնման ու ֆինանսական փոխհատուցման ծանր բեռը»¹⁸: Ելնելով այս հանգամանքներից՝ քիչ հավանական է, որ քաղաքացիները համաձայնության կգան պատերազմ հայտարարելու հարցում, քանզի, ի տարբերություն մենիշխան կառավարողի, նրանք ստիպված են լինելու կրել պատերազմի ողջ բեռը¹⁹: Մա նշանակում է, որ, ի տարբերություն դաշինքների միջոցով հավասարակշռություն հաստատելու ռեալիստական մոտեցումների, լիբերալները կարծում են, որ խաղաղության հասնելու գործում ամենկարևոր դերակատարումն ունի հանրապետական սահմանադրությունը, այսինքն՝ քաղաքացիների կողմից «հանրապետական» գաղափարախոսության գործնական իրացումը: Լիբերալների վերոնշյալ մոտեցումների որոշակի «խմբագրված» դիրքորոշմամբ է հանդես գալիս մեկ այլ մտածող՝ Մ. Դոելը, ով պնդում է, որ «թեև ժողովրդավար պետությունները պակաս պատերազմող են՝ ի տարբերություն ոչ ժողովրդավարների, սակայն ինչ-ինչ պայմաններում այնուամենայնիվ «սահմանադրորեն անվտանգ ազատ պետությունները ստիպված են ներգրավվել միմյանց դեմ պատերազմների մեջ»²⁰: Թեև դժվար է տեսականորեն ու գործնականում բացատրել

¹⁷ O. Holsti, T. Hopmann, J. D. Sullivan, նշվ. աշխ., էջ 84, 143:

¹⁸ I. Kant, Perpetual Peace: A Philosophical Sketch, (1795), Accessed 2/23/11, <http://www.mtholyoke.edu/acad/intrel/kant/kant1.htm>

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

²⁰ M. W. Doyle, Kant, Liberal Legacies, and Foreign Affairs, Philosophy and Public Affairs, 12 (1983), Accessed 2/23/11, <http://www.jstor.org/stable/2265298213>

պատերազմների առկայությունը դեմոկրատական երկրների միջև, սակայն ժողովրդավարական կամ սահմանադրական կառավարման ձևերը խնդիրների լուծման ժամանակ սովորաբար գտնում են այլ տարբերակներ, քան պատերազմն է²¹: Այսինքն՝ կարելի է փաստել, որ դաշինքների փոխարեն ազատականները գերադասում էին ժողովրդավարության հիմքով միացյալ գաղափարական հանրությունների ձևավորումը, որտեղ մրցակցության ու բախման հետևանքներն ավելի ծանր կլինեին հանրային յուրաքանչյուր անդամի համար, քան համագործակցության ակնկալելի արդյունքի հեռանկարը:

Դաշինքների ձևավորման ու պահպանման կոնստրուկտիվիստական տեսության կողմնակիցները, գտնվելով կանտյան «իդեալիստական լիբերալիզմի» և ռեալիստների «անարխիկ» տեսության միջև, կարծում են, որ քաղաքական իրականությունը ձևավորվում է աշխարհի մեր ընկալման ու արժեքային որոշակիության միջոցով: Նրանք դաշինքները և խաղաղության հաստատումը բխեցնում են «անվտանգ համայնքների» տեսությունից, որի հիմնադիրն է Կ. Դոյչը: Վերջինս կարծում է, որ ««անվտանգ համայնքի» անդամները ֆիզիկապես չեն պայքարում միմյանց դեմ, և այլ ճանապարհով են լուծում առկա խնդիրները»²², քանի որ «այդ հանրույթը միաեղանակ է համատեղ առևտրի, զբոսաշրջության, մշակույթի և կրթության ոլորտներում փոխգործակցության միջոցով: Այս պայմաններում սոցիալական կառույցներն ու նորմերը, որ առկա են ոչ միայն քաղաքական էլիտաների, այլև զանգվածների մեջ, համայնքի շրջանակներում արմատավորում են ընդհանուրի գիտակցում»²³: Հարկ է նշել, որ Դոյչը համայնքի ներսում փոխգործակցությունն առաջին հերթին դիտում է որպես մշտապես փոխակերպվող գործընթաց՝ ավելացնելով, որ պետությունները համայնքներում կարող են միավորվել այնպես, որ այլևս չանհանգստանան իրենց համայնքի մեկ այլ անդամին հավասարակշռելու, նրա հետ մրցակցելու կամ դաշինքային անվտանգությունն ապահովելու մասին: Ըստ հեղինակի՝ անվտանգության հանրությունները կարող են ինտեգրվել ու դառնալ երկու առանձին մարմիններ՝ «միավորված անվտանգ համայնքներ» և «պլյուրալիստիկ անվտանգ համայնքներ»: Առաջին դեպքում նա դիտարկում է դաշնային միավորները (օրինակ՝ ԱՄՆ), մինչդեռ երկրորդի պարագայում մատնանշում է հավաքական անվտանգության համակարգերը (օրինակ՝ ՆԱՏՕ)²⁴: Ի տարբերություն կանտյան լիբերալիզմի՝ կոնստրուկտիվիստները համայնքների զարգացումը չեն սահմանափակում միայն ժողովրդավարությամբ, քանի որ այս դեպքում կարևոր է նաև, որ անվտանգության հանրությունը լինեն մրցակ-

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 218-221:

²² **Karl W. Deutsch**, The analysis of international relations, Foundations of modern political science series, Published 1968, p. 131-133.

²³ Նույն տեղում, էջ 135:

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 137-139:

ցությունը ետին պլան մոդոլ մշակութային ու աշխարհայացքային ընդհանրություններ:

Դաշինքների, խաղաղության ու պատերազմի հարցերը քննարկվել են նաև ժամանակակից միջազգային հարաբերությունների կարևորագույն տեսություններից մեկի՝ նեոռեալիզմի ներկայացուցիչների կողմից: Դաշինքներ ստեղծելու պետությունների վարքագիծը մանրագնին ուսումնասիրվել է Ք. Ուոլթսի կողմից: Վերջինս չի սահմանափակվում ուժերի հավասարակշռության տեսության դիտարկմամբ՝ գտնելով, որ միայն դա չի կանխատեսում դաշինքների վարքագիծը²⁵: Թեև որոշակի սպառնալիքի պարագայում պետությունները դաշնակցում են, սակայն այդ դաշինքի արդյունավետությունը կախված է դրա կառավարվումից, և այն բանից, թե որքան ամուր են փոխադարձ պարտավորությունները: Ուոլթսի հիմնական փաստարկը հետևյալն է. «Որքան ամուր է դաշինքի ներքին կապակցվածությունը, և որքան մեծ է դաշինքի առաջնորդ-պետության արտաքին վտանգին հակադրվելու ներուժը, այնքան ճկուն է դաշինքի ներսում քաղաքականությունը»²⁶: Նրա կարծիքով, դաշինքների արդյունավետության գործակիցն ուղղակիորեն կախված է դաշինքի անդամների փոխադարձ վերաբերմունքից ու դիրքորոշումների միատարրությունից²⁷: Ուստի բազմաբևեռ աշխարհում դաշինքներն իրենց քաղաքականության մեջ առավել պակաս ճկուն են, քանի որ նրանց միջև հավասարությունը անգամ փոքրիկ ներազդեցությունների ներքո կարող է շատ արագ փոխվել: Ի հակադրություն դրա՝ երկբևեռ աշխարհը թույլ է տալիս դաշինքների առաջնորդներին առավել մեծ վերահսկողություն սահմանել իրենց դաշինքների քաղաքականության նկատմամբ, քանի որ փոքր խաղացողների ներդրումները թեև ցանկալի են, սակայն անհրաժեշտ չեն դաշինքի լիդերին իր իշխանությունը պահելու համար²⁸: Այս պարագայում, որպես միջդաշինքային համագործակցության արդյունավետության կարևոր նախապայման, հետազոտողներ Օ. Հոլսթին, Թ. Հոֆմանն ու Դ. Սալիվանը առանձնացնում են 4 հիմնական ցուցիչ՝ գաղափարական միատարրությունը, վարչակարգի կայունությունը, նպատակների միասնությունը և համակարգային հատկանիշները²⁹:

Դաշինքների մեկնաբանման այլ տարբերակ են առաջարկում միջազգային հարաբերությունների տեսության ինստիտուցիոնալիստական ուղղության ներկայացուցիչները, ովքեր դաշինքները կապում են միջազգային ինստիտուտների համակարգի հետ: «Ինստիտուտը, - ինչպես մեկնաբանում է այդ մոտեցման կողմնակից Ռ. Օ. Կոենը, - տա-

²⁵ Տե՛ս **K. Waltz**, *Man, the State, and War: A Theoretical Analysis*, New York: Columbia University Press, 1959, նշվ. աշխ., էջ 122-123:

²⁶ Նույն տեղում, էջ 165:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 166-167:

²⁸ Տե՛ս նույն տեղը:

²⁹ Տե՛ս **O. Holsti, T. Hopmann, J. D. Sullivan**, նշվ. աշխ., էջ 168-169:

րածության և ժամանակի մեջ կանոնների և նորմերի ընդհանուր ճանաչելի համակարգ է, որը կարող է վերածվել հստակ գործառույթ ու ուղղվածություն ունեցող կառույցի»³⁰: Դաշինքները, ըստ ինստիտուցիոնալիստների, կառույցներ են, որոնց «ամրությունն ու ուժը կախված է նրանց ինստիտուցիոնալ բնութագրերից (պետությունների՝ դաշինքներին հանձնառու լինելու աստիճանը, շահերի միատարրության չափը, ներքին գործողությունների իրականացման ամբողջականությունը և այլն)»³¹: Ինստիտուցիոնալիստները նշում են, որ պետությունները անխուսափելիորեն ենթարկվում են որոշակի սահմանափակումների՝ պայմանավորված դաշինքների շրջանակներում իրենց գործունեությանը, և փաստում, որ դա դաշինքային վարքի ուղղակի հետևանք է: Նրանք, չմերժելով դաշինքների ձևավորման վերաբերյալ ռեալիստական տեսությունների որոշ հիմնավորումներ, դրանց մեջ կարևորում են հատկապես ինստիտուտների առանձնահատուկ դերակատարումը³²:

Ընդհանրացնելով դաշինքների, նրանց ձևավորման ու նրանց միջոցով անվտանգության հաստատման տեսահայեցակարգային մոտեցումները՝ կարելի է կատարել մի քանի միջանկյալ եզրակացություններ, որոնց համաձայն՝ քաղաքական ռեալիստները փաստում էին, որ միջազգային անարխիկ համակարգի հիման վրա ձևավորվող դաշինքները նպատակ ունեին հավասարակշռելու պետությունների միջև առկա ուժային անհամաչափ բաշխումը: Ազատականները դաշինքների ձևավորման հարցում կարևորում էին ժողովրդավարական գաղափարախոսության դերը, մինչդեռ կոնստրուկտիվիստները դաշինքների ամենից արդյունավետ ու ընդունելի տարատեսակ համարում էին «անվտանգության հանրույթները»: Շարունակելով դասական ռեալիզմի տեսական պնդումները՝ նեոռեալիստները դաշինքների գնահատման ժամանակ կարևորում էին ներդաշինքային ամրության աստիճանը և դաշինքների վարքը, մինչդեռ ինստիտուցիոնալիստները դաշինքների քաղաքականությունը կապում էին նրանց ինստիտուցիոնալ նկարագրի ու առանձնահատկությունների հետ:

Դաշինքները դիտարկելով կառուցվածքային-գործառական վերլուծության դիրքերից՝ կարելի է նշել, որ սկսած ձևային (ֆորմալ) ինստիտուցիոնալ ռազմապաշտպանական դաշինքներից (օրինակ՝ ՆԱՏՕ) մինչև ոչ ձևային, սակայն անվտանգության ու դիվանագիտության ոլորտում համագործակցության երկարաժամկետ համաձայնություններ (ինչպիսիք առկա են ԱՄՆ-ի ու Իսրայելի միջև)՝ կարող ենք արձանագրել, որ միջազգային հարաբերությունների նորագույն շրջանում դաշինքները դառնում են խիստ բազմազան՝ կախված առաջադրվող նպա-

³⁰ R.O. Keohane, L.L. Martin, The Promise of Institutional Theory, International Security 20, № 1, Summer, 1995, p. 161.

³¹ Նույն տեղում, էջ 162:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 169:

տակներից, դրանց իրականացման ձևերից, փոխհարաբերությունների բնույթից ու պատասխանատվության մակարդակից: Եթե նկատի ունենանք ներկայումս տարբեր տարածաշրջաններում տարբեր պարբերականությամբ ձևավորվող միություններն ու կոալիցիաները, ապա դաշինքների բնորոշումն այսօր ավելի է բարդացել:

Դիտարկելով ու վերլուծելով միջազգային հարաբերությունների պատմությանը հայտնի դաշինքների տարբեր օրինակներ³³ նշենք, որ դաշինքները միմյանցից տարբերվում են իրենց անդամ պետությունների ստանձնած հանձնառությունների աստիճանով ու ձևով, ինչպես նաև համագործակցության բնույթով և նպատակով³⁴: Այս դեպքում պետության հանձնառությունը ներկայանում է որպես նախապես արձանագրված ու հստակեցված իրավիճակում պետության ստանձնած պարտադիր կատարման ենթակա պարտավորությունների, քայլերի ու բռնազորի ամբողջություն, որը բխում է կամ դաշինքի կանոնադրությունից, կամ նրա անդամների փոխադարձ ձևային կամ ոչ ձևային պայմանավորվածություններից: Պետությունների փոխադարձ հանձնառության աստիճանը բնորոշվում է նրանց գործընկերային հարաբերությունների մակարդակով և դասակարգվում է փոխհարաբերությունների բնորոշման («սերտ», «բարիդրացիական», «սառը» և «ակտիվ հակադրության») միջակայքում: Դաշինքները, համաձայն իրենց անդամ-պետությունների ստանձնած հանձնառության ձևի, բաժանվում են «ձևային» (ֆորմալ)³⁵, «ոչ ձևային» (ինստիտուցիոնալ)³⁶ կամ «ad hoc»³⁷ տարատեսակների: Դաշինքների բնորոշման ու տարանջատման գործընթացում պետության ստանձնած հանձնառության բնույթը նույնպես խիստ կարևոր է: Այն կանխորոշում է սպառնալիքի կամ դաշինքի անդամների կողմից նախապես հստակեցված պայմանների դեպքում անդամ երկրների որդեգրելիք պաշտպանական կամ խորհրդակցական վարքաձևը, որը կարող է լինել ինչպես փոխադարձ, այնպես էլ միակողմանի³⁸, ինչպես դե յուրե, այնպես էլ դե ֆակտո:

³³ Անվտանգության խաղաղօվկիանոսյան պակտ, Պաշտպանության տարածաշրջանային համակարգ (Կենտր. Ամերիկա), Փոխադարձ աջակցության միջամերիկյան պայմանագիր, Չմիացման շարժում, Համագործակցության Շանհայի կազմակերպություն, Աֆրիկյան միություն, Բալթիկ ծովի պետությունների միություն և այլն:

³⁴ Գ. Մնայդերը ձևային դաշինքները դասակարգում է համաձայն հետևյալ չափանիշների՝ մեծություն, ուղղվածություն (միակողմ, երկկողմ, բազմակողմ), նպատակ, պարտավորությունների սահմանաչափ, պարտավորությունների ձև, ժամկետ (տե՛ս **G. Snyder**, *Alliance Politics*, Cornell University Press, Ithaca, New York, 1997, էջ 12-16):

³⁵ Ձևային դաշինքների օրինակներ կարող են համարվել ՆԱՏՕ-ն, ՀԱՊԿ-ն և այլն:

³⁶ Ոչ ձևային ինստիտուցիոնալ դաշինքի օրինակ է ԱՄՆ-ի ու Իսրայելի ռազմավարական հարաբերությունները:

³⁷ «Ad hoc» լատիներեն ձևակերպում, որ նշանակում է տվյալ դեպքի, կոնկրետ իրավիճակի համար. <http://dictionary.reference.com/browse/ad-hoc>: **Միջազգային հարաբերությունների պատմությանը հայտնի են «ad hoc» կոալիցիաների բազմաթիվ օրինակներ**. 1991 թ. հակասառայան կոալիցիայում, որ առաջնորդվում էր ԱՄՆ-ի կողմից, ընդգրկված էր 38 երկիր:

³⁸ Տե՛ս **Gibler, Douglas M., M. R. Sarkees**, *Measuring Alliances: The Correlates of War Formal Interstate Alliance Dataset, 1816–2000*, *Journal of Peace Research*, Vol. 41, № 2, 2004, էջ 211–222:

Դաշինքների որոշակիացման ու դասակարգման հաջորդ կարևոր բաղադրիչը դաշինքում առկա համագործակցության նպատակն է, որը պայմանավորում է, թե ում դեմ է ուղղված դաշինքը, արդյոք այն ուղղակիորեն թիրախավորում է մեկ պետություն, պետությունների միություն, թե ուղղված է համակարգին սպառնացող վտանգների՝ առավել լայն միջակայքի դեմ: Ինչ վերաբերում է դաշինքում առկա համագործակցության բնույթին, ապա այն սահմանում է պետությունների միջև շփումներում կիրառվող միջոցների ու մեխանիզմների տեսակները (ռազմական, քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և այլն):

Անդրադառնալով արևմտյան գիտական գրականության մեջ դաշինքների մեկնաբանման առկա մոտեցումներին՝ կարող ենք ասել, որ այստեղ հատկապես աչքի են ընկնում միջազգային հարաբերությունների ու քաղաքագիտության ամերիկյան դպրոցի ներկայացուցիչները, ովքեր «դաշինք» հասկացությունը՝ նրա բովանդակային ու գործառական ամենատարբեր ասպեկտներով, դարձրել են իրենց հետազոտությունների հիմնական օբյեկտներից մեկը: Այս առումով արևմտյան գիտական գրականության մեջ առկա բազմաթիվ ու բազմապիսի մեկնաբանություններն ու սահմանումները կարելի է բաժանել երկու հիմնական՝ նեղ և լայն մոտեցումների: Դաշինքների սահմանման նեղ մոտեցման մեջ շեշտը դրվում է դաշինքի պետությունների հանձնառության ձևային բնույթի վրա³⁹: Դաշինքների նեղ սահմանման ամենից տարածված տարբերակը առաջարկել է Գ. Մնայդերը. «Դաշինքը որոշակի հանգամանքներում դաշինքից դուրս գտնվող պետությունների դեմ ռազմական ուժի կիրառման կամ չկիրառման պետությունների ֆորմալ միություն է»⁴⁰: Դաշինքի նեղ սահմանման մի շարք կողմնակիցներ շեշտը դնում են կողմերի գրավոր համաձայնության, պայմանագրի վրա, մյուսները դաշինքը սահմանում են համաձայն նրա առաջադրած նպատակների⁴¹:

Դաշինքների սահմանման լայն մոտեցումը նույն չափով չի կենտրոնանում ձևային հանձնառության վրա, ինչպես նախորդը⁴²: Արևմտյան գիտական գրականության մեջ դաշինքների մեկնաբանման լայն մոտեցման ամենից տարածված սահմանումը մշակել է Ս. Ուոլթը. «Դաշինքներն ու կոալիցիաները անվտանգության ոլորտում համագործակցության նպատակով երկու կամ ավելի ինքնիշխան երկրների

³⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **L. R. Beres**, Bipolarity, Multipolarity, and the Reliability of Alliance Commitments, *The Western Political Quarterly*, Vol. 25, № 4, Dec., 1972, էջ 702-710, **G. Snyder**, The Security Dilemma in Alliance Politics, *World Politics*, Vol. 36, № 4, Jul., 1984, էջ 461-495, **J. Morrow**, Alliances and Asymmetry: An Alternative to the Capability Aggregation Model of Miller & Toritsyn, 2005, էջ 15:

⁴⁰ **G. Snyder**, նշվ. աշխ., էջ 4:

⁴¹ Տե՛ս **Gibler, Douglas M., M. Reid Sarkees**, նշվ. աշխ., էջ 233:

⁴² Տե՛ս **S. M. Walt**, նշվ. աշխ., էջ 139, **S. R. David**, Explaining Third World Alignment, *World Politics* Vol. 43, № 2, January, 1991, էջ 233:

միջև ձևային ու ոչ ձևային համաձայնություններ են»⁴³: Չնայած Ուոլթի առաջարկած մոտեցումը բավական արժեքավոր է, սակայն նա ըստ էության նույնացնում է «դաշինքներ» ու «կոալիցիաներ» հասկացությունները, որոնք մի շարք բնորոշիչներով էականորեն տարբերվում են միմյանցից⁴⁴:

Կարծում ենք, որ, բացի դաշինքների մեկնաբանման լայն ու նեղ մոտեցումները դիտարկելուց, հարկ է ներկայացնել այդ երկու հիմնական մոտեցումների միջակայքում ձևավորված առավել հեղինակավոր մի քանի այլ մեկնաբանություններ ևս, որոնք «դաշինք» հասկացությունը փորձում են բացատրել տարբեր տեսանկյուններից: Այս առումով հիշատակման արժանի է Օ. Հոլսթիի, Թ. Հոֆմանի և Ջ. Մալիվանի տեսակետը. «Դաշինքը ձևային համաձայնություն է երկու կամ ավելի պետությունների միջև՝ ուղղված ազգային-պետական անվտանգության հարցերում համագործակցության ծավալմանը»⁴⁵: Ըստ հեղինակների՝ դաշինքի բնորոշման հարցում առանցքային է երեք հիմնական բաղադրիչների առկայությունը՝ բաց կամ գաղտնի բնույթի ձևային համաձայնագրի առկայություն, կապ պետության ազգային անվտանգության հարցերի հետ և դաշինքի անդամների ազգային պետություն լինելը⁴⁶: Դաշինքներին վերաբերող հետազոտություններում հաջորդ կարևոր սահմանումը տվել են Մ. Սմալը և Դ. Սինգերը, ովքեր, ուսումնասիրելով միջազգային հարաբերությունների պատմության ընթացքում ձևավորված բազմաթիվ ձևային դաշինքներ, տարանջատում են դաշինքների երեք տարատեսակ՝ պաշտպանական պակտեր, չեզոքության կամ ոչ նվաճողական պակտեր և միություններ (ententes)⁴⁷: Նրանց համոզմամբ՝ դաշինքի հիմնարար պայմանագիրը ստորագրող կողմերից առնվազն երկուսը պետք է լինեն անկախ ազգային պետություններ (առնվազն կես միլիոնից ավելի բնակչությամբ), որոնց ինքնիշխանությամբ

⁴³ S. M. Walt, նշվ. աշխ. էջ 12:

⁴⁴ Այստեղ հարկ է նշել, որ հեղինակների մի մասի կողմից դաշինքների ու կոալիցիաների ընդհանրացումը և հումանիշ դարձնելը հիմնավոր չեն առնվազն մի քանի պատճառներով: Նախ կոալիցիաները ձևավորվում են խիստ որոշակի ժամանակով և ունենում են «ad hoc» բնույթ: Երկրորդ կոալիցիաները ձևավորվում են կոնկրետ խնդիրներ լուծելու համար և սովորաբար միմյանց նկատմամբ իրավական առումով ամրագրված անվտանգային պարտավորություններ չեն ունենում: Երրորդ կոալիցիաները հաճախ ձևավորվում են պատերազմական պայմաններում՝ հակադարձելու հակառակորդ կողմին, այսինքն՝ նրանց մեջ մտնող երկրների շահերի համընկնելն առավելապես մասնակի է, քան ընդհանուր: Այսպիսով, այս համատեքստում կոալիցիան կարելի է ներկայացնել որպես «անվտանգության ոլորտում ձևային/ոչ ձևային, ոչ ինստիտուցիոնալ և «ad hoc» բնույթի երկու կամ ավելի ինքնիշխան պետությունների միջև ձևավորված համագործակցություն՝ որպես արձագանք կոնկրետ իրավիճակում որոշակի խնդիրներ լուծելու համար» (առավել մանրամասն տե՛ս P. A. Weitsman, Alliance cohesion and coalition warfare, Security Studies, Volume 12, Number 3, Spring, 2003, էջ 79-113, J. D. Morrow, A Spatial Model of International Conflict, / American Political Science Review, 80, 1986, էջ 1131-1150:

⁴⁵ O. Holsti, T. Hopmann, J. D. Sullivan, նշվ. աշխ., էջ 4:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 117:

⁴⁷ Տե՛ս M. Small, J. D. Singer, The War Proneness of Democratic Regimes, / Jerusalem Journal of International Relations, Vol. 1, 1976, էջ 50-69:

յունը պետք է ճանաչված լինի տվյալ ժամանակաշրջանի առնվազն երկու առաջատար պետության կողմից:

Ամփոփելով վերը ասվածը՝ փորձենք որոշակիացնել ու հստակեցնել պետությունների փոխհարաբերություններում առկա այն հիմնական ցուցանիշները, որոնց հիման վրա ստեղծված հարաբերությունները կարող են բնութագրվել որպես դաշինք:

Փաստորեն դաշինքները համաձայնություններ են պետությունների միջև: Այսուհանդերձ, կարևորն այն չէ, թե արդյոք պետությունը պաշտոնապես ճանաչվել կամ ընդունվել է միջազգային հանրության կողմից, այլ այն, որ նա ունենա անկախ իշխանական ինստիտուտներ, անհրաժեշտ ռեսուրսներ ու ներուժ որոշակի տարածքի վրա որոշակի բնակչության կառավարելու համար: Մա կարևոր է այն առումով, որ միայն դե ֆակտո առկա պետության բաղադրատարրերի դեպքում է հնարավոր պետական-քաղաքական միավորի ինտեգրումը դաշինքին՝ վերջինիս համար դրանից բխող դերային պարտադիր վարքով:

Դաշինքները հստակ սահմանված համաձայնության ձևեր են: Այս պարագայում առանցքայինն այն չէ, թե այդ համաձայնությունները հաստատվել են կողմերի միջև ձեռքստեղծումով, թե իրավական համաձայնագրերով, այլ այն, որ դաշինքի կողմ միավորները՝ պետությունները, ընդունեն, որ իրենց միջև առկա է համաձայնություն, որից բխում են համապատասխան փոխադարձ պարտավորություններ: Այսպիսով, դաշինքի կողմերը անվտանգության ապահովման դեպքում այս հիմքով կարող են փոխադարձ հաշվարկներ կատարել և համապատասխան ակնկալիքներ ունենալ:

Դաշինքների դեպքում գործ ունենք ապագայում հնարավոր անկանխատեսելի իրավիճակում պետության կողմից հստակ ենթադրելի ու կանխավ նախատեսված վարքագծի (հանձնառության) հետ: Դաշինքները գերազանցապես կենտրոնացած են ապագայում ակնկալվող իրադրության պայմաններում՝ այսպես կոչված «casus foederis»⁴⁸ հիմքով, իրենց անդամ պետությունների հստակ վարքագծի ապահովման վրա: Այս բաղադրիչով տարբերակվում են դաշինքները անվտանգային համագործակցության այլ ձևերից կամ ոչ նվաճողական պակտերից, որոնք ենթադրում են որոշակի վարքագիծ կողմերի միջև առկա համաձայնագրի գործողության ողջ ընթացքում: Նման պարագայում հարկ է նշել, որ համաձայնագրով կամ ոչ ձևային պայմանավորվածությամբ որոշակիացված իրադարձությունը կամ իրավիճակը, որի դեպքում նախատեսված է անդամ պետության վարքագծի դրսևորում, անորոշ է. կողմերը չգիտեն, թե երբ այն տեղի կունենա, ինչ քաղաքական համատեքստում, ինչ դրսևորում կունենա և առհասարակ երբևէ տեղի կունե-

⁴⁸ Միջազգային իրավունքի սկզբունք, որ նշանակում է «կողմերի միջև առկա համաձայնագրով նախատեսված պայմանագրային պարտավորությունների ուժի մեջ մտնելու դեպք, իրադրություն», http://dic.academic.ru/dic.nsf/latin_proverbs/402/Casus

նա, թե ոչ: Սա է դաշինքների տարբերությունը ընթացիկ կոալիցիաներից, որոնք ձևավորվում են որոշակի հստակ ժամանակահատվածի համար, օրինակ, պատերազմների ժամանակ:

Դաշինքը գործնականում փոխադարձ խոստում է, որը ներառում է աջակցություն պայմանագրում նշված իրադրության դեպքում (սովորաբար հարձակում կողմերից մեկի վրա): Սա գործնականում ենթադրում է, որ դաշինքի հիմքում հավաքական անվտանգության ու պաշտպանության համակարգն է: Այդ աջակցությունն իրականանում է սեփական ռեսուրսների հաշվին: Ըստ այդմ՝ «casus foederis»-ի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է հաշվարկել իր, ինչպես նաև հնարավոր դաշինքի անդամների արտաքին ռեսուրսները: Սա նշանակում է, որ կողմերից յուրաքանչյուրը սպառնալիքի դեպքում պետք է հաշվարկի ոչ միայն արտաքին աջակցության առավելությունները, այլ նաև գործընկերոջ համար հակամարտության մեջ ներգրավվելու խոցելի (ռիսկային) կողմերը, ուստի նաև այն բարձր գինը, որ այդ դեպքում պետք է վճարի ինքը: Այս բաղադրիչով դաշինքները տարբերվում են չեզոքության պակտերից և միություններից, քանի որ չեզոքության պակտերը առավելապես նախատեսում են չավելացնել թշնամու ռեսուրսները, իսկ միությունները նախատեսում են միայն անորոշ խորհրդատվություններ ճգնաժամի դեպքերում:

Դաշինքում առկա համաձայնությունը վերաբերում է պետության ազգային անվտանգության տիրույթին: Այս բաղադրիչը թեև կարող է ակնհայտ թվալ, սակայն շատ կարևոր է, քանզի միայն այս ոլորտում է, որ անվտանգության ռիսկն այնչափ մեծ է, որ կարող է առնչվել պետության՝ որպես ինքնիշխան միավորի գոյության խնդրին: Դա դաշինքներին տալիս է կարևորության նոր որակ և նրանց տարբերակում արտաքին քաղաքականության այլ ոլորտների՝ ֆինանսական, առևտրային և այլ համաձայնագրերից: Վերաբերելով պետական անվտանգության ոլորտին՝ դաշինքներում առկա ռիսկերի նվազեցման ու վերացման հանձնառություններն ունեն ռազմավարական բնույթ և միտված են պետության կենսական շահերի ապահովմանը:

Ամփոփելով նշենք, որ հիմք ընդունելով դաշինքների բնորոշման վերոնշյալ բաղադրիչները, ինչպես նաև նախորդ հետազոտողների արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է փաստել, որ դաշինքը մեկնաբանվում է որպես պետական անվտանգության ոլորտում պետությունների միջև հստակ համաձայնություն, որով գործընկերները որոշակի անկանխատեսելի դեպքերում խոստանում ու հանձնառու են դառնում՝ ներդնելով էական ռեսուրսներ, փոխադարձ աջակցություն ցուցաբերել միմյանց:

Բանալի բառեր – *դաշինք, կոալիցիաներ, քաղաքական ռեալիզմ, ուժերի հավասարակշռության համակարգ, ՆԱՏՕ*

АЛЕН ГЕВОНДЯН – Теоретико-концептуальные подходы к определению альянса в западном научном дискурсе. – Альянсы традиционно играли важную роль в международных отношениях как элемент национальной безопасности и национальных интересов. Концепция альянсов анализируется в статье с точки зрения различных теорий – реализма, неореализма, идеализма, конструктивизма и институционализма с учетом мнения разных авторов. Ныне имеют место различные определения, часто противоречащие друг другу. В статье даны основные характеристики понятия "альянс" в западной научной литературе, а также предложено его новое определение, теоретически обоснованное и одновременно практическое.

Ключевые слова: альянс, коалиция, политический реализм, система равновесия сил, НАТО

ALEN GHEVONDYAN – Theoretical-Conceptual Approaches of the Concept of Alliances in Western Scientific Discourse. – The alliances and their policy traditionally played an important role in international relations. They were often part of national security and national interest. And it is natural that the concept of alliances has been widely discussed, interpreted and defined by different theories of international relations (realism neorealism, idealism, constructivism and institutionalism), as well as by different authors, who developed the concept by using the structural and functional analysis method. As a result, we have a variety of definitions that contradict each other and lead to misunderstanding of the concept. In this article, we try to define the fundamental characteristics of the concept of alliances by analyzing the western scientific literature about the topic. We also suggest a new comprehensive definition of the concept of alliance, which is theoretically thorough and concurrently practical.

Key words: alliance, coalitions, political realism, balance of power, NATO

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՄԱԳՐԱ ԱՐՄԵՆՅԱՆ

Խորհրդարանական մշակույթի ժողովրդավարական փոխակերպման քաղաքական գործընթացների հոլովությունում հրատապ է դառնում խորհրդարանի և սոցիումի միջև երկխոսության կայացումը՝ երկրի ներպետական և միջազգային մակարդակներում սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման դիտանկյունից:

Քաղաքակրթական զարգացման մակարդակին և ազգային ու պատմական առանձնահատկություններին զուգահեռ՝ խորհրդարանական մշակույթը անընդհատ փոխակերպվում է: Ժողովրդավարության անցումային ժամանակաշրջանում պետությունների ներկայացուցչական ինստիտուտների համար կարևոր է խորհրդարանական մշակույթի՝ միջազգային չափանիշներին համապատասխան պետական կառավարման ձևի և քաղաքական համակարգի արդյունավետության ապահովումը: Քանի դեռ խորհրդարանի և հասարակության միջև չի հաստատվում ազգային ինքնության և պատմական հիշողության հիման վրա ձևավորված երկխոսություն, կուսակցությունների միջև բախման գործընթացները կրում են շարունակական բնույթ՝ խարխլելով խորհրդարանական մշակույթի կայացման ինստիտուցիոնալ հիմքերը: Ժողովրդավարացման պայմաններում սոցիումի և խորհրդարանի միջև ազգային երկխոսության կարևոր պայման է ազգային շահերի գիտակցումը¹, ինչպես նաև դրանց իրականացումը ներպետական և արտաքին քաղաքական հարթակներում:

Խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացը դիտարկելիս անհրաժեշտություն է առաջանում կիրառել այնպիսի գապումների և հակակշիռների համակարգ, որը հնարավորություն կտա հանրային իշխանության և սոցիումի միջև փոխհամաձայնության եզրեր գտնել:

Քաղաքագիտական գրականության մեջ առկա են «խորհրդարանական մշակույթ» հասկացության բազմաթիվ սահմանումներ: Խորհրդարանական մշակույթի տարբեր գործառնությունները դիտարկել են Պլատոնը, Արիստոտելը, Ն. Մաքիավելին, Թ. Շոբսը, Ջ. Լոկը, Ժ. Ժ. Ռուսոն, Բ. Կանտը, Յ. Հերդերը, Հեգելը, Ջ. Ս. Միլը, Հ. Սպենսերը, Գ. Լեբոնը, Գ. Ալմոնդը, Ս. Վերբան, Ն. Բոգդանովան, Ֆ. Բուռլացկին և ուրիշներ: Նրանց հայեցա-

¹ Ст' у Савченко И. А. Современные методы осуществления диалога между государством и обществом // http://psyjournals.ru/files/64939/6_Savchenk.PDF (Այցելված 12.01.2016թ.):

կարգերում կարևորվել են խորհրդարանական մշակույթի քաղաքական, հաղորդակցական, սոցիալականացման, ճանաչողական, կարգավորման, համախմբման և ինտեգրացման գործառույթները²: Բացի այդ խորհրդարանի սոցիալ-քաղաքական բնույթի ուսումնասիրությանը և քաղաքական ներկայացուցչության դասակարգմանն իրենց աշխատություններում անդրադարձել են Ա. Բիրչը, Է. Մակլինը, Է. Հեյվուդը և այլք:

Ըստ Ֆ. Բուլդացկու՝ խորհրդարանական մշակույթն ազգային և վերազգային հանրույթի ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ պատմական ու սոցիալական փորձն է, որն իր ազդեցությունն է ունենում պետության և սոցիումի քաղաքական գիտակցության, պետական կառավարման սուբյեկտների քաղաքական վարքագծի, քաղաքական զարգացումներին հասարակության կողմից տրվող քաղաքական գնահատականների ձևավորման վրա³: Վերջապես, խորհրդարանական մշակույթը արժեքաբանական ոլորտ է, որը ձևավորվել է մշակութային և պատմական զարգացման ընթացքում՝ հիմնվելով ժողովրդավարության համախմբման և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեխանիզմների վրա: Այդպիսով, խորհրդարանական մշակույթը համարվում է քաղաքացիական հասարակության բնորոշման կարևորագույն նախապայման. խորհրդարանական մշակույթի զարգացումը, դրա ինստիտուցիոնալ առանձնահատկություններն ու կառուցվածքն ի վերջո սահմանում են քաղաքացիական հասարակության բովանդակությունը և զարգացումը: Այս առումով Գ. Ալմոնդը և Մ. Վերբան անդրադառնալով քաղաքացիական մշակույթի հիմնահարցերին, հանգեցին այն եզրակացության, որ ժողովրդավարական քաղաքական համակարգի կայունությունը և գործունակությունը պայմանավորված են ոչ միայն ժողովրդավարական ինստիտուտների սահմանադրական և իրավական բնույթով, այլև քաղաքական համակարգի, նրա մուտքերի ու ելքերի և քաղաքացու կողմից այդ համակարգում իր դերի վերարժևորմամբ⁴:

Ժամանակակից քաղաքական գիտության մեջ գործառում են խորհրդարանական մշակույթի մեկնաբանման երկու տարբեր մոտեցումներ: Համաձայն առաջին մոտեցման՝ խորհրդարանականությունը համադրվում է «պետականագիտության» հետ, որի շրջանակներում

² St' u Гердер И. Г. Идеи к философии истории человечества. М., 1977, Алмонд Г., Верба С. Гражданская культура и стабильность демократии // "Политические исследования", 1992, № 4, էջ 122-134, Арон Р. Демократия и тоталитаризм. М., 1993, Баталов Э. Я. Политическая культура современного американского общества. М., 1990, Гирц К. Интерпретация культур. М., 2004, Ильин А. Н. Массовая культура и субкультура // "Социология культуры", 2010, № 2, էջ 69-82, Ирхин Ю. В. К вопросу о кросскультурных исследованиях: Восток – Запад // "Социологические исследования", 2005, № 2, էջ 131-134, Ладатко Л. В. Этика и культура управления: учебное пособие. Ростов на-Дону, 2006, Сутор Б. Политическая этика // "Политические исследования", 1993, № 1, էջ 61-71:

³ St' u Бурлацкий Ф. М. Социологические проблемы политики // "Социальные исследования". Выпуск 5. М., 1970, էջ 49-50:

⁴ St' u Алмонд Г., Верба С. Гражданская культура: политические установки и демократия в пяти странах. М., 2014, էջ 283-322:

խորհրդարանական մշակույթը դիտվում է որպես պետական կառավարման ձև: Այսինքն՝ տվյալ պարագայում խորհրդարանական մշակույթը կարելի է համարել միայն որպես պետական կառավարման կազմակերպման միջոց, որի հիմքում ընկած է պետական իշխանության գործառույթային համակարգը: Ըստ երկրորդ մոտեցման՝ խորհրդարանական մշակույթը հիմնվում է քաղաքացիական հասարակության կողմից գործադրվող վերահսկողության գործառույթների և սկզբունքների վրա: Գիտության մեջ առկա բազմակողմ մեկնաբանությունները հնարավորություն են տալիս հարակից քաղաքական կատեգորիաների համատեքստում դիտարկել խորհրդարանական մշակույթ կատեգորիան: Մասնավորապես Գ. Բուրդոն խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացում կարևորում է հետևյալ սկզբունքները՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների իրավահավասարություն, դրանց համագործակցություն և միմյանց նկատմամբ փոխազդեցության մեխանիզմների առկայություն⁵: Այդ իսկ պատճառով խորհրդարանական մշակույթը հաճախ մեկնաբանում են որպես քաղաքական գիտակցության մարմնավորում: Այս առումով հստակ դիրքորոշում ունի ամերիկացի հետազոտող Ա. Ջենինգսը, ով խորհրդարանի հիմնական գործառույթ է դիտում քննադատությունը, այլ ոչ թե կառավարումը: Ըստ նրա՝ քննադատությունն ուղղված է ոչ թե կառավարության քաղաքականության էական կերպավորմանը, այլ պետականամետ քաղաքական գիտակցության կայացմանը: Խորհրդարանական մշակույթը պետք է երաշխավորի խորհրդարանում հնչող ելույթներին ուղղված սոցիումի տված քաղաքական գնահատականների ձևավորումը: Խորհրդարանական մշակույթի ուժը քաղաքացիական մշակույթի կայացումն է⁶: Օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հավասարակշռող մեխանիզմ է ծառայում քաղաքական գիտակցությունը: Քաղաքացիական մշակույթ կրող հասարակության անդամները ոչ միայն ունեն քաղաքական համակարգի և դրանում իրենց տեղի ու դերի մասին պատկերացումներ, այլև տիրապետում են քաղաքական կյանքին մասնակցության գործուն և արդյունավետ մեխանիզմների, ինչը հանգեցնում է հասարակության մեջ քաղաքական գիտակցության նկատելի բարձր մակարդակի հստակ ձևավորմանը⁷: Ըստ Գ. Լեբոնի՝ խորհրդարանական մշակույթը հասարակության՝ որպես ամբողջական համակարգի, քաղաքական մշակույթն է, որը խորհրդարանի և քաղաքացու աշխարհընկալման, համոզմունքների, արժեքների և կողմնորոշումների, քաղաքական գնահատականների ամբողջությունն է: Քաղաքագիտական գրականության մեջ հանդիպում են «խորհրդարանական քաղաքական մշակույթ» հասկացության նաև այլ սահմանումներ,

⁵ St' u **Bureteau G.** Traite de science politique. Paris, 1977, էջ 28:

⁶ St' u **Jennings I.** Cabinet Government. Cambridge, 1959, էջ 472:

⁷ St' u **Կ. Սարգսյան**, Քաղաքացիական մշակույթ հասկացության սահմանման շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2015, № 2 (17), էջ 58:

որոնք կարող ենք դասակարգել լայն և նեղ իմաստներով:

Խորհրդարանական մշակույթը նեղ իմաստով խորհրդարանական էթիկան է, որը դիտվում է որպես սոցիալ-քաղաքական երևույթ և պայմանավորված է քաղաքական հարաբերություններով⁸: Խորհրդարանական մշակույթը, գտնվելով ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ոլորտներում, քաղաքական հարաբերությունների կարևորագույն բաղկացուցիչ է, որի հիմքում ընկած են քաղաքական և իրավական արժեքները, շահերն ու շարժառիթները⁹:

Հետադիական քաղաքական զարգացումների համատեքստում խորհրդարանական մշակույթը ներառում է խորհրդարանական կառավարման¹⁰, հասարակական հարաբերությունների արժեքաբանական համակարգը, որի վրա զգալի է քաղաքացիական հասարակության ազդեցությունը:

Խորհրդարանական մշակույթն արժեքաբանական կողմնորոշումների և շարժառիթների համակարգ է, որով պայմանավորված է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի գործունեության արդյունավետությունը¹¹: Հասարակության մեջ գերակշռող գաղափարական, սոցիալ-քաղաքական նորմերն ու արժեքաբանական կողմնորոշումները խորհրդարանի՝ որպես օրենսդիր ներկայացուցչական մարմնի քաղաքական լեգիտիմության և կայունության գաղափարական հենքն են:

Խորհրդարանական մշակույթը ներառում է խորհրդարանական էթիկան¹², օրենսդրական դաշտի համախմբումն ու օրենսդիր իշխանության գործունեությունը կարգավորող կարևորագույն կառուցակարգերը:

Խորհրդարանական էթիկան խորհրդարանական մշակույթի բաղկացուցիչ է և ապահովում է լեգիտիմությունը: Խորհրդարանական է-

⁸ St u **Ачкасов В. А.** Взрывающаяся архаичность: традиционализм в политической жизни России. СПб., 1997, էջ 160, **Ачкасов В. А.** Трансформация традиций и политическая модернизация: феномен российского традиционализма // "Философия и социально-политические ценности консерватизма в общественном сознании России". Выпуск 1. СПб., 2004, էջ 173-191:

⁹ St u **Воробьев И. В.** Становление института парламентаризма в современной России: взаимодействие депутатского корпуса и аппарата Государственной Думы: Автореф. дис. канд. социол. наук. М., 2004, **Константинова Л. А., Лаврикова А. А.** Ценностные ориентации как фактор социальной стратификации современного российского общества // <http://cyberleninka.ru/article/n/tsennostnye-orientatsii-kak-faktor-sotsialnoy-stratifikatsii-sovremennogo-rossiyskogo-obschestva#ixzz2XUKA7vdt> (Այցելված 10.02.2016թ.):

¹⁰ St u The Global Organization of Parliamentarians Against Corruption (GOPAC), // <http://gopacnetwork.org>

¹¹ St u **Ковбенко Л. Н.** Парламентская культура в современном российском политическом процессе: условия и факторы развития. СПб., 2009 // <http://www.disserscat.com/content/parlamentskaya-kultura-v-sovremennom-rossiiskom-politicheskom-protseesse-usloviya-i-factory-r#ixzz2XV19WweX> (Այցելված 10.02.2016թ.):

¹² «Խորհրդարանական էթիկա» եզրույթը ներկայացված է «Խորհրդարաններն ընդդեմ կոռուպցիայի համաշխարհային գլոբալ կազմակերպության» (GOPAC) պաշտոնական կայքում <http://www.gopacnetwork.org>: Ըստ որի «խորհրդարանական էթիկա» հասկացությունը ներառում է արժեքների, նորմերի և սկզբունքների ամբողջականությունը, ինչպես նաև խորհրդարանում իրավական և էթիկայի ուղղվածությամբ կրթական համակարգը:

թիկայի գործիքների մեջ յուրահատուկ նշանակություն ունի նաև խաղային մոդելավորումը, որը ձևավորում է հետադարձ կապ օրենսդիր մարմնի և սոցիումի միջև: Խորհրդարանական քաղաքական մշակույթի շրջանակներում վարքային մոդելներն ուսումնասիրվել են է. Բատալովի կողմից, ով խորհրդարանական քաղաքական մշակույթը սահմանում է որպես պատմականորեն ձևավորված և հարաբերականորեն կայուն վարքի մոդելների համակարգ: Վերջինս համակողմանիորեն դիտարկված է Յ. Հայզինգայի «Խաղացող մարդ» (Homo Ludens) աշխատության մեջ, որտեղ հիմնավորված է քաղաքական վարքագծի խաղային մոդելավորման նշանակությունը: Ըստ Յ. Հայզինգայի՝ խաղային մոդելավորումը խորհրդարանական մշակույթի հիմքն է, պետական կառավարման սուբյեկտների քաղաքական վարքագծի գերակա բաղադրատարրը և հիմնական գործառույթը:

Համաձայն Յ. Հայզինգայի դիրքորոշման՝ խաղային գործոնը Անգլիայի խորհրդարանի պատմության մեջ դրսևորվում է ոչ միայն բանավեճերի և ավանդական խորհրդաժողովների ժամանակ, այլև պայմանավորված է ընտրական համակարգի խաղային բնույթով, որից գերծ չի մնում ոչ մի քաղաքական ուժ: Քաղաքական խաղի բնույթը կարող է լինել կեղծ և դաժան՝ պայմանավորված տվյալ քաղաքական ժամանակով թելադրված մարտահրավերներով: Սակայն ցանկացած պարագայում այն ենթադրում է խաղի մասնակիցների կողմից որոշակի սկզբունքների, կանոնների հետևողական պահպանում և դրանց փոխադարձ ճանաչում: Տվյալ պարագայում քաղաքական խաղի սկզբունքներից և սահմանված կանոններից օտարումը հանգեցնում է ամբողջ քաղաքական համակարգի գաղափարական և ինստիտուցիոնալ հիմքերի խարխլմանը¹³: Խորհրդարանական քաղաքական մշակույթում քաղաքական դերակատարների նման խաղային մոդելավորումների նախադեպային փորձի կարող ենք ականատես լինել նաև հայ իրականությունում:

Ըստ էության, խորհրդարանական մշակույթը ձևավորում է միասնական հարթակ, որտեղ գործունեություն են ծավալում տարատեսակ կուսակցություններ՝ գործելով տարբեր ինստիտուցիոնալ կառույցներում և ունենալով քաղաքական գիտակցության ուրույն արժեքաբանական դիրքորոշումներ և խոսքային ակտի կիրառման ինքնատիպ դրսևորումներ:

Խորհրդարանական մշակույթի ազգային և քաղաքական պատմության ազդեցությունը պայմանավորված է հասարակության մեջ ձևավորված ավանդույթների, արժեքային համակարգի, սովորույթների, կրոնական և բարոյական պատկերացումների առանձնահատկություններով: Հետևաբար, խորհրդարանական մշակույթը, ընդգրկելով քաղաքական, իրավական, սոցիալական, մշակութային հարաբերությունների լայն շրջանակ, օրենսդրականության միջոցով վերարտադ-

¹³ См. у Хейзинга Й. Игровой элемент современной культуры // "Политические исследования", 1991, № 5, էջ 202–205:

րում է իրավական կարգը և որոշ չափով կարգավորում է սոցիալական հարաբերությունները իրավական և քաղաքական հարթակներում: Այս առումով խորհրդարանական մշակույթը զգալիորեն կերպավորվում է սոցիումը, ազդեցություն է գործում հասարակական զարգացման վրա՝ խթանելով քաղաքացիական հասարակության կայացումը:

Լայն իմաստով խորհրդարանական մշակույթը պետական կառավարման համակարգի համախմբման բարձր մակարդակ է, խորհրդարանի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շարունակական համագործակցություն:

Խորհրդարանական մշակույթը պետական մարմինների և իշխանության ինստիտուտների լեգիտիմության մակարդակի ցուցիչ է, և մինչև ժամանակ արտացոլում է քաղաքացիական հասարակության ներգրավվածության աստիճանը խորհրդարանի և սոցիումի երկխոսության հարթակում: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել քաղաքական էլիտայի և հասարակության կողմից խորհրդարանական կառավարման ձևի և ժողովրդավարական ներկայացուցչության ընկալումը: Ներկայացուցչության գործառույթը երաշխավորում է խորհրդարանի և հասարակության միջև առկա քաղաքական երկխոսության վրա հիմնված ազգային քաղաքականության կերտումը:

Քաղաքական երկխոսությունը խորհրդարանական կուսակցությունների միջև շարունակական արդյունավետ գործունեությունն է, որն ապահովում է ժողովրդի ներկայացվածության և ներգրավվածության իրավունքը պետական կառավարման համակարգում: Ազգային երկխոսության խաթարման պարագայում խորհրդարանի և սոցիումի միջև առաջանում է վստահության ճգնաժամ և զանգվածային մարզինալացում, որոնք հանգեցնում են խորհրդարանի՝ որպես ժողովրդական ներկայացուցչական մարմնի ներքին և արտաքին իմիջի կտրուկ անկման: Խորհրդարանի կողմից ազգային շահի գիտակցումը իր իսկ սոցիալականացման ընթացքում օբյեկտից սուբյեկտ անցում կատարելու անհրաժեշտություն է ստեղծում¹⁴: Երկխոսության կայացման գործընթացների արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է կառավարման ձևին համապատասխան քաղաքական վարչակարգի առկայությամբ և փոխհամաձայնության հիման վրա ձևավորված ազգային գաղափարախոսությամբ: Երկրորդ՝ երկխոսության մշակույթը նույնականացվում է պետական կառավարման համակարգի լեգիտիմության հետ: Երրորդ՝ վերջինիս լինելիությունը պայմանավորված է խորհրդարանական էթիկայով, խորհրդարանի և սոցիումի միջև քաղաքական հարաբերությունների արժեքաբանական չափումներով ու սոցիումի սոցիալական երաշխիքների և հանրային անվտանգությունը երաշխավորող գործիքների տրամադրմամբ:

¹⁴ Стé'u УЛИТИН Р. Р. Соотношение понятий «национальный интерес» и «национальная безопасность» в трудах западных и отечественных исследователей // http://www.unn.ru/pages/vestniki_journals/9999-0200_West_MO_2003_1/16.pdf (Այցելված 10.02.2016թ.):

Խորհրդարանական մշակույթի կայացման համար կենսական նշանակություն ունեն քաղաքական էլիտայի, քաղաքացիական ներկայացուցչական ինստիտուտների և հասարակության քաղաքական գիտակցությունը, համոզմունքները, պետության և սոցիումի միջև երկխոսությունը¹⁵:

Խորհրդարանական կառավարման քաղաքական և կառավարչական ենթահամակարգերի փոխհարաբերությունների շղթան ամբողջանում է «խորհրդարանական քաղաքական մշակույթ» եզրույթի շրջանակներում:

Խորհրդարանական կառավարման քաղաքական ընթացակարգերը ներառում են կուսակցությունների պայքարը, շահերի և լոբբիստական խմբերի գործունեությունը, խորհրդարանում ժողովրդական ներկայացվածության և ներգրավվածության աստիճանը, քաղաքական գիտակցությունը, պատգամավորների և հասարակության միջև առկա քաղաքական համաձայնությունն ու ազգային երկխոսությունը:

Խորհրդարանական կառավարման ընթացակարգերը ներառում են կառավարչական գործունեության առաջնահերթությունները՝ մասնագիտական պատրաստվածություն, խորհրդարանական էթիկայի մշակույթ, սոցիալ-քաղաքական խնդիրներին ժամանակյին արձագանքելու կարողություն, ազգային առանձնահատկություններին համապատասխան իրավական դաշտի ստեղծում¹⁶: Սրանք խորհրդարանական կառավարման կարգավորիչ գործունեության երկու տարբեր ուղղություններ են: Հակառակ պարագայում տեղի է ունենում շահերի բախում, ինչը հանգեցնում է խորհրդարանի ժողովրդական ներկայացուցչական գործառույթի լիարժեք իրականացման արգելակման:

Պառլամենտարիզմի արժեքաբանական հիմքերի պատմական զարգացումը հնարավորություն է տալիս խորհրդարանական մշակույթը դիտարկելու որպես հասարակական գործընթացների կառավարման մեխանիզմ, որն ունի պատմական և մշակութային ժառանգություն: Երկրորդ խորհրդարանական մշակույթը քաղաքական բարդ համակարգ է, որում տեղի է ունենում քաղաքական էլիտայի և սոցիումի միջև քաղաքական գիտելիքների, գաղափարների, համոզմունքների մշտական շարժի և փոխանակման գործընթաց, ինչը նպաստում է ազգային երկխոսության կայացմանը, օրենսդրականության և սահմանադրական դաշտի համախմբմանը: Այս առումով խորհրդարանական մշակույթը՝ որպես օրինաստեղծ և քաղաքական գործունեության կրող, հասարակության իրավունքների և շահերի արտահայտման կարևորագույն մեխանիզմ է:

Կուսակցությունները միջանկյալ դերակատարներ են, որոնք երկխոսության կամուրջ են պետության և սոցիումի միջև:

Խորհրդարանում կուսակցությունները պետք է ներկայացնեն հասարակության շահերը՝ գործելով խմբակցությունների միջոցով կուսակցական շահերի բավարարման ուղղությամբ: Ոչ ժողովրդավարական

¹⁵ St`u «Глобальный парламентский отчет» // "Изменяющийся характер парламентского представительства". Ташкент, 2012:

¹⁶ St`u Ледяев В. Г. Власть. Концептуальный анализ. М., 2001, էջ 43:

վարչակարգերում քաղաքական ակտիվության ինստիտուցիոնալ սահմանափակումները հանգեցնում են խորհրդարանի և սոցիումի քաղաքական գիտակցության կոնսերվացմանը, որը խոչընդոտում է և ապակայունացնում խորհրդարանական մշակույթի կայացման գործընթացը¹⁷:

Այսպիսով, ամբողջացնելով խորհրդարանական մշակույթի տեսական-գաղափարական հիմքերը և վերլուծելով հասկացության կառուցվածքային ու բովանդակային բաղկացուցիչների շղթայաձև չընդհատվող փոխգործակցությունը, առաջադրում ենք հետևյալ սահմանումը. *խորհրդարանական մշակույթը սոցիալ-քաղաքական, ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ պետաիրավական երևույթ է, որը պայմանավորված լինելով արժեքներով, նորմերով և պատմական հիշողությամբ, ապահովում է խորհրդարանի և սոցիումի միջև համագլխային երկխոսության կայացումը:*

Բանալի բառեր – *խորհրդարան, պառլամենտարիզմ, խորհրդարանական մշակույթ, կուսակցություն, քաղաքացիական հասարակություն, ազգային երկխոսություն*

МАГДА АРСЕНЯН – К вопросу о становлении политических предпосылок парламентской культуры. – В статье анализируются методологические основания парламентской культуры. В рамках трансформационных политических процессов актуальной проблемой становится укрепление диалога между государством и обществом. Необходимо найти систему сдержек и противовесов, которая позволит уравнивать национальные, социальные и политические потребности государства и общества. В статье рассмотрен концепт парламентской культуры, вбирающий в себя конституционную и гражданскую культуру, и предложено новое ее определение.

Ключевые слова: *парламент, парламентаризм, парламентская культура, политические партии, гражданское общество, национальный диалог*

MAGDA ARSENYAN – On the Issue of Formation of the Political Preconditions for the Parliamentary Culture. – The article has analyzed the methodological foundations of parliamentary culture in the context of socio-cultural and political discourse. The development of modern parliamentarism shows that its boundaries have expanded considerably. In the framework of parliamentary culture transformation processes, sustaining of the national dialogue between the state and society has become an urgent issue. While considering the current political developments within the state, it is necessary to find a system of checks and balances that will give us an opportunity to equalize the national, social and political needs of the state and society. After studying the scientific definitions of parliamentary culture and reviewing its mutual interaction with its constituent elements and associated political categories, the article has proposed a new definition of parliamentary culture; the one which will best reflect the current problems and peculiarities of the parliamentary culture-sustaining process.

Key words: *parliament, parliamentarism, parliamentary culture, political parties, civil society, national dialogue*

¹⁷ Տե՛ս **Колесников В. Н.** Функциональная ценность парламентской культуры // "Вестник Санкт-Петербургского университета". Серия 6, 2010. Выпуск 2, էջ 33-40:

**«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ժամանակակից հասարակությունների քաղաքական կյանքում քաղաքացիների համընդհանուր շահերն ու պահանջմունքները չեն կարող իրացվել միայն պետական իշխանության ինստիտուտների կամ քաղաքական կուսակցությունների միջոցով: Այս գործում հսկայական դեր ունեն քաղաքացիների ամենատարբեր ինքնադեկլարվող միությունները՝ հասարակական կազմակերպությունները, միավորումները, բարեգործական միությունները, կրոնական խմբավորումները, արհեստակցական խմբերը և այլն: Դրանք հասարակական-քաղաքական գործընթացների բնականոն զարգացման անհրաժեշտ պայման են և քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) զարգացման կարևոր ցուցիչ:

ՔՀ համակարգում ոչ կառավարական կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքագիտության տեսական և գործնական հիմնախնդիրներից է:

Այսօր արդեն ակնհայտ է, որ պետական ու հանրային կառավարման համակարգում առանց հասարակության ակտիվ մասնակցության անհնար է լուծել բազմաթիվ խնդիրներ: Լիովին պարզ է, որ անհրաժեշտություն է առաջացել որոշ լիազորություններ և գործառույթներ վերահասցեագրելու հասարակական համակարգի կառույցներին՝ ՔՀ ինստիտուտներին: Վերջիններս առանցքային դեր են խաղում մասնակցային ժողովրդավարության, դրա հիմնարար արժեքների և օրենքի գերակայության ամրապնդման գործում, որոնք պետության և հասարակության կայուն զարգացման կարևորագույն հիմնասյուներից են: Քաղաքագիտության մեջ այս գործընթացը սահմանվում է որպես պետական ուղղաձիգ իշխանության և հասարակական հորիզոնական կապերի ուղիղ հարաբերակցություն: Հնարավոր չէ երկրում իրականացնել քաղաքական արդիականացում առանց հորիզոնական ակտիվ «ալիքների»: Այս «ալիքները» հնարավորինս ճկուն ու քիչ ռեսուրսներով իրականացնում է ՔՀ-ն իր ակտիվ ինստիտուտների հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) միջոցով: Ի դեմս ՀԿ-ների՝ աշխարհը թևակոխում է հասարակական-քաղաքական հարաբերությունների սկզբունքորեն նոր փուլ. փոխվում է երկրի քաղաքական օրակարգը, իսկ ազգային անվտանգության հիմնախնդիրը դադարում

է միայն պետության հոգսը լինելուց¹:

Այսօր ողջ աշխարհում մասնագետների կողմից ընդունելի են փիլիսոփայության և իրավական մտքի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ալ. դե Տոքվիլի գաղափարները: Նա գտնում է, որ ամենաժողովրդավար երկիրն այն է, ուր «...մարդիկ ունակ են միացյալ ուժերով հասնելու իրենց նպատակների իրականացման բարձր մշակույթին, պատասխանատու են իրենց ընդհանուր ցանկությունների համար և հաճախակի են կիրառում կոլեկտիվ գործունեության մեթոդը»²:

Գաղափարի նյութականացմանը հասնելու համար ինչպես հետխորհրդային շատ երկրների, այնպես էլ ՀՀ-ին անհրաժեշտ է քաղաքական արդիականացում՝ քաղաքական համակարգի նորացում, քաղաքական նոր մշակույթի ձևավորում, ամրապնդում ու փորձ, որն ունակ կլինի համարժեքորեն արձագանքելու այսչափ արագ փոփոխվող և զարգացող ժամանակակից հասարակության կյանքի չափորոշիչներին³: Պետական ապարատի և հասարակության միջև այսօրինակ խնդիրների լուծման համար միջնորդ են հասարակական համակարգի կառույցները, որոնցից առավել ակտիվ են հատկապես ՀԿ-ները:

ՀԿ-ների ծագումն ունի երկար պատմություն: 1863 թ. Ժնևում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ստեղծվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեն⁴: 1902 թ. ստեղծվեց Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ֆրանսիական լիգան⁵: 1909 թ. Լոնդոնում ձևավորվեց Ստրկության դեմ պայքարի միությունը, որն այժմ հայտնի է «Միջազգային ինտերնացիոնալը ստրկության դեմ» անվամբ: 1942 թ. Նյու Յորքում ստեղծվեց Մարդու իրավունքների միջազգային լիգան: Այս կազմակերպությունների հետագա կայացումը մեծապես պայմանավորված էր 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտով, ՄԱԿ-ի ստեղծմամբ և 1948 թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» մշակմամբ:

Եվ այսօր ժամանակակից ժողովրդավարական պետությունների հասարակական համակարգը կարելի է բաժանել 3 հիմնական հատվածների՝

- Պետական – քաղաքական իշխանության մարմինների բոլոր մակարդակները, ինչպես նաև պետական կազմակերպությունների տեսակները,
- Առևտրային կամ շահույթ հետապնդող կազմակերպությունները,

¹ Տե՛ս **Андреева О. С.** Неправительственные организации и политические изменения в мировом сообществе. М., 2013, էջ 243-246:

² **Де Токвиль А.** Демократия в Америке. М., 2000, с. 37.

³ Տե՛ս **Молокова М. А.** Гражданское общество как фактор политической модернизации: Проблемы и вызовы, Человек и наука, М., 2011:

⁴ Տե՛ս «Կարմիր խաչի միջազգային կազմակերպության պաշտոնական կայքէջ» // <https://www.icrc.org/en>:

⁵ Տե՛ս **Погорельский А. В.** История развития международного правозащитного движения // <http://www.hist.vsu.ru/cdh/Articles/part9/09-06.htm/>:

- Ոչ առևտրային կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Անցումային ժողովրդավարություններում ՔՀ կայացման մակարդակը մեծապես պայմանավորված է ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների առկայությամբ: Վերջին 20-25 տարիներին նախկին ԽՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում՝ ՀՀ-ում, նկատվում է ՀԿ-ների կայուն աճ, որոնք այս երկրների հասարակությունների փոխակերպման գործընթացում ունեն որոշակի դերակատարում: Այսօր մոտ 3 մլն բնակչություն ունեցող ՀՀ-ում գրանցված են շուրջ 3789 հասարակական կազմակերպություններ, 765 հիմնադրամներ, իրավաբանական անձանց 301 միություններ⁶: Հաշվի առնելով մարդ-ՀԿ հարաբերակցությունը՝ ՀՀ-ում ՔՀ ինստիտուցիոնալացումը կարելի է համարել կայացած⁷: Սակայն սա չի արտացոլում իրականությունը:

Չ. Գրումը նշում է, որ ՀԿ-ների քանակական աճը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է երկրում ՔՀ կայացած համարելու համար: Գործընթացում կարևորը ոչ թե տվյալ պետության մեջ դրանց քանակական ցուցանիշն է, այլ երկրի քաղաքական կառուցվածքում և հասարակական ոլորտում իրականացված ու արձանագրված որակական փոփոխությունները⁸:

Ա. Իշխանյանը իրավացիորեն գտնում է, որ «1990-ական թթ. ողջ ընթացքում դոնորական ֆինանսական միջոցների ներհոսքը և ՔՀ նկատմամբ ուշադրությունը Հայաստանում հանգեցրել են ՀԿ-ների քանակի աննախադեպ և սրընթաց աճի: Դոնոր կազմակերպությունները վերջերս փորձել են ընդլայնել ՔՀ սահմանումը՝ ներառելու համար ավելի շատ դերակատարների, քան միայն ՀԿ-ները: Գործնականում ՔՀ հաճախ հավասարեցվել է հանրային շահերի պաշտպանությամբ կամ ծառայությունների մատուցմամբ զբաղվող մասնագիտացված ՀԿ-ների, որոնք հետամուտ են նորմատիվ ազատական օրակարգի իրագործմանը: ՔՀ նման նեղացումը ստացել է ՔՀ «ՀԿ-ացում» պիտակը»⁹:

Մասնագիտական գրականության մեջ և համաշխարհային պրակտիկայում տարբերակվում են ոչ առևտրային հասարակական կազմակերպություն (ՀԿ), և ոչ կառավարական կազմակերպություն (ՈԿԿ), եզրույթները: Հաճախ ՔՀ բոլոր կառույցները նմանեցվում և ընկալվում են որպես ՀԿ-ներ, ինչը կարելի է բացատրել ոչ կառավարական կազմակերպությունների կազմում վերջիններիս ավելի մեծ թվով, ավելի

⁶ Տե՛ս «ՔՀ կայունության ցուցանիշ-Հայաստան, 2011»: USAID, CDPF, 15-րդ խմբագրություն, հունիս, 2012, էջ 2: «Քաղաքացիական հասարակության հզորացում և համագործակցություն պետական կառույցների հետ», Խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանում, Եր., 2012, էջ 25:

⁷ Տե՛ս «ՀՀ կառավարության պաշտոնական կայք» // www.gov.am

⁸ Տե՛ս **Грум Дж.** Растущее многообразие международных акторов // "Международные отношения: социологические подходы". М., 1998, էջ 222-239:

⁹ **Ishkanian A.**, Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia, Routledge, 2008, p. 8.

ակնառու գործունեությամբ և հասարակության մեջ ավելի լայն ճանաչվածությամբ:

Փորձենք սահմանել «ՀԿ» հասկացությունը. այն շահույթ չհետապնդող, իրավագիտորեն կամ ոչ ֆորմալ հիմքով գոյություն ունեցող, մեկ կամ մի քանի անհատների (ֆիզիկական կամ իրավաբանական) կամ խմբի կողմից՝ որոշակի նպատակի կամ նպատակների իրականացման համար ստեղծված միավորում է: Տվյալ սահմանման մեջ այս կատեգորիան իրավական տերմինի կարգավիճակ չունի: Նման մոտեցումը կարող է ներառել կազմակերպությունների լայն շրջանակ, ինչպիսիք են, օրինակ, ֆոնդերը, միավորումները, բարեգործական կազմակերպությունները, հասարակական համակարգի ինստիտուտները, քաղաքացիական շարժումները, միությունները և այլն:

ՀԿ-ների մասին օրենքում «հասարակական կազմակերպություն» հասկացությունը սահմանվում է որպես «...շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն՝ հասարակական միավորման տեսակ, որտեղ իրենց շահերի ընդհանրության հիմքի վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար»¹⁰:

Ոչ կառավարական կազմակերպությունը ստեղծվում է մասնավոր անձանց կամ այլ հասարակական կազմակերպությունների կողմից առանց պաշտոնական (կառավարական) ինստիտուտների մասնակցության և իրականացնում է իր գործունեությունը օրենքի հիման վրա սեփական միջոցներով: Ոչ կառավարական կազմակերպությունների կամ ՀԿ-ների ֆինանսական միջոցներն առաջանում են անդամավճարներից, ներդրումներից, նվիրատվություններից և այլ միջոցներից (մասնավոր և անհատական նվիրատվություններ, մասնավոր կամ պետական դրամաշնորհներ, վճարումներ որոշակի ծառայությունների շրջանակներում և այլն): Ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրությամբ, բացի օրենքով սահմանված դեպքերից:

Համաշխարհային բանկը հիմք է ընդունել առաջատար գիտահետազոտական կենտրոնների մշակած սահմանումը: Ըստ դրա՝ «ՔՀԿ եզրույթը վերաբերում է ոչ պետական, շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք մասնակցում են հանրային կյանքին, արտահայտում են իրենց անդամների և մյուսների պահանջները, շահերը՝ ընդգրկելով կազմակերպությունների լայն շրջանակ, ներառյալ ոչ կառավարական կազմակերպություններ, համայնքային խմբեր, արհմի-

¹⁰ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև՝ ՀԿ-ների մասին օրենք) հոդված 3, ընդունվել է 04.12.2001 թ.:

ություններ, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, մասնագիտական միությունները և հիմնադրամներ»¹¹:

Կ. Կոլյարը «ՀԿ» եզրույթի տակ հասկանում է մասնավոր բնույթի կազմակերպություն, որը միավորում է մասնավոր մարդկանց, մասնավոր պահանջներ և շահեր, երբեմն նաև՝ պետական գործիչների, սակայն ոչ երբեք պետությանը¹²:

Կարևորելով համաշխարհային փորձն ու ՀԿ-ների գործունեության ակնհայտ առավելությունները երկրի սոցիալական խնդիրների լուծման հարցում՝ անհրաժեշտ է պետության իրավական փաստաթղթերն ու օրենքները դարձնել նպաստավոր, ստեղծել ապահով օրենսդրական դաշտ, ուր առանց ավելորդ բյուրոկրատական քաշքշուկների քաղաքացիները կկարողանան ազատ հիմնել և կամավոր անդամակցել տարբեր ՀԿ-ների, որոնք իրենց գործունեությամբ կնպաստեն թե՛ տվյալ կազմակերպության և թե՛ ողջ հասարակության զարգացմանը¹³:

ՔՀ զարթոնքը և ՀԿ-ների ակտիվ գործունեությունը ՀՀ-ում աղերսվում է 1988 թ. Արցախյան շարժման հետ: Այս ընթացքում ի հայտ էին եկել մի շարք խնդիրներ, որոնց լուծումները ենթադրում էին համապատասխան փոփոխություններ օրենսդրական և իրավական-նորմատիվ մակարդակում:

2001 թ. դեկտեմբերի 4-ին ընդունվեց ՀԿ-ների մասին օրենք, որը հետագայում ենթարկվել է մի շարք լրացումների և փոփոխությունների:

ՀՀ-ում ՔՀ կառույցների գործունեության կարգավորման օրենսդրական դաշտը ձևավորվել է մարդու և քաղաքացու՝ միավորումներ կազմելու իրավունքի իրականացման ձևերի ու դրանց գործունեության արդյունավետության զարգացմանը համաքայլ: Միավորումներ և միություններ կազմելու իրավունքը իրացնելու համար հասարակության անդամները ամեն անգամ ընտրում են բազմազան և բարդ ձևաչափեր: Կառույցների կայացմանը զուգահեռ՝ տարբերվում են դրանց հետագա զարգացման կարիքները, ուստի և՛ օրենսդրական կարգավորման խնդիրները՝ հիմքում ունենալով ՀՀ-ում դրանց ձևավորման, գործառության և գործունեության առանձնահատկությունները:

Ինչպես ցանկացած ոլորտ, այնպես էլ ՀՀ ՀԿ ոլորտը կանոնակարգվում և համակարգվում է նախևառաջ ՀՀ Մահմանադրությամբ (1995), ապա ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով (1998), Հասարակական կազմակերպությունների մասին (2001), Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին (2001), Հիմնադրամների մասին (2002), Բարեգործության մասին (2002), Տեղեկատվության մասին (2003), Կուսակցությունների մասին (2002) օրենքներով, ինչպես նաև իրավական-նոր-

¹¹ «Համաշխարհային բանկի պաշտոնական կայք»//<http://web.worldbank.org/>:

¹² Տե՛ս Կոլյար Կ. *Международные отношения*. М., 1978, էջ 472:

¹³ Տե՛ս Բեյգբեդեր Կ., *The role and status of international humanitarian volunteers organizations*, ECOSOC, doc. 49 plenary meeting, Resolution 1996/3125 July, 1996:

մատիվ այլ ակտերով, միջազգային և միջկառավարական համաձայնագրերով, որոնց տարբեր տարիների անդամակցել է ՀՀ-ն:

Երկրի Մայր օրենքում ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք»¹⁴, և «...մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, այլոց իրավունքների և ազատությունների... պաշտպանության համար»¹⁵:

ՀԿ-ների մասին օրենքով կարգավորվում է այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու սահմանադրորեն ամրագրված իրավունքը. «Հայաստանի Հանրապետությունը, կարելի է ասել քաղաքացիական հասարակության զարգացումը, սույն օրենքով նպատակ ունի նպաստելու հասարակական կազմակերպությունների՝ որպես իրավաբանորեն կանոնակարգված գործունեություն ծավալող միավորումների ստեղծմանն ու գործունեությանը» (նախաբան):

ՀԿ-ների մասին օրենքով կարգավորվում են կազմակերպության ստեղծման, գրանցման, գործունեության, հիմնադրի (հիմնադիրների), կանոնադրական և գործունեության սկզբունքների և պահաջների, լուծարման և վերակազմավորման հարցերը¹⁶:

ՀՀ պետական բյուջեից ՀԿ-ները ֆինանսական օժանդակություն կարող են ստանալ «Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին», «Մուրսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին», «Այլ ծախսեր» և «Հիմնական բաժիններ չդասվող պահուստային ֆոնդեր» հոդվածներով¹⁷:

2011 թ. ապրիլի 14-ի հրամանագրով ՀԿ-ների մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ անելու նախագծում որոշ ընթացակարգեր, ընդհակառակը, բյուրոկրատական քաշքշուկի պատճառ կարող են դառնալ: Նշենք դրանցից մի քանիսը.

- ՀԿ-ների մասին օրենքում այլ իրավակազմակերպական կառույցների հետ շփոթը բացառելու նպատակով արգելվում է ՀԿ-ների անվան մեջ «ֆոնդ», «հիմնադրամ», «կոոպերատիվ», «ընկերություն», «մասնաճյուղ», «ներկայացուցչություն», ինչպես նաև «միություն» և «ընկերակցություն» բառերի օգտագործումը¹⁸:

¹⁴ ՀՀ Սահմանադրություն, 1995. հոդված 25:

¹⁵ Նույն տեղում, հոդված 44:

¹⁶ Մանրամասն տես նույն տեղը, հոդված 3, 1-ին կետ, հոդված 3, 2-րդ կետ, հոդված 4, 1-ին կետ, հոդված 4, 3-րդ կետ, հոդված 5, 3-րդ կետ, հոդված 5, 4-րդ կետ, հոդված 6, հոդված 7, հոդված 15, հոդված 16:

¹⁷ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ, Եր., 2014, էջ 34:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

ՀԿ-ների մասին օրենքում նշվում է, որ հասարակական կազմակերպություն են համարվում «ոչ կառավարական ոչ առևտրային» կառույցները (հոդվ. 3)

- Ոչ կառավարական կազմակերպություն- հայերեն հապավում՝ ՈԿԿ, ռուսերեն՝ неправительственные организации- НПО, անգլերեն՝ nongovernmental organizations- NGO

- Ոչ առևտրային կազմակերպություն՝ հայերեն հապավում՝ ՀԿ, ռուսերեն՝ некоммерческие организации-НКО, անգլերեն՝ Non-profit organization-NPO:

Ոչ կառավարական կազմակերպությունն ընդգրկում է այն կառույցների շարքը, որոնց ֆինանսական միջոցները գոյանում են ոչ միայն անդամավճարներից և այլ աղբյուրներից, որ նշված են ՀՀ ՀԿ օրենքի համապատասխան հոդվածում, այլև մասամբ կառավարության կողմից: Սա կարող է սահմանափակել կառույցի գործունեության տիրույթը:

Ի տարբերություն ոչ կառավարական կազմակերպության՝ շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպությունը, որ համարժեք է «հասարակական կազմակերպություն» հասկացությանը, լիովին համընկնում է արվեստի, արհեստի, բարեգործության, մշակույթի, սպորտի ոլորտներում ձևավորվող միավորումների կամ կազմակերպությունների գործունեության տրամաբանությանը:

Արևմտյան երկրներում, ԱՄՆ-ում և մի շարք միջազգային կազմակերպություններում վերը նշված բոլոր եզրույթներից առավել կիրառելի է *NGO*՝ «ոչ կառավարական կազմակերպություն», եզրը, որն առավել, քան մյուս հասկացությունները, բնորոշում է քաղաքացիական մասնակցության և շահերի պաշտպանության գործիք կազմակերպությունները՝ հասարակական համակարգի մյուս կառույցներից տարբերելու համար¹⁹:

Ակնհայտ է, որ ՀԿ-ների մասին օրենքում հստակ չեն տարբերակվում «ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպություն» և «հասարակական կազմակերպություն» հասկացությունները՝ միաժամանակ չմատնանշելով նաև, թե հատկապես որն է առավել գերադասելի, և որն է առավելագույնս արտահայտում կառույցի գործունեության շրջանակներն ու առանձնահատկությունները:

Վերջին շրջանում մի շարք երկրների օրենսդրությունների մեջ հայտնվել են նոր իրավական ձևակերպումներ, որոնք ներառում են թե՛ երկրորդ, թե՛ երրորդ հատվածների կազմակերպություններին բնորոշ ընդհանուր գծեր. ԱՄՆ-ում, օրինակ, սահմանափակ պատասխանատվությամբ սակավաշահույթ միություններ և հասարակական բարիքի ստեղծման կոորպորացիաներ, Գերմանիայում՝ սահմանափակ պատասխանատվությամբ բարեգործական կազմակերպություններ և հա-

¹⁹ Տե՛ս «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում», Եր., 2004, էջ 8-9:

սարակության բարեկեցության կոորպորացիաներ, Մեծ Բրիտանիայում՝ հասարակական շահերի համակարգման կազմակերպություններ և այլն²⁰:

Այս ձևաչափերը հնարավորություն են ընձեռում ձևավորելու կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում սոցիալական, բնապահպանական, առողջապահական, կրթական և այլ ոլորտներում՝ սահմանափակ գործունեությամբ, իսկ շահույթի ստացումը համարվում է երկրորդական*:

2-րդ և 3-րդ հատվածների կառույցներից այս միությունները տարբերվում են երկու հիմնական առանձնահատկություններով՝ բաժնետերերի բաժնետոմսերը չեն կարող հատել շահույթի 35 %-ից բարձր շեմը և պարտադիր է, թեկուզ ձևականորեն, ցույց տալ, որ դրանք գործում են ոչ միայն տեղի հասարակության, այլև լայն առումով հասարակությունների շահերին ու նպատակներին համապատասխան:

Ավելացնենք, որ ՀԿ-ի անվանման ձևակերպման մեջ առաջարկվող սահմանափակումները չեն փոխում դրանց գործունեության ուղղությունն ու ոլորտը, պարզապես ստեղծում են անհարկի և լրացուցիչ բարդություններ՝ պայմանավորված անվանափոխությամբ և վերագրանցմամբ:

Ըստ ՀԿ-ների մասին օրենքի՝ «Կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից» (հոդվ. 8, 2-րդ կետ): ՀԿ-ի պետական գրանցման կենտրոնացված համակարգը որոշակի դժվարություններ է ստեղծում հեռավոր բնակավայրերում ձևավորվող կազմակերպությունների գրանցման, անվանափոխության, հասցեի, դեկավար կազմի փոփոխության վերաբերյալ իրազեկման, կանոնադրական փոփոխությունների գրանցման առումով²¹: Չարցն ավելի է ընդգծվում, երբ վերը նշված խնդիրներից որևէ մեկը ծագելու դեպքում ՀԿ ներկայացուցիչ(ներ)ը պարտավոր է ներկայանալ պետական գրանցման մարմին, օրինակ, Ճամբարակից կամ Զինարիից: ՀԿ-ների մասին օրենքում նշվում են ՀԿ լուծարման հիմքերը, որոնցից մեկն էլ ՀԿ սնանկ ճանաչելն է (հոդված 20, կետ 5): Այստեղ մասնավորապես ամրագրված է. «Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահաջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե»:

²⁰ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» (Transparency International) 2013 թ. տարեկան զեկույցը <http://transparency.am/files/pages/1416254427-0-776409.pdf>

* 2004 թ. Մեծ Բրիտանիայում համապատասխան օրենսդրական դաշտի բարելավումը նմանատիպ կազմակերպությունների և հասարակական շահերը համակարգող այլ միությունների համար ստեղծեց նպաստավոր պայմաններ, և ընդամենը 1 տարում դրանց թիվն ավելացավ 6000-ով:

²¹ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 17:

Հատկանշական է, որ անկախ կազմակերպության առևտրային կամ ոչ առևտրային լինելուց՝ այն պետք է կրի նույն պարտավորությունները, նրա նկատմամբ կիրառելի են վարչական, քաղաքացիական, քրեական նույն սանկցիաները, որոնք կիրառվում են բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ²²:

Սա գործող օրենքի առավել լուրջ թերություններից է: Ընդ որում՝ չի հստակեցվում նաև, թե ինչ ընթացակարգով է կատարվելու գույքի փոխանցումը պետական բյուջե, ինչպես է պետությունն այն ընդունելու և տնօրինելու²³:

Կարծում ենք, որ փոխանցվող գույքը որևէ թիրախային խմբի (սոցիալապես անապահով ընտանիքներ, մանկատան երեխաներ, ծերանոցներ), մեկ այլ հասարակական կազմակերպության (սահմանամերձ գյուղերում կամ քաղաքներում) կամ բարեգործական ծրագրեր իրականացնող իրավական այս ձևաչափն ունեցող միավորմանը փոխանցելը առավել ընդունելի տարբերակ է:

Մյուս խնդիրը, որն ուսումնասիրման և լրացումների կարիք ունի օրենքում, վերաբերում է մշտական հաստիքային «աշխատակիցներին» և կամավորներին:

Ոլորտի ուսումնասիրությունները վկայում են, որ մեր երկրում գործող ՀԿ-ների մի փոքր մասը (19.1 %) ունի մարդկային ներուժի հաստատուն բազա՝ ի դեմս վճարվող աշխատակիցների²⁴ (տեղեկատվությունը չափվում է կամավորների և վճարվող աշխատակիցների հարաբերակցության հիմքով): ՀԿ-ների մեծ մասը բացառապես և գերազանցապես հենվում է կամավորական ռեսուրսների վրա:

Ըստ ՀԿ-ների մասին օրենքի՝ «Անձը, որ կազմակերպության հիմնադիր չէ, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա» (հոդված 6, կետ 2) կամավորության սկզբունքով: Կամավորության ինստիտուտն ու աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրական-իրավական նորմերի բացակայությունը, մասնավորապես սոցիալական ապահովության մասին պարտադիր վճարների մասին դրույթը, սահմանափակում են կամավորների ընդգրկումը ՀԿ-ներ՝ երևույթը որակելով «տնտեսապես ոչ խրախուսելի»²⁵:

Ցանկացած ՀԿ կորիզում մեծ թիվ են կազմում երիտասարդ մասնագետները՝ չունենալով կամ չգտնելով պետական աշխատանք: Այս մարդիկ դե յուրե համարվում են գործազուրկ, քանի որ չունեն աշխատանքային պայմանագիր, աշխատանքային գրքույկ, և չեն գործում աշ-

²² ԵՄ հանձնարարական, 1-ին մաս, «Հիմնական սկզբունքներ»:

²³ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ.:

²⁴ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության ինդեքս: Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական զեկույց», Եր., 2010, էջ 43:

²⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Հովհ.**, նշվ. աշխ., էջ 43:

խատանքային օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ նորմերը: Սակայն նրանք դե ֆակտո աշխատում են: 2-րդ թերությունն այս պարագայում աշխատանքային ստաժը չհաշվառելն է՝ հետագայում այլ աշխատանքի, ավելի ուշ՝ նաև կենսաթոշակի անցնելու առումով:

Որպես խնդրի լուծում ՀԿ-ների մասին օրենքում կարելի է ներառել կետ, որով կամրագրվի կամավորներին հավաստագիր, վկայական, աշխատանքային գրքույկ տրամադրելու հարցը, ուր նշված կլինեն ծառայությունների մատուցման ժամկետը, ծրագրերի ուղղվածությունը և լրացուցիչ այլ տեղեկություններ: Գործընթացին կարևորություն տալու համար գործատուներին առաջարկում ենք թափուր աշխատատեղերի հայտարարագրերի կամ պահանջվող փաստաթղթերի մեջ որպես կարևոր կետ ընդունել նաև կամավորական աշխատանքի վերաբերյալ տեղեկություն, ինչի առկայությունը մրցութային հիմունքներով աշխատանքի ընդունվելիս կտա լուրջ առավելություններ: Սա մի կողմից կնպաստի կամավորության ինստիտուտի կայացմանը, մյուս կողմից թեկուզ ժամանակավորապես կլուծի նաև զբաղվածության խնդիր:

Կամավորության ինստիտուտի խթանումը նաև Արևելյան գործընկերության գլխավոր նպատակներից մեկն է: 2006 թ. նոյեմբերի 15-ից Եվրոպական խորհրդարանը և Եվրախորհուրդը ընդունեցին թիվ 1719/2006 որոշումը, որը նոր խթան ու սկիզբ հանդիսացավ «Երիտասարդները գործում են» («Youth in action») ծրագրի իրականացման համար (2007-2013 թթ.):

ՀԿ-ների մասին օրենքի 16 հոդվածի 6-րդ կետում նշվում է, որ արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ՀԿ-ն պարտավոր է ողջամիտ ժամկետներում նրան տրամադրել ՀԿ որոշումների պատճենները կամ այլ փաստաթղթեր: «Ողջամիտ ժամկետ» հասկացությունը հարաբերական է: Կարծում ենք՝ հստակ ժամկետի(ների) ամրագրումն ավելի տեղին ու իրավական առումով ավելի ընդունելի կլինի:

ՀԿ-ների մասին օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում կապահովվեն՝

- ՀԿ գործունեության իրավական առավել ամուր հիմքեր,
- Երկխոսության մշակույթի զարգացում իշխանության և ՀԿ-ների միջև (երկխոսությանը մասնակից կողմերի ներկայացուցիչները հնարավորություն կստանան, ամենատարբեր ռեսուրսներ կենտրոնացնելով, լուծելու հասարակության ներսում զարգացման միտում ունեցող, լատենտ, բայց ոչ անսպասելի հիմնախնդիրները, ինչը ոչ պատշաճ արձագանքի դեպքում կարող է պետության համար սոցիալական ճգնաժամ առաջացնել):

Կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում կան օրենքներ և օրենսդրական ակտեր, որոնք որոշ փոփոխություններից և լրացումներից հետո ՀԿներին հնարավորություն կընձեռեն գործելու առավել ամուր իրավական

հիմքերի վրա: Սահմանադրությամբ ստանալով իրենց շահերի, նպատակների համար ազատ միավորումներ ստեղծելու իրավունք՝ ՀՀ քաղաքացիները կարող են ուղղակի հորիզոնական կապերով իրականացնել իրենց քաղաքացիական և սահմանադրական իրավունքը: Սրան զուգահեռ՝ ՔՀ կայացման այսպիսի կարևորագույն ինստիտուտի ձևավորումը, ինչպիսին ՀԿ-ներն են, մեզ մոտ փոքր-ինչ դժվար է ընթանում: Դա ունի իր պատմական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական և քաղաքական պատճառները, որոնց մի մասը շատ հատկորոշ է, մյուսներին բնորոշ են անցումային երկրների զարգացման առանձնահատկությունները²⁶:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ այսօր ՀՀ-ում գործում է ուլորտը համակարգող օրենսդրական դաշտ: Սակայն իշխանության կողմից իրականացվող բարեփոխումները կամ օրենքի լրամշակումները հաճախ առաջացնում են ավելորդ բյուրոկրատական քաշքշուկներ, բարդություններ՝ գրանցման, գործունեության, ֆինանսական առումով: Այս միտումը մեզանում բնականաբար չի խթանում ՔՀ կառույցների և ինստիտուտների բնականոն զարգացումը: Իրենց հերթին, ՔՀ ինստիտուտները կառուցվածքային և գործառական առումով ձևավորված են, բայց և կայանալու համար կարիք ունեն ճկուն օրենսդրության: Ունենալով նյութական ու կադրային ոչ քիչ ռեսուրսներ՝ նրանք «ներքևից» եկող լուրջ հայտ են ներկայացնում հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ սուբյեկտ դառնալու համար: Սրան հասնելուն ՀԿ հատվածին մասամբ խոչընդոտում են նախ ուլորտը համակարգող օրենսդրության անկատարությունը, ՀԿ-ների ներքին ժողովրդավարության պակասը, ինստիտուցիոնալացման գործընթացը: ՔՀ կայացման և զարգացման համար ընտրված ռազմավարական ծրագրերի, մեթոդների, եղանակների, օրենքների, իրավական և նորմատիվ ակտերի վրա ազդող գլխավոր գործոնը երկրի իշխանությունն է: Նրանից են կախված 3-րդ հատվածի կառույցների հետ համագործակցության ցանկությունը, գործընկերային հարաբերությունների մեխանիզմների և հարթակների մշակումը: Վերջին իրադարձությունները (Վահե Ավետյանի հիշատակի համար մոմավառություն և ակցիա ընդդեմ ամենաթողության, Թեղուտի, Թռչկանի, Սևանի, Հրագդանի դեպքերում՝ բնապահպանական խնդիրների, ուղեվարձերի բարձրացման դեպքում՝ սոցիալական վատ պայմանների դեմ, պարտադիր կենսաթոշակային օրենքի դեպքում՝ պետական և մասնավոր հատվածի աշխատողների միջև հավասար աշխատանքային պայմանների ապահովման և երիտասարդության ցածր կենսամակարդակի դեմ, Սայաթ Նովա 5 հասցեում՝ քաղաքի և բնակիչների իրավունքների պաշտպանության, Գառ-

²⁶ Ст'у Федосов В. И. Неправительственные организации в становлении и развитии гражданского общества: международный опыт // "Сборник научных трудов". Воронеж, 2002 // <http://knigi.tor2.org/?b=4192314/>

նու տաճարի դեպքում՝ պատմական և ազգային մշակութային արժեքների պահպանության, Ջանգեզուրի պղնձամուլիբդենային գործարանի դեպքում՝ հանուն բնության և քաղաքացիների պաշտպանության և այլն) լավատես լինելու հիմքեր են տալիս նաև այս մակարդակում:

Բանալի բառեր – քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն, հասարակական համակարգի ինստիտուտներ, իշխանական կառույցներ, հասարակական կազմակերպություն, հասարակական-քաղաքական երկխոսություն, քաղաքական մշակույթ

ЛИЛИТ СТЕПАНИАН – Определение понятия «Общественная организация» и правовые основы ее становления. – В современном обществе потребности и интересы граждан не могут быть реализованы только государством или политическими партиями. В их осуществлении важную роль играют различные объединения граждан – общественные, благотворительные организации и т. д. Для политической модернизации необходимы горизонтально активные "волны", выражаемые институтами гражданского общества. Мир вступает в принципиально новый этап общественно-политических отношений, изменяется политическая повестка, национальная безопасность страны перестает быть исключительной заботой государства.

Ключевые слова: гражданское общество, правовое государство, институты социальной системы, структуры государственной системы, неправительственная организация, социально-политический диалог, политическая культура

LILIT STEPANYAN – Definition of “Non-Governmental Organization” and its Legal Bases of Formation. – In the political life of modern society needs and interests of citizens can not be realized only through the institutions of the state or political parties. In the process of implementation of these demands, the important role played citizens' associations - non-governmental organizations, associations, charitable organizations, etc. For the political modernization in the country, active horizontal ‘waves’ are very important. These "waves" for smaller and flexible resources implements civil society: the world enters a new stage of social and political relations, changing issues on the political agenda of the day and the national security of the country stopped be only care of the state.

Key words: Civil society, constitutional state, the institutions of the social system, the political structures of state, non-governmental organization, social-political dialogue, political culture

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Շիրակ Թորոսյան** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ, ՀՀ ԱԺ պատգամավոր
Ширак Торосян – кандидат исторических наук, ассистент кафедры международных отношений и дипломатии ЕГУ, депутат НС РА
Shirak Torosyan – PhD, Assistant Professor of the Chair of International Relations and Diplomacy, YSU, RA NA Deputy
2. **Դավիդ Սարկիսյան** – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ
Давид Саркисян – аспирант кафедры международных отношений и дипломатии ЕГУ
David Sarkisyan – PhD student of the Chair of International Relations and Diplomacy, YSU
Էլ. փոստ՝ sarkisyan_d@yahoo.com
3. **Խաչիկ Գալստյան** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ
Хачик Галстян – кандидат политических наук, доцент кафедры теории и истории политической науки ЕГУ
Khachik Galstyan – PhD, Associate Professor of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. փոստ՝ khgalstyan@yahoo.com
4. **Ալեն Դևոնդյան** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքական ինստիտուտներ ու գործընթացներ ամբիոնի դոցենտ
Ален Гевондян – кандидат политических наук, доцент кафедры политических институтов и процессов ЕГУ
Alen Ghevondyan – PhD, Associate Professor of the Chair of Political Institution and Processes, YSU
5. **Մագդա Արսենյան** - ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն ամբիոնի ասպիրանտ
Магда Арсенян – аспирантка кафедры политического управления и политического анализа Академии государственного управления РА
Magda Arsenyan – PhD student at Public Administration Academy of the Republic of Armenia, department of Political Governance and Political Analysis
Էլ. փոստ՝ magdaarsenyan@yahoo.com
6. **Ստեփանյան Լիլիթ** – ԵՊՀ քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի հայցորդ, կրթության ազգային ինստիտուտի Կոտայքի մասնաճյուղի գլխավոր մասնագետ
Лилит Степанян – соискательница кафедры политических институтов и процессов ЕГУ, ведущий специалист Котайкского филиала Национального института образования
Lilit Stepanyan – Dissertee of the Chair of Political Institutions, YSU, Ministry of Education, leading specialist of the National Institute of Education, Kotayk branch
Էլ. փոստ՝ lilitzara@yahoo.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS**

Շիրակ Թորոսյան – 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական դաշնագիրը և Բաթումի հանձնումը Վրաստանին **3**

Ширак Торосян – Русско-грузинский договор от 7 мая 1920 г. и передача Батума Грузии

Shirak Torosyan – The Russian-Georgian Treaty of May 7, 1920 and Transfer of Batumi to Georgia

Դավիդ Սարկիսյան – Ռուս-գերմանական հարաբերությունները ներկա փուլում **19**

Давид Саркисян – Российско-германские отношения на современном этапе

David Sarkisyan – Contemporary Period of Russian-German Relations

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE**

Խաչիկ Գալստյան – Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդ-դավարության անցման համատեքստում..... **32**

Хачик Галстян – Проблема политического диалога в контексте перехода к демократии

Khachik Galstyan – The Problem of the Political Dialogue in the Context of the Transition to Democracy

Ալեն Ղևոնդյան – Դաշինքների մեկնաբանման տեսահայեցակարգային մոտեցումները արևմտյան գիտական դիսկուրսում **49**

Ален Гевондян – Теоретико-концептуальные подходы к определению альянса в западном научном дискурсе

Alen Ghevondyan - Theoretical-Conceptual Approaches of the Concept of Alliances in Western Scientific Discourse

<i>Մագդա Արսենյան</i> – Խորհրդարանական մշակույթի կայացման քաղաքական նախադրյալների հարցի շուրջ.....	63
<i>Магда Арсенян</i> – К вопросу о становлении политических предпосылок парламентской культуры	
<i>Magda Arsenyan</i> – On the Issue of Formation of the Political Preconditions for the Parliamentary Culture	
<i>Լիլիթ Ստեփանյան</i> – «Հասարակական կազմակերպություն» հասկացության սահմանումն ու կայացման իրավական հիմքերը	71
<i>Лилит Степанян</i> – Определение понятия «Общественная организация» и правовые основы ее становления	
<i>Lilit Stepanyan</i> – Definition of “Non-Governmental Organization” and its Legal Bases of Formation	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	83
Сведения об авторах	
Information about the Authors	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Երավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 04. 2016:
Տպաքանակ՝ 100: Չափաքան՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: